

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՎԱՂԱՐՇՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՐԻՇԱՅԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
(1918-1920 թթ.)**

**ԺԲ.00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,  
իրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական  
աստիճանի հայցման համար ատենախոսության**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2013**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ВАГАРШЯН АРТУР ГРИШАЕВИЧ**

**СИСТЕМА ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ  
ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
(1918-1920 гг.)**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени  
доктора юридических наук по специальности  
12.00.01—«Теория и история государства и права;  
история правовых учений»**

**ЕРЕВАН-2013**

*Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում*

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյան

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ. Մտեփանյան

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013 թ. մարտի 7-ին, ժամը  
14<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001  
մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Մեղմագիրն առաքվել է 2013 թ. փետրվարի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ս.Գ. Մեղրյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Официальные оппоненты:

доктор юридических наук,

профессор Арутюнян Г.Г.

доктор юридических наук,

профессор Степанян В.В.

доктор юридических наук,

профессор Хачатрян А.А.

Ведущая организация: Институт философии, социологии и права НАН РА

Защита состоится 7-ого марта 2013 г. в 14<sup>00</sup> часов на заседании  
Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском  
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных  
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 5 февраля 2013 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент

С.Г. Мегрян

## **Ատենախոսության ընդհանուր բնութագիրը**

**Հետազոտության քենայի արդիականությունը:** 1918 թ. մայիսին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, իրեն հայտարարելով «հայկական գավառների գերագույն միակ իշխանություն», դրեց անկախ պետականության շինարարության հիմքը: Դարերով անկախությունը կորցրած հայ ժողովուրդը վերստեղծում էր իր պետականությունը:

Առաջին հանրապետության դերն ու նշանակությունը որոշակի գաղափարական ու քաղաքական պատճառներով անտեսվել էր խորհրդահայ պատմագիտության և իրավագիտության կողմից, որի հետևանքով հանրապետության պետական և իրավական ինստիտուտներն անբավարար են ուսումնասիրված, իսկ առանձին հիմնախնդիրներ ընդհանրապես չեն դարձել քննարկման առարկա: Մինչև հիմա չկա ոչ մի համակարգված իրավագիտական հետազոտություն՝ նվիրված Առաջին հանրապետության պետական կառուցակարգի և իրավունքի ամբողջական պատմությանը:

Պետաիրավական բարեփոխումների ներկա փուլի խնդիրներից է պետական և իրավական համակարգերի վերակառուցումը եվրոպական չափանիշներին համապատասխան: Սակայն այլ իրավական համակարգերից չմտածված, արհեստական փոխառումը կարող է հանգեցնել ոչ կենսունակ պետաիրավական ինստիտուտների առաջացմանը: Այս պայմաններում կարևորվում է Հայաստանի պետության և իրավունքի պատմության ոլորտի հետազոտությունների դերը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր պետականությունը կարիք ունի բանական-իրավական կազմակերպման և, որպես դրա արդյունք, պատմական արդարացման՝ պետական իշխանության իրավահեղինակության (լեգիտիմության) և կենսունակության: Այս տեսանկյունից կարևոր է Առաջին հանրապետության պետական-իրավական շինարարության փորձը, որովհետև այսօր էլ մենք կանգնած ենք նույն խնդիրների լուծման ճանապարհին: Արդի իրականությունը չի սահմանազատված անցյալից և ապագայից: Ներկան անցյալի՝ պատմության շարունակությունն է, բայց նաև ապագայի նախադրյալը: Պատմության մեջ այսօրը հենց դրանով է կարևոր: Այդպիսով՝ Առաջին հանրապետության պետական մարմինների, իրավական ինստիտուտների պատմության հետազոտումը, նրա պետական շինարարության փորձի ստեղծագործական, անկողմնակալ վերաիմաստավորումն ունի ոչ միայն գիտական, պատմաճանաչողական, այլև կիրառական ու կրթադաստիարակչական նշանակություն: Այդ հանրապետության պետական շինարարության փորձը կարելի է օգտագործել արդի պետության կատարելագործման տեսական հիմքերն ստեղծելիս, պետաիրավական հիմնախնդիրները մշակելիս:

**Թենայի գիտական հետազոտման աստիճանը:** Առաջին հանրապետության պետական կառուցակարգի, պետաիրավական ինստիտուտների պատմությունը մանրակրկիտ չեն ուսումնասիրված: Խորհրդահայ իրավագիտությունը գաղափարական պատճառներով շրջանցել է այդ հանրապետությունը կամ նենգափոխել իրական վիճակը: Երրորդ հանրապետության հռչակումից հետո լույս տեսան մի շարք հոդվածներ, աշխատություններ՝ նվիրված Առաջին հանրապետության ընդհանուր պատմությանը: Դրանց մի մասում առկա են զանազան իրավափաստագրական սխալներ, մոլորություններ, որոնք հանրապետության պետական կառուցակարգի, իրավական համակարգի չիմացության կամ էլ անմիջապես սկզբնաղբյուրներից չօգտվելու, երբեմն դրանք չհասկանալով օգտագործելու հետևանք են:

Ընդհանուր պատմական հետազոտություններից աչքի են ընկնում հատկապես Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետություն» (Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, Եր., Տիգրան Մեծ, 2005, 604 էջ) մենագրական հետազոտությունը, Ա. Հակոբյանի «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.)» (Երևան, 2005, 364 էջ) աշխատությունը: Վերջինում հետազոտվել են խորհրդարաններում կուսակցությունների պատմությունը և քաղաքական դիրքորոշումները: Առաջին հանրապետության ընդհանուր պատմության և արտաքին քաղաքական իրավիճակի

հիմնահարցերն արժաձվել են Մ. Կարապետյանի «Հայաստանը 1912-1920 թթ.» (Եր., «Զանգակ-97», 2003) բուհական ձեռնարկում (232-397 էջեր):

Հայաստանյան իրավագիտությունը միայն անցյալ հարյուրամյակի վերջերին սկսեց անդրադարձներ կատարել Առաջին հանրապետության պետաիրավական համակարգին: Հետազոտությունները մինչ այժմ տարվել են երկու ուղղությամբ՝ ճյուղային-իրավական և առանձին պետական մարմինների վերաբերյալ:

Ճյուղային իրավական հետազոտություններից առաջինը Գ. Ղազինյանի «Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում (Եր., Երևանի համալսարանի հրատ., 2001, 432 էջ) աշխատանքն է, որում վեր են հանված Առաջին հանրապետության քրեական դատավարության նորմատիվային, կազմակերպական և գործառնության հիմնահարցերը (42-55 էջեր): Զաղաքացիական դատավարությունը ուսումնասիրել է Ռ. Պետրոսյանը «Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության համեմատական վերլուծություն) աշխատանքում (Եր., Երևանի համալս. հրատ., 2001, 109-131 էջեր):

Առաջին հանրապետությունում գործած ամուսնարևտանեկան օրենսդրությունը հետազոտել է Գ. Ղարախանյանը (Հայաստանի ընտանեկան իրավունքը 20-րդ դարի սկզբում և Առաջին հանրապետությունում: Եր., ԵՊՀ հրատ., 2003, 62 էջ):

Առաջին հանրապետությունում ազատագրվում պատժատեսակի սահմանման և կիրառման, ինչպես նաև բանտային համակարգի կազմակերպական հիմնահարցերը հետազոտել է Հ. Խաչիկյանն իր «Էնծի ծեյ ի ձեի աի աի եյ է ի ձաաի աի աի ձաաօեծի աաի եյ ի աեա-ճաի եյ ա աեաա եեթաի եյ նաի աի աւ ա Ածի աի եե» (Ած., ըճա. Ածաաաի նեի աի օի եաաձեծաձա, 2005, 168 ձձ.) մենագրական հետազոտությունում (71-83 էջեր):

Պետական առանձին մարմինների համակարգի պատմության հարցերը հետազոտել են Ա. Հովսեփյանը, Հ. Հակոբյանը<sup>1</sup>: Ա. Հովսեփյանն ուսումնասիրել է դատախազական հսկողության համակարգի առանձնահատկությունները<sup>2</sup>: Արդարադատության նախարարության կազմակերպական կառուցվածքի և գործունեության հիմնահարցերը հետազոտել է Ա. Սարգսյան-Սարդարյանը:

Ինչպես նկատում ենք, կատարված հետազոտություններով հանդերձ, Առաջին հանրապետության պետության և իրավունքի պատմությունը, նրա իշխանության ճյուղերի կազմակերպման իրավական հիմունքների և փաստական գործունեության համակարգված պատմաիրավական հետազոտությունը և վերլուծությունը մնում են բաց:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության հետազոտության օբյեկտ են համարվում Առաջին հանրապետության պետական և իրավական համակարգերը: Պետական իշխանության համակարգը հանրապետությունում կառուցված էր իշխանությունների բաժանման սկզբունքով: Այդ հանգամանքն էլ պայմանավորել է հետազոտության առարկան, որն ընդգրկում է պետական շինարարությունը, հանրապետության օրենսդիր, գործադիր, դատական մարմինների համակարգի ստեղծման, կազմակերպության, գործառնության սկզբունքների, ինչպես նաև փաստական գործունեության պատմությունը: Աշխատանքը կատարված է պատմաիրավական մոտեցման օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել լավագույնս հասկանալու հանրապետության պետական իշխանության համակարգի կառուցվածքը և գործառնավորումը, հետևելու պետական համակարգի հիմնադրման գործընթացներին, դրանում կատարված փոփոխություններին և վեր հանելու դրա ամենաէական առանձնահատկությունները: Հետազոտության առարկայի շրջանակում ներառվել են նաև պետական համակար-

<sup>1</sup> Հ. Հակոբյանն իր «Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում» (Եր., «Տիգրան Մեծ», 2007, 708 էջ) աշխատության 145-154 էջերում անդրադարձել է խորհրդարանականության հիմնահարցերին Առաջին հանրապետությունում:

<sup>2</sup> Տե՛ս Հովսեփյան Ա., Դատախազական հսկողությունը Հայաստանում, Եր., 2000, «Տիգրան Մեծ», 28-31 էջեր:

գի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական գործոններն ու պայմանները: Պետական իշխանության կառուցման ու գործունեության նկատմամբ լայն սոցիալական հայացքը հնարավորություն է տվել խուսափելու զուտ ձևական-իրավական վերլուծությունից, տարբերելու անհաջողությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները և, իհարկե, վեր հանելու հանրապետության պետական համակարգի պատմությունը՝ իր բոլոր պայմանների ու գործոնների հանրագումարով: Նման մոտեցման կենսագործման համար միջոց է ծառայել այն, որ ի մի են հավաքվել ոչ միայն զուտ իրավական օրենսդրական աղբյուրները, այլ նաև պետական պաշտոնական գրագրության նյութերը, օրենսդիր և գործադիր մարմինների նիստերի արձանագրությունները, ժամանակի «վիճակագրությունը», մամուլը, հանրապետության գործիչների հուշերը:

Հետազոտության նման օբյեկտը և առարկան պայմանավորել են սույն **ուսումնասիրության նպատակը և խնդիրները**: Ատենախոսական աշխատանքի նպատակն է բազմակողմանի-համալիր հետազոտման ենթարկել Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի ստեղծման, կազմակերպության և իրավական գործունեության հիմնահարցերը, դրանց ամբողջական նկարագիրը և վերլուծությունը օգտագործել տեսական նոր օրինաչափությունների առաջադրման համար: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

1) հանրապետության կառավարման համակարգը մինչև առաջին խորհրդարանի հիմնադրումը, Հայաստանի խորհրդի հիմնադրումը, ձևավորման կարգը, պատգամավորների կազմը, ներքին կառուցվածքը, լիազորությունների դադարումը,

2) 1919 թ. խորհրդարանական ընտրությունները, Հայաստանի պառլամենտի պատգամավորների լիազորությունների ստուգման կարգը, սոցիալական կազմը, պառլամենտի ներքին կառուցվածքը, լիազորությունների դադարման հիմնախնդիրը,

3) խորհրդարանների իրավասության բնույթը, դրանց օրենսդրական իրավասությունը, օրինաստեղծագործության կառուցակարգը, խորհրդարանների իրավասության հիմնական ոլորտները և գործունեությունն այդ ոլորտություններով,

4) խորհրդարանի գործառնության կառուցակարգը և խորհրդարանական ընթացակարգերը, պատգամավորների իրավական կարգավիճակը,

5) հանրապետության կառավարության ձևավորման, կազմի, կառուցվածքի, իրավասության հիմնահարցերը, կառավարության գործունեության կարգը և ակտերը,

6) պետական ապարատի գործադիր ենթահամակարգի հիմնադրումը և կառավարման գործառնությունները, կառավարությանը կից գործող մարմինների և նախարարությունների համակարգը, կարգավիճակը,

7) կառավարության իրավասությունը քաղաքական ղեկավարման և ընդհանուր կառավարման ոլորտում, կառավարության օրինաստեղծ գործունեությունը,

9) կառավարության իրավասությունը և գործունեությունը երկրի պաշտպանության, արտաքին քաղաքականության ոլորտներում,

10) պետական անվտանգության սպառնալիքները և արտակարգ միջոցառումների կիրառման իրավական կարգավորման հիմնահարցերը, հանրապետության գոյության ընթացքում կիրառված արտակարգ միջոցառումները,

11) դատարանի և արդարադատության դերը նորաստեղծ պետության կայացման գործում, դատարանակազմության հիմունքների մշակումը և կենսագործումը,

12) համաքաղաքացիական դատական համակարգի դատարանակազմական բնութագիրը, հաշտարար և ընդհանուր իրավասության դատարանների կազմակերպման առանձնահատկությունները, դրանց գործունեությունը, երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրումը ու ծավալած գործունեությունը,

13) նախնական քննության, դատախազական հսկողության մարմինների՝ որպես ամբողջական համակարգի մի մասի գործունեության արդյունավետությունը,

14) արտակարգ դատարանների ստեղծման դրդապատճառները, դրանց օրենսդրական-կազմակերպական կողմերը, իրավասությունը, գործունեությունը,

15) արդարադատության ոլորտում իրականացվող իրավական քաղաքականության ժողովրդավարական ուղղվածության փոփոխումը, արդարադատության հիմնարար, ժողովրդավարական սկզբունքների խախտումները, վերանայումը:

**Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը:** Հետազոտության հիմքում ընկած են հիմնականում ՀՀ ազգային արխիվի՝ Առաջին հանրապետությանը վերաբերող արխիվային ֆոնդերում եղած օրենսդրական-նորմատիվ աղբյուրները, պաշտոնական գործավարության և վիճակագրական նյութերը, ժամանակի մամուլը: Որպես աղբյուրներ օգտագործվել են նաև ժամանակի գործիչների աշխատությունները և հիշողությունները՝ նվիրված Առաջին հանրապետության քաղաքական պատմությանը: Արխիվներում կատարված երկարատև ու մանրագին փնտրությունների ու հետազոտությունների շնորհիվ հաջողվել է ի մի բերել Առաջին հանրապետության օրենսդիր մարմինների ընդունած և հետազոտման առարկային վերաբերող համարյա բոլոր օրենսդրական և այլ փաստաթղթերը, որոնք մեծամասամբ առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Արխիվային տեղեկատվության ընտրությունը կատարվել է դրա ապացուցողականության և համոզականության չափանիշներով<sup>3</sup>:

Արխիվային ֆոնդերից աչքի են ընկնում ՀՀ ազգային արխիվի՝ Առաջին հանրապետությանը վերաբերող՝ ՀՀ պառլամենտ (ֆ. 198), ՀՀ Սինիստրների խորհուրդ (ֆ. 199), ՀՀ արտաքին գործերի մինիստրություն (ֆ. 200), ՀՀ ներքին գործերի նախարարություն (ֆ. 201), ՀՀ արդարադատության նախարարություն (ֆ. 206), Հանրային կրթության և արվեստի մինիստրություն (ֆ. 207), Երևանի դատական պալատ (ֆ. 210), Երևանի նահանգական դատարան (ֆ. 213), Երևանի Հայոց ազգային խորհուրդ (ֆ. 289), ՀՀ զինվորական նախարարություն (1918-1920 թթ.) (ֆ. 290) և այլ ֆոնդերը, որոնցում սփռված են պետական իշխանության երեք ճյուղերին վերաբերող նորմատիվ նյութերը, պետական մարմինների, պաշտոնատար անձանց պաշտոնական գործավարության փաստաթղթերը:

Թեմային վերաբերող օրենսդրական նյութերի ստվար մասը կենտրոնացված է Ռուսական կայսրության օրենքների հավաքածուներում: Մյուս մասը Հայաստանի խորհրդի, Հայաստանի պառլամենտի, Նախարարների խորհրդի (այսուհետև՝ ՆԽ) օրենքներն ու որոշումներն են՝ սփռված զանազան արխիվային ֆոնդերում, մամուլում և այլուր: Ցավոք, օրենսդիր մարմինների և ՆԽ-ի նիստերի լրիվ արձանագրությունները չեն պահպանվել: Այդ մասին կցկտուր և համառոտ տվյալներ կան միայն ժամանակի մամուլում:

Հետազոտության առանձնահատկությունն այն է, որ այն կառուցված է զուտ Առաջին հանրապետության նորմատիվ-օրենսդրական և փաստագրական նյութերի վրա, այլ ոչ թե Կայսերական Ռուսաստանի՝ Հայաստանում գործադրված, իսկ երբեմն էլ ընդհանրապես իրավական փոփոխությունների ու լրացումների չենթարկված իրավական ինստիտուտների ձևական-իրավաբանական վերլուծության վրա: Հին՝ կայսերական օրենսդրությանն անդրադարձներ արվել են այնքանով, որքանով որ դա անհրաժեշտ է հանրապետական օրենսդրությունը ճիշտ հասկանալու համար: Արխիվներում երկարատև և ուշիմ հետազոտությունների շնորհիվ հաջողվել է հավաքագրել թեմային վերաբերող համարյա բոլոր օրենսդրական նորմատիվ փաստաթղթերը: Հին օրենսդրության, նոր օրենքների բովանդակության համեմատական, ժամանակագրական վերլուծությունը հարուստ նյութ և հնարավորություններ են տվել կառուցելու Առաջին հանրապետության պետական շինարարության, պետական իշխանության երեք ճյուղերի ամբողջական պատկերը, հետևելու հանրապետության պետական մարմինների ստեղծման, գործունեության ոլորտում տարվող իրավական քաղաքականությանը, դրա ընթացքին ու տրամաբանությանը, վեր հանելու հաջողությունները, թերություններն ու սխալները:

<sup>3</sup> Հեղինակն իր վրա է վերցնում օգտագործված փաստերի, վիճակագրության, հղումների հավաստիությունը:

**Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերը և սկզբունքները:**

Հետազոտությունում օգտագործվել են վիճակագրական, դասակարգման, պարբերացման, ձևական իրավաբանական ու համեմատական-իրավական վերլուծության, համակարգային վերլուծության և այլ մեթոդները: Հետազոտությունը կատարված է պատմաիրավական, տրամաբանական, սոցիոլոգիական սկզբունքների փոխլրացնող կիրառմամբ: Նյութի շարադրման պատմաիրավական բնութագիրը զուգորդված է պետաիրավական երևույթների ուսումնասիրության ինստիտուցիոնալ մեթոդով՝ լրացված սոցիոլոգիական մոտեցմամբ: Պետաիրավական ամեն մի ինստիտուտի պատմությունը շարադրելիս լուսաբանված են ոչ միայն տվյալ ինստիտուտի հիմնադրման օրենքները, այլև հասարակական՝ ընդհանուր և հատուկ գործոնները, զարգացման միտումները: Հետազոտված նյութի շարադրանքը իրականացված է պատմական պետականագիտության և իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մոտեցումների հիման վրա, այն է՝ պատմականության, օբյեկտիվության, համալիրության, գնահատման բազմակարծության, հրաժարում գաղափարականացված, կուսակցականացված հայեցակարգերից, որոնք հատուկ էին հայրենական իրավագիտությանը մարքսիստական գաղափարների գերիշխանության տարիներին և իրենց զգացնել են տալիս նաև այսօր: Ուսումնասիրությունը կատարելիս ուղենիշ են եղել գիտական օբյեկտիվությունը և դրա չափանիշը՝ մնալ հավատարիմ պատմաիրավական իրադարձություններին և փաստերին: Մասնատման և նկարագրման, համեմատության մեթոդների օգնությամբ տրվել է պետական համակարգի բնութագրությունը, այնուհետև արվել են անկողմնակալ եզրակացություններ՝ առանց միտումնավոր խեղաթյուրումների: Անցյալի պետաիրավական շինարարության պատմությունը լուսաբանվել է՝ խուսափելով ինչպես անհիմն և զուտ վատաբանությունից, այնպես էլ հիացական-դրական գնահատականներից:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Առաջին անգամ ամբողջական, համակարգված հետազոտության են ենթարկված Առաջին հանրապետության օրենսդիր, գործադիր, դատական համակարգերը, դրանց կազմակերպական և գործառնութային առանձնահատկությունները, այդ համակարգերում կատարված հետագա փոփոխությունները, իրավական գործունեությունը, գնահատվել է պետության կայացման գործընթացում պետական իշխանության ամեն մի ենթահամակարգի գործունեության արդյունավետությունը:

Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի ստեղծման և գործողության իրավական կառուցակարգի պատմության համակարգված նկարագիրը հիմք է այդ հանրապետության ընդհանուր պատմության շատ հիմնահարցերի վերաիմաստավորման, դրան վերաբերող պատմագրության մեջ տեղ գտած մոտեցումների ճշգրտման, վիճելի հիմնահարցերի նկատմամբ բարոյական գնահատականներից ձերբազատվելու և դրանք պետաիրավական (իրավական-օրինական և ոչ իրավական-ապօրինի) տեսանկյունից դիտարկելու համար:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:** Հետազոտության արդյունքում մշակվել և ներկայացվում են գիտական նորույթ պարունակող դրույթներ երկու ուղղությամբ:

I. **Պատմական փորձի հիման վրա առաջ քաշված հայեցակարգային և գործնական նշանակություն ունեցող տեսական հիմնադրույթներ, որոնք կարող են օգտագործվել արդի պետաիրավական համակարգի կատարելագործման և բարեփոխման համար՝**

1. Առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության փորձը, արդի հայկական երկու պետությունների աշխարհաքաղաքական կացությունը հիմք են տալիս պատմության դասերի տեսական իմաստավորման միջոցով առաջ քաշել պետական ապարատի կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ պաշտպանունակությունը: Պաշտպանունակությունը պետական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է, այն է՝ ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը՝ աղետալի, արտակարգ, պատերազմական պայ-

մաններում գործելու ունակությունը, դրվի սովորական իրադրությունների համար ստեղծված պետական մարմինների, ինստիտուտների էության մեջ:

2. Պաշտպանունակության սկզբունքի դիրքերից անհրաժեշտ է անցկացնել ողջ արդի օրենսդրության իրավական մոնիթորինգ, որի իրականացման համար առաջարկվում են հետևյալ չափորոշիչները. **ա)** պետական իշխանության և տեղական կառավարման համակարգն արդյունավետ և հստակ է այնքան, որ ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական, չի առաջացնում որևէ կազմակերպական-կառուցվածքային վակում. **բ)** հանրային իշխանական բոլոր կառույցները հստակ տիրապետում են իրենց իրավասությանը և ընդունակ են իրացնելու այն ցանկացած արտակարգ կամ պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց հանրային-իշխանական առաքելությունից. **գ)** հանրային իշխանական համակարգն իր ծառայական և աշխատանքային անձնակազմով տոգորված է կարգապահության, հայրենիքի պաշտպանության ոգով, արտակարգ պայմաններում ընդունակ է կարգապահության ու ինքնակազմակերպման, պատրաստակամ է անձնագոհության:

3. Դատական շինարարության և դատական համակարգի գործունեության տեսական իմաստավորման հիման վրա մշակվել է դատական իշխանության կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ գործառույթային ինքնաբավությունը. դատական իշխանությունն իր ներհամակարգային բոլոր խնդիրների, գործառույթների, լիազորությունների իրականացման հարցում պետք է լինի ինքնաբավ, արտահամակարգային պետական կառույցներից չկախված: Բոլոր ներհամակարգային գործառույթներն ու լիազորությունները, ներառյալ արդարադատության իրականացման կազմակերպական-ապահովող, պետք է կատարվեն ներհամակարգային օժանդակող կառավարչական կառույցների, ռեսուրսների միջոցով:

4. Ազգային անվտանգության և պաշտպանության համակարգում, իրավաօրինականության կայացման գործում կարևոր բաղադրիչ են բնակչության հոգևոր-բարոյական-իրավական որակները: Հարատևման հավերժ պայքարում կիրառվել և կիրառվում է երկու հիմնական ռազմավարություն՝ զանգվածայնությունը (քանակը) կամ «ոգին»: Առանձնահատուկ ոգին գումարած կազմակերպական կառուցվածքին կտա այն արդյունքը, որը մենք ակնկալում ենք պատմությունից: Արդի շրջանի բոլոր տեսակի բարեփոխումները, հասարակական դաստիարակության ու կրթության համակարգն ուղղակիորեն պետք է խարսխվեն այս արքսիոմայի վրա և ազգային հիմքով հայրենասիրական, բարոյահոգեբանական իրավական դաստիարակությունն ու կրթությունը դարձնեն իրենց նպատակներից մեկը: Արդի կրթական համակարգը այս տեսանկյունից կարիք ունի մոնիթորինգի, իսկ այնուհետև բարեփոխման: Արդյունքում կրթական համակարգում հայրենասիրական, իրավական ու բարոյական ուսուցումը պետք է դարձնել ուսումնական առանձին բնագավառ, կրթության բովանդակային բաղադրիչ, սովորողների պատրաստվածությանը ներկայացվող առանձին ընդհանրական պահանջ:

5. Պատմական փորձից քաղված դասը հիմք է տալիս առաջ քաշելու և ձևակերպելու հետևյալ օրինաչափությունը. քաղաքականության սահմանադրականությունը, իրավաօրինականությունը և խորհրդարանական իրական բազմակարծությունը ռազմավարական ճիշտ ընտրություն կատարելու, ազգային պետականության կայացման և հարատևության կարևորագույն երաշխիքներ են:

6. Պետականակերտության օրինաչափություններից է այն, որ հասարակական գործունեների բացասական ազդեցության պայմաններում կարևորվում է հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվային երաշխիքը, որը ոչ թե երկրորդական, այլ ակտիվ, ստեղծագործաբար վերափոխող գործոն է: Այն ունակ է ազդելու արտահրավերական հասարակական պայմանների դրական փոփոխման վրա: Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր պատմական պատասխանատվության մեծ մասը կրում են քաղաքական ղեկավարությունը, օրենսդիր մարմինները: Քաղաքական պատվերը պետք է պայմանա-



վորի իրավաստեղծ աշխատանքի ռազմավարությունը և մարտավարությունը: Հետևաբար, օրինաչափորեն պետաիրավական շինարարության ընթացքում կարևորվում է «էլեգանտ իրավագիտության», «բարու և արդարության» արվեստի իրական մասնակցությունն իրավաստեղծ աշխատանքին՝ նրա բոլոր փուլերում: Առաջին հանրապետությունը զրկված էր նման հնարավորությունից: Արդի Հայաստանը չպետք է անտեսի այդ օրինաչափությունը:

7. Հասարակական միջավայրը կարևոր նշանակություն ունի «փղեալական» պետաիրավական նորմատիվային համակարգի համար: Փոխառված իրավական մոդելը կարող է լինել ժողովրդավարական, սակայն չկատարել իր առջև դրված խնդիրները: Պատճառը կոլիզիան է սովորական, կայուն հասարակական պայմանների համար մոդելավորված համակարգի և օբյեկտիվորեն առկա արտակարգ, բացասական հասարակական պայմանների միջև, որոնք ի վերջո չեզոքացնում են ներդրված իրավական մոդելի գործառնութավորումը, եթե այն չի տեղայնացվում ու հարմարեցվում շրջակա հասարակական միջավայրի պայմաններին:

**II. Հայաստանի առաջին հանրապետության պետական և իրավական համակարգի ծագման, կայացման պատմական գործընթացները և օրինաչափությունները բացահայտող, լուսաբանող հիմնադրույթներ՝**

1. Առաջին հանրապետության հռչակման և միջազգային ճանաչման ընթացքը, անկախության անսպասելիության հանգամանքը պայմանավորեցին նաև նորաստեղծ պետության կառավարման համակարգի յուրահատկությունները: Օրենսդիր իշխանության համակարգի կայացման և զարգացման տեսանկյունից հանրապետության պետական կառավարման համակարգն անցել է կազմակերպական երեք փուլ՝ ա) հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, բ) հանրապետության ազգաբնակչության և հիմնական քաղաքական կուսակցությունների նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, գ) քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով խորհրդարանական կառավարում:

2. Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակման գործընթացում ՀՅԳ-ի և կառավարության գործունեության անդրկուլիսային գործելակերպը կազմակերպված քաղաքական դավադրություն էր՝ ընդդեմ հանրապետության, հանուն դաշնակցական կուսակցության մենատիրության հաստատման: Եթե նշված գործընթացները տեղի ունենային իրավական օրինականության հունով, ապա դրանք չէին հանգեցնի խորհրդարանում քաղաքական բազմազանության վերացմանը, ազգային համերաշխության խարխլմանը, մնացած քաղաքական ծանրակշիռ ուժերի օտարմանը: Հետևանքներ, որոնք որպես ներքին գործոններ նպաստեցին հանրապետության անկմանը:

3. Հայաստանի խորհուրդը հիմնադրվել էր որպես անժամկետ գործողության խորհրդարան: Խորհրդի լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Չունենալով մեծամասնություն խորհրդում՝ դրան հասնելը դաշնակցականների համար շատ բարդ խնդիր էր: Այդ կացությունից դուրս գալու և քաղաքական-իրավական ճգնաժամը հաղթահարելու ելքը դաշնակցությունը տեսավ խորհրդարանի աշխատանքների ձախողման մեջ: Նպատակը խորհրդարանն անդամալույծ մարմին դարձնելն էր և դրանով ընդդիմությանը փաստի առաջ կանգնեցնելը, ինչը կստիպեր վերջինիս համաձայնելու ինքնարձակմանը և կազմակերպելու խորհրդարանական ընտրություններ: Հրահրելով կոչեր՝ արձակել Հայաստանի խորհուրդը՝ նրանք քննադատության թիրախ էին դարձրել հատկապես խորհրդարանում կուսակցությունների և ազգությունների խտրական ներկայացուցչությունը: Պահն իսկապես պատմական էր ու պատասխանատու: Սակայն Հայաստանի քաղաքական ուժերը, հոսանքները, գործիչները չկարողացան թոթափել խմբակային, անհատական շահերն ու հակամարտությունները, չեզոքացնել պետությանն սպառնացող վտանգներն ու դժվարությունները, համախմբել ժողովր-

դին, կայացնել նորաստեղծ պետությունը, գտնել այն ոսկե միջինը, որը կդառնար ՀՀ - հաղթական կայացման անկյունաքարը:

4. Հայաստանի պառլամենտի ընտրությունների կազմակերպման ընթացքում շարունակվեցին օրենսդիր կառավարության և կուսակցությունների քաղաքական խարդավանքները: Ոչ կառուցողական, նեղ կուսակցական դիրքորոշումների, քաղաքական անհանդուրժողականության հետևանքով ՀԺԿ-ն դուրս եկավ կառավարական կոալիցիայից: Այնուհետև միայն դաշնակցականներով համալրված կառավարությունը, օգտվելով ՀԺԿ-ի հայաստանյան կոմիտեի այսրոպեական որոշումից, առանց օրինական հիմքերի քվեարկությունից հանեց դրա ընտրական ցուցակը: Արդյունքում ՀՅԳ-ն ստացավ պատգամավորական տեղերի բացարձակ մեծամասնությունը, և Հայաստանում հաստատվեց դաշնակցական մենիշխանություն: Երկրորդ խորհրդարանը ևս հիմնադրվեց որպես անժամկետ լիազորություններով մարմին. դրա դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Ընտրությունների համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից՝ ընտրությունների պարտադիրության և պարբերականության խախտմամբ խեղաթյուրվում էր ներկայացուցչական կառավարման կարևորագույն գիծը՝ ժամկետայնությունը: Սա ճակատագրի հեզմանք չէր, այլ ՀՅԳ-ի կողմից մտածված ծրագիր: Խորհրդարանի ընտրությունից հետո դաշնակցական քաղաքական միտքը սկսեց կռվաններ որոնել դրա իշխանությունը «հավերժացնելու» համար:

5. Առաջին հանրապետության հիմնադրման եղանակը և պետական իշխանության ստեղծման առանձնահատկությունները, ներառյալ պետական շինարարության փորձի և պատշաճ սահմանադրական կարգավորման բացակայությունը, կառավարման դուալիստական միապետական համակարգից անցումը հանրապետականի, պայմանավորեցին այն հանգամանքը, որ առաջին խորհրդարանը հիմնադրվեց որպես անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան: Այդ կարգավիճակը փոխանցվեց Հայաստանի պառլամենտին: «Անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան» հասկացությունը չէր ենթադրում բացարձակություն, որովհետև պետական իշխանության համակարգը կառուցված էր իշխանությունների բաժանման սկզբունքով, ինչն արդեն իսկ ենթադրում էր խորհրդարանի իրավասության սահմանափակում: Սակայն խորհրդարաններն իրենց օրենսդրական իրավասության բնույթով բացարձակ անսահմանափակ էին, քանզի դրանք ունեին իրավազորություն ցանկացած հարցով ընդունելու, փոփոխելու և վերացնելու օրենքները, և չկար պետական որևէ կառույց, որը կարող էր կասկածի ենթարկել նրանց ակտերի իրավականությունը:

6. Առաջին հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում էր իշխանությունների եռաթև բաժանման հիման վրա: Բաժանումը դրսևորվում էր երեք առումներով՝ գործառութային, կառուցվածքային-կազմակերպական, անձնական: Սակայն իշխանությունների բաժանման համակարգը աղճատված էր, որովհետև այն չէր ապահովում իշխանության ճյուղերի հավասարակշռումը: Որպես կանոն՝ իշխանության երեք թևերի մարմինները պետք է լինեն ինքնուրույն իրենց իրավասության շրջանակներում, չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը: Սակայն հանրապետության օրենսդիր մարմինների բացարձակ օրենսդրական իրավասությունը խախտում էր իշխանության մնացած թևերի՝ իրենց իրավասության շրջանակներում ինքնուրույնությունը, հիմքեր էր ստեղծում օրենսդրի կողմից այլ մարմինների իրավասությանը կամայական օրենսդրական միջամտության համար: Մյուս կողմից՝ իշխանությունների փոխհարաբերություններում «հակակշիռների և զսպիչների» թույլ համակարգը ի չիք էր դարձնում իշխանությունների բաժանման իրական գործողությունը: Պատվիրակված օրենսդրման համակարգի կիրառման պայմաններում դա հանգեցնում էր գործադիր իշխանության գերակայության: Հանրապետության խորհրդարանականության ողջ պատմությունը վկայում է, որ կառավարող կուսակցությունն ամեն անգամ պայքարի մեջ էր մտնում հենց խորհրդարանի հետ: Եթե դա հասկանալի էր Հայաստանի խորհրդի պա-

րագայում, ապա անհասկանալի է Հայաստանի պառլամենտի դեպքում, երբ նրան ևս գրկեցին «օրենսդիր» իրավունքներից: Անշուշտ, իրավիճակն արտակարգ էր, ճգնաժամային, լարված, օպերատիվ ու արագ լուծումներ պահանջող: Բայց դա չի նշանակում, որ ասպարեզից պետք էր դուրս թողնել խորհրդարանը: Կարելի էր կատարել իրականության պահանջներին համապատասխանող իրավագործությունների բաժանում՝ կառավարությանը վերապահելով միայն որոշակի ոլորտներում պատվիրակված օրենսդրման իրավունք: Այս դեպքում պետական նավը կլիներ հավասարակշռված, իսկ ինքը՝ կառավարությունը՝ հակակշռված: Պետական շինարարության օբյեկտիվ, իրավական օրինաչափությունների պահպանումը և գործադիրին հակակշռող խորհրդարանի առկայությունը միգուցե հանրապետությունը չհասցնեին կորստալից տապալման, հատկապես որ կային քաղաքական գործիչներ, ովքեր կանխագուշակում էին ապագա ձախողումը:

7. Խորհրդարանական վերահսկողությունը և դրա ձևերը պայմանավորված էին պետական կառավարման ձևով և ռեժիմով: Հանրապետությունում գործել են համաշխարհային խորհրդարանական պրակտիկային հայտնի խորհրդարանական վերահսկողության համարյա բոլոր ձևերը, բացառությամբ կառավարությանն ուղղակիորեն անվստահություն հայտնելու ընթացակարգի: Հայաստանի խորհրդում ընդդիմությունն ամեն մի փոքր խախտում կամ հիմնախնդիր դարձնում էր խորհրդարանական վերահսկողության առարկա, իսկ նիստերի օրակարգերում խորհրդարանական վերահսկողության առատությունը զգաստացնում ու զգոնացնում էր կառավարությանը: Վերջինը, խորհրդարանում չունենալով կայուն մեծամասնություն, ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերվում դրանց, իսկ դաշնակցական խմբակցությունը ջանադիր հետևում էր, որ ընդունված բանաձևերը չլինեն ի վնաս գործադիրի: Իսկ Հայաստանի պառլամենտում խորհրդարանական վերահսկողության ձևերը կորցրել էին իրական ազդեցությունը, որովհետև դաշնակցությունն ուներ բացարձակ մեծամասնություն: Ըդդիմությունը նույնիսկ այդ անելանելի պայմաններում խորհրդարանական ինստիտուտներն օգտագործում էր քարոզչության կամ քաղաքական խնդիրներ լուծելու համար: Այդպիսով՝ խորհրդարանական վերահսկողության ձևերի արդյունավետությունը կախված էր խորհրդարանական ուժերի հարաբերակցությունից:

8. Խորհրդարանագիտության մեջ հայտնի դատական իշխանության և արդարադատության ոլորտին առնչվող խորհրդարանական բոլոր հնարավոր լիազորություններից խորհրդարանները համանմանության կարգով իրենց վերապահել էին համաներում հայտարարելու իրավունքը, ինչպես նաև ոլորտի մարմինների պաշտոնյաների նշանակումը: Խորհրդարանների գործունեության ընթացքում ստեղծվել են քննիչ հանձնաժողովներ: Չի կիրառվել միայն իմպիչմենտի ինստիտուտը: Անցումային իրավական համակարգում սահմանադրական կարգավորման բացերի պայմաններում խորհրդարանն իրեն վերապահեց նաև ներման իրավունքը, ինչը օրենսդիր մարմնին վերածեց յուրահատուկ քվազի դատարանի: Նման եզրակացության հիմքը ներման դիմումների բավականին մեծ քանակն է, իսկ որոշ գործերով նաև դատավճիռների բեկանման որոշումներ կայացնելու փաստը: Լիազորությունների այս ոլորտը ևս հաստատում է, որ հանրապետության խորհրդարանը պետական իշխանության համակարգում իր դերով բացարձակապես գերիշխող, իսկ իր իրավասության ծավալով բացարձակապես անորոշ իրավասությամբ խորհրդարան էր:

9. Պատգամավորների կարգավիճակը կառուցված էր իրավահավասարության սկզբունքով և ենթադրում էր խորհրդարանականի գրեթե բոլոր հանրաճանաչ իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Հայաստանի խորհուրդը ստեղծելիս հիմնադիրներն անտեսեցին պաշտոնների համատեղման անթույլատրելիությունը. օրենսդրությունը չէր սահմանում պաշտոններ ունենալու որևէ արգելք: Այս սխալը հետագայում շտկվեց՝ ընկնելով, սակայն, մյուս ծայրահեղության մեջ. պաշտոնների համատեղելիությունը լրիվ արգելվեց: Այնուհետև օրենքը քայլ առ քայլ ընդլայնեց պատգամավորի

պետահասարակական այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

10. Կառավարության ձևավորման եղանակը պայմանավորված էր պետական կառավարման ձևով: Կառավարությունն իր ձևով բացարձակ խորհրդարանական էր. այն կազմավորվում էր խորհրդարանի կողմից և լրիվ պատասխանատու էր միայն նրա առջև: Կառավարությունը կազմված էր վարչապետից (նախարար-նախագահից), ինչպես նաև պորտֆելով նախարարներից: Կառավարության ձևավորման կարգը, կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների իրավական կարգավորման բացը Հայաստանի խորհրդում հանգեցնում էր պատեհապաշտ, երբեմն նաև արտառոց անհատական իրավական կարգավորման:

11. Հանրապետության կայացմանը զուգընթաց գործադիր իշխանության մարմինների համակարգը ծավալվում և ճյուղավորվում էր: Դա օրինաչափ էր, քանզի պետական կառավարման խնդիրներն օրավուր առաջ էին բերում նոր գործառույթների իրականացման անհրաժեշտությունը, իսկ սա էլ իր հերթին պահանջում էր կատարող սուբյեկտների հիմնադրում: Պետական կառուցակարգի գործադիր համակարգի էքստենսիվ զարգացումը մի կողմից օբյեկտիվ օրինաչափություն էր, մյուս կողմից հանգեցրեց ապարատի և ծախսերի ուճեցման: Պետության խնդիրները և գործառույթներն ունեն բազմագործոն պայմանավորվածություն: Դրանցից մեկն էլ պետության՝ տվյալ պահին ունեցած հնարավորություններն են, ինչպես նաև դրանով պայմանավորված գերակայությունները: Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, չունենալով ներքին լուրջ հնարավորություններ (հատկապես ֆինանսներ), պետական կառուցակարգը միանգամից «լծեցին» պետության բոլոր հնարավոր գործառույթների իրականացմանը, ինչը չկայացած համակարգի համար վտանգավոր փորձություն էր: Այնինչ պահի հրամայականը թելադրում էր ներքին և արտաքին միայն որոշ գործառույթների անպայման և, իհարկե, արդյունավետ իրականացումը:

12. Հանրապետության կառավարության իրավասությունը չունեի որևէ իրավական ամրագրում: Այդ հարցը կարգավորում էր «կառավարությունը և նրա ղեկավարն իրականացնում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսագործումը» դասական բանաձևով: Կառավարությունը երկրի ընթացիկ կառավարումն իրականացնող ընդհանուր իրավասության գործադիր-կարգադրիչ մարմին էր, որի իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցերը, որքանով որ դրանք չէին վերապահված խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը: Կառավարության հիմնական գործառույթը պետության արտաքին և ներքին քաղաքականության ընդհանուր ծրագրի առաջարկությունն էր, դրա ձևակերպումը, ինվեստիտուրան խորհրդարանում և կենսագործումը: Այս գործառույթի իրականացման իրավական ձևը նոր ձևավորվող կառավարության հայտարարագիրն էր: Բացի գործադիր կանոնակարգող իշխանությունից՝ կառավարությունն ուներ լայն հնարավորություններ՝ լուրջ կերպով ազդելու օրենսդրական գործընթացի վրա: Այդպիսի լծակները երեքն էին՝ **առաջին**, կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, **երկրորդ**, կառավարությանն օրենսդիր մարմնի իրավագործությունների փոխանցման արդյունքում պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը, **երրորդ**, կառավարության կողմից օրենսդրական գործառույթի իրականացման թաքնված կառուցակարգը, այսինքն՝ խորհրդարանական հանձնաժողովների, կառավարության ու խորհրդարանի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովների, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցության միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը:

13. Մեծ ջանքերի և ծախսերի գնով հիմնադրված պետական կառավարման մարմինների համակարգը և դրա համալրումը քիչ թե շատ կարող ծառայողներով առաջ բերեցին նոր հիմնախնդիր, այն է՝ պետական ծառայողի կերպարի, նրա ազնվության և օրինական գործունեության հիմնահարցը: Այդ հարցը Հայաստանում ձեռք էր բերել քա-

դաքական մեծ նշանակություն, որովհետև վարկաբեկում էր պետական իշխանությունը, սպառնում էր անկախ ազգային պետականության գոյությանը: Սովորական պայմաններում 1918-1919 թթ. ընթացքում կառավարությունը փորձում էր աստիճանական, իրավական ճանապարհով կառուցել և կայացնել պետական կառուցակարգը: Սակայն արտասովոր իրադրությունը դրդում էր կառավարությանը՝ դիմելու արտակարգ միջոցառումների, հատկապես պետական ծառայության իրավական կարգավորման, պետական ծառայողների վրա հսկողություն և վերահսկողություն սահմանելու հարցում: Այդպիսի բնույթ կրող արտակարգ միջոցառումները ձեռնարկվել են մի քանի ուղղությամբ: Կառավարող ընտրանու ձեռնարկած արտակարգ միջոցառումներից շատերը վերածվում էին անարդյունավետ քայլերի: Հասնելով ձեռնարկված պետաիրավական որևէ քայլի անարդյունավետության գիտակցմանը, կառավարող մեծամասնությունը փորձում էր այն հաղթահարել նոր արտակարգ միջոցառմամբ, որը սկզբում թվում էր ամենալավ դեղատոմսը: Սակայն նորից պարզվում էր, որ այդպես չէ:

14. Երկրի կառավարման արտակարգ միջոցառումներն ունեին ոչ միայն օբյեկտիվ, անհրաժեշտ, այլ նաև քաղաքական դրդապատճառներ, պայմանավորված էին կառավարող կուսակցության մենատիրական ձգտումներով, հետևանք էին իրավական մշակույթի ցածր մակարդակի: Նման ուղղվածություն ունեցող օրենսդրական նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակ, սակայն խորհրդարանների ողջամիտ դիրքորոշման հետևանքով մեծամասամբ ընթացք չէին ստանում: Դրան հակառակ, երբ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, արտակարգ օրենսդրական նախաձեռնություններն անարգել իրագործվում էին: Արտակարգ միջոցառումները, շատ դեպքերում բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ նաև անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով չմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավակարգի հաստատման, պետական կառավարման նպատակների արագ, պատշաճ կենսագործմանը: Օրենսդիր մարմիններն ունեին անսահմանափակ հնարավորություններ իրենց իրավաստեղծագործության ընթացքում: Այդպիսի իրավահասկացողությունը և գործելակերպը շատ դժվար է նույնիսկ հայրենասիրական դիկտատուրայի նպատակահարմարության տեսանկյունից արդարացնելու, որովհետև ազգային-պետական ուժեղ իշխանություն չի նշանակում կամայականություն:

15. Հանրապետության դատական շինարարության փորձը հաստատում է նաև մեկ այլ օրինաչափություն. պետական կառուցակարգը սոցիալապես պայմանավորված է, այսինքն՝ այն պետության կամայական հայեցողության արդյունքը չէ, այլ հասարակական հարաբերություններին, իրավիճակին համապատասխան ստեղծվող ու գործող համակարգ: Դատական համակարգը, որը սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր ապահովելու իր առջև դրված խնդիրների լուծումը: Անիշխանությունը և քառսը, գորշ իրականությունը ռուսական դատական կանոնադրությունների շատ դրույթներ վերածեցին «հիդեալիզմի»: Եթե հնարավոր չէր ապահովել եղած համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ապա համակարգը պետք է վերափոխվեր, հարմարեցվեր իրականության պայմաններին: Անհաջողության գլխավոր պատճառը դատական շինարարության ռազմավարության սխալ ընտրությունն էր. ոչ թե իրականությունը պետք է հարմարեցվեր դատական համակարգին, այլ դատական համակարգը՝ իրականությանը: Գերխնդիրը, նպատակն արդյունքն է, այսինքն՝ իրավակարգի հաստատումը, արդարադատության խնդիրների կենսագործումը, այլ ոչ թե դատական մարմինների համակարգը, որը միայն միջոց է՝ հասնելու իրավական հիմքերի վրա դրված արդարադատության կենսագործմանը:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Տեսական նշանակությունը հանգում է Հայաստանի պետության և իրավունքի պատմության չուսումնասիրված հիմնախնդիրներից մեկի՝ Հայաստանի առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի հիմնադրման ու կայացման իրավական պատմության հետազոտմանը: Կատարված հետազոտությունը հիմք է տվել ամփոփելու պատմության դասերը և ձևակերպելու եզրակացություններ, որոնք լրացնում և զարգացնում են պետության և իրավունքի տեսության մի շարք հիմնադրույթները, պետության և իրավունքի պատմության այն բաժինները, որոնք հետազոտում են նորագույն շրջանում հայոց պետության և իրավական համակարգի ծագման, կայացման պատմական գործընթացները և օրինաչափությունները:

Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է պատմական փորձի հիման վրա առաջ քաշված գիտական հիմնադրույթներն արդի պետաիրավական համակարգի կատարելագործման և բարեփոխման համար օգտագործման հնարավորությամբ, իրավական օրինականության ամրապնդման արդի հայեցակարգի մշակման համար: Ատենախոսի եզրակացությունները և պաշտպանության ներկայացվող դրույթներն ունեն հայեցակարգային և գիտագործնական նշանակություն, կարող են նպաստել պետաիրավական բարեփոխումների ճշգրտման համար:

Հետազոտության արդյունքները, դրանում պարունակվող սկզբնաղբյուրները, նորմատիվ աղբյուրները, որոնք հիմնականում առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, կարող են օգտագործվել պետության և իրավունքի պատմության, պետության և իրավունքի տեսության, իրավունքի սոցիոլոգիայի, սահմանադրական իրավունքի գիտական հետազոտություններում: Միաժամանակ ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ընդհանուր տեսական, պատմաիրավական և ճյուղային իրավաբանական դասընթացների ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման համար, իրավագիտական պատմատեսական ու ճյուղային դասընթացների դասավանդման ընթացքում:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Հետազոտությունը կատարվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում, որտեղ և իրականացվել է աշխատանքի քննարկումը ու հաստատվել է դրական եզրակացությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են 4 գիտական մենագրություններում, գիտական հանդեսներում հրատարակված հոդվածներում:

Հեղինակը ատենախոսությանը վերաբերող թեմաներով գիտական զեկուցումներ է կարդացել ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում, ինչպես նաև մի շարք գիտաժողովներում, մասնավորապես՝

ա) Պետության և իրավունքի տեսության ու պատմության, քաղաքացիական իրավունքի, քրեական իրավունքի ամբիոնների կազմավորման 70-ամյակին նվիրված գիտաժողովում (Երևան, 29 նոյեմբեր, 2007 թ.) զեկուցվել է «Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացի իրավական հիմնախնդիրները» թեման,

բ) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 75-ամյակին նվիրված գիտաժողովում (27-28 նոյեմբերի, 2008 թ.) զեկուցվել է «Բուհերի իրավական կարգավիճակի պատմական զարգացման հիմնախնդիրները Հայաստանում» թեման,

գ) ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՀ - ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների հանրապետական գիտաժողովում, նվիրված 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90 ամյակին (Վանաձոր, 13 հոկտ., 2011 թ.), զեկուցվել է «Զաղաքականության իրավաօրինականությունը որպես ազգային պետականության կայացման պայման» թեման,

դ) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովում

(Երևան, 13 դեկտեմբերի, 2011 թ.) գեկուցվել է «Հայաստանի առաջին հանրապետության կառավարության իրավասությունը և գործունեությունը պետական ապարատի գործադիր ենթահամակարգի կազմակերպման և կառավարման ոլորտներում» թեման,

ե) «ԼՂՀ անկախության 20-ամյակը. իրողություններ և հեռանկարներ» թեմայով միջազգային գիտաժողովում (Ստեփանակերտ, 17-18 փետրվարի, 2012 թ.) գեկուցվել է «Պաշտպանունակությունը որպես պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության սկզբունք. պատմության դասերի տեսական իմաստավորում» թեման,

զ) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովում նվիրված Շ.Ն. Պետրոսյանի 100-ամյակին (14 դեկտեմբերի, 2012 թ.) գեկուցվել է «Գործառնության ինքնաբավությունը որպես դատական իշխանության կազմակերպման սկզբունք (պատմության դասերի տեսական իմաստավորում)» թեման:

Հետազոտության արդյունքներն օգտագործվել են «Հայաստանի սահմանադրական զարգացման պատմություն» դասընթացի առարկայական ծրագրի մշակման և դասավանդման ընթացքում, ինչպես նաև համապատասխան մենագրությունը պատրաստելիս (Վաղարշյան Ա. Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Եր., Երևանի համ. հրատ., 2003, 160 էջ):

Հետազոտության արդյունքներն օգտագործվել են «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., «Իրավունք», 2010, 1086 էջ) գիտագործնական ժողովածուն պատրաստելիս՝ առաջաբանում (էջ 17-20), Սահմանադրության 1, 2, 5, 8.2, 39 հոդվածների մեկնաբանություններում (էջեր 39-42, 47-50, 55-61, 62, 84-85, 130-132, 467-473):

### **Ատենախոսության հիմնական բովանդակությունը**

**Ատենախոսության կառուցված է ներածությունից, երեք բաժիններից, 16 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ցանկից:**

1-ին բաժնի վերտառությունն է «Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը»: Այդ բաժնի 1-ին գլխի (Առաջին հանրապետության հռչակումը և օրենսդիր իշխանության համակարգի ձևավորման ու կայացման փուլերը) 1-ին պարագրաֆում՝ «Առաջին հանրապետության հռչակումը և կառավարման համակարգը մինչև առաջին խորհրդարանի հիմնադրումը», ներկայացվում է նորահռչակ պետության ինքնիշխան ներկայացուցչի կարգավիճակն իրեն վերապահած Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային խորհուրդի ձևավորման պատմական գործընթացը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը համարվում էր Հայոց ազգային համախորհրդակցության և Ազգային ժողովի «գործադիր մարմինը, որը ամբողջ ժողովրդի անունից վարում էր ռուսահայ քաղաքականությունը թե՛ մեր ժողովրդի և թե՛ ամբողջ պետության մեջ»: Ազգային խորհրդի իրավասությանը վերապահված էին ազգային «ընթացիկ խնդիրները, եթե դրանք առանձնապես սկզբունքային բնույթ և գործնական կարևորություն չունեին»: Խորհրդում հարցերի լուծման երկու կարգ էր նախատեսված. սկզբունքային խնդիրները՝ փոխհամաձայնությամբ (կոնսենսուսով), իսկ ընթացիկները՝ պարզ քվեարկությամբ: Այդպիսով Ազգային խորհուրդը հայ իրականության մեջ քաղաքական բարձրագույն մարմինը չէր, սակայն դեպքերի բերումով հետագայում հայկական քաղաքական շահերի ներկայացուցչության և ազգային հարցերի կառավարման իրավագործությունը կենտրոնացավ նրա ձեռքում:

Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը հայոց ազգային տեսանկյունից լեգիտիմ էր, որովհետև ձևավորվել էր «համահայկական» ընտրությունների արդյունքում: Նրան նորահռչակ պետության ինքնիշխան ներկայացուցիչ ճանաչելը միակ ճիշտ, հանրային իշխանության լեգիտիմության ապահովման քաղաքական քայլն էր:

**2-րդ պարագրաֆում՝ «Հայոց ազգային-քաղաքական ներկայացուցչության համակարգից անցումը բնակչության և քաղաքական կուսակցությունների ներկայացուցչական խորհրդարանական կառավարման համակարգին» վեր է հանվում**

Հայաստանի խորհրդի՝ առաջին խորհրդարանի ստեղծման քաղաքական դրդապատճառները և գործընթացը: Հայաստանի խորհրդի ստեղծմամբ տեղի ունեցավ անցում հայերի ազգային ներկայացուցչական համակարգից՝ Հայաստանի բնակչության պետական ներկայացուցչական համակարգի: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գործունեությունը շարունակելը սպառնում էր նրան ոչ լեգիտիմ պետական մարմնի վերածելու՝ պայմանավորված կենտրոնական ազգային խորհրդի ներկայացուցչական կազմի թերությամբ: Այն ռուսահայության ազգային ներկայացուցչական մարմինն էր և Հայաստանի բնակչության կառուցվածքից ներկայացնում էր միայն հայ ազգաբնակչությանը: Ներկայացուցչական այդ սահմանափակվածությունն այդ մարմնի գլխավոր թերությունն էր, որ սպառնում էր ոչ լեգիտիմ դարձնել նրան: Պատմական պայմանների էական շրջադարձը պահանջում էր փոխել պետական իշխանությունը մարմնավորողի բնույթը:

**3-րդ պարագրաֆում «Օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունը»** ներկայացվում են այն դրդապատճառները և ժամանակամիջոցները, երբ կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ, 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոս. 1-ը, իսկ այնուհետև 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտ. 2-ը, վերածվում էր օրենսդրական լիազորություններով օժտված գործադիր մարմնի: Առաջին գլխի հետազոտական արդյունքն օրենսդիր իշխանության համակարգի կայացման և ներքին զարգացման տեսանկյունից դանդաղության պետական կառավարման համակարգի բաժանումն է 3 փուլի և դրանց ընդհանուր բնութագրումը:

**2-րդ գլուխը՝ «Հայաստանի խորհուրդը որպես Առաջին հանրապետության առաջին խորհրդարան»** բաղակացած է 5 պարագրաֆից: **1-ին պարագրաֆում** հետազոտվել են Հայաստանի խորհրդի որպես օրենսդիր մարմնի կազմավորման գործընթացը և գործունեության ժամանակաշրջանը: Հայաստանի խորհուրդը՝ որպես առաջին «բացարձակ ինքնիշխան» խորհրդարան, փաստորեն գործել է 1918 թ. օգոստ. 1-ից մինչև 1919 թ. ապր. 27-ը, իսկ իրավաբանորեն՝ մինչև հունիսի 5-ը, երբ հնարավոր էր «արտակարգ կարևորություն ունեցող դեպքերում» գումարել խորհրդարանի նիստ, ինչը, սակայն, չի արվել:

**2-րդ պարագրաֆում վեր են հանվել Հայաստանի խորհրդի ձևավորման կարգի առանձնահատկությունները:** Հայաստանի խորհուրդը ձևավորվել է մինչև 1918 թ. օգոստոսի 1-ը: Ձևավորման հարաբերությունները որևէ իրավական ամրագրում չստացան: Հայաստանի խորհրդի անդամները բաժանվում էին երեք խմբի. ա) կուսակցական, բ) ազգային խմբակցությունների, գ) անկուսակցականների խմբակցության երկու պատգամավոր: Պատգամավորական խմբերը տարբերվում էին մանդատների զբաղեցման կարգով: Քաղաքական կուսակցություններին հատկացված պատգամավորական տեղերի համար կոնկրետ անձանց թեկնածությունը տալիս էր տվյալ կուսակցության կենտրոնական բարձրագույն մարմինը: Խորհրդարանական կուսակցություններից, բացի ՀՅԴ-ից, մնացածի կենտրոնական մարմինները գտնվում էին Թիֆլիսում:

Ազգային պատգամավորներին նշանակում էր տվյալ ազգության հայաստանյան կամ Երևանի խորհուրդը, իսկ անկուսակցական պատգամավորներին՝ Երևանի ինքնակառավարման մարմինը՝ քաղաքային խորհուրդը: Այսպիսով, Հայաստանի խորհուրդը նշանակովի մարմին էր՝ կազմված քաղաքական կուսակցությունների և ազգերի ներկայացուցիչներից: Այս կարգը թելադրված էր արտաքին և ներքին քաղաքական ծանր պայմանների պարտադրմամբ: Այն տվյալ պահին օրենսդիր իշխանության լեգալությունն ու լեգիտիմությունն ապահովելու արդյունավետ, օպերատիվ լուծում էր:

**3-րդ պարագրաֆում** հետազոտվել են Հայաստանի խորհրդի պատգամավորների լիազորությունների ստուգման կարգը, սոցիալական կազմը և խմբակցությունները: Հայաստանի խորհրդի 46 պատգամավորների թվում կային 6 իրավագետ, 4 բժիշկ, ինչպես նաև գրողներ, մանկավարժներ, զինվորականներ, քիմիկոսներ ու ինժեներներ: Պատգա-



մավորների կազմում կին չկար:

Հայաստանի խորհրդի ձևավորման հիմունքները որոշելիս դրա հիմքում ի սկզբանե դրվել էր խմբակցային սկզբունքը: Հայաստանի խորհրդում կային 8 խմբակցություն: Խմբակցությունները մեծ ազդեցություն ունեին օրենսդիր մարմնի աշխատանքի վրա. մասնավորապես՝ մշակում էին ընդհանուր նիստերի օրակարգը, ուղղորդում էին բանավեճերը, քվեարկությունը, իրականացնում էին գործադիր իշխանության նկատմամբ հսկողության զանազան ձևերը, բանակցում էին կառավարություն և կոալիցիաներ կազմելու շուրջ: Խմբակցությունների համար մասնակիցների նվազագույն քանակ չէր սահմանված. առկա էր մեկ պատգամավորով խմբակցություն: Ամենաակտիվը կուսակցական խմբակցություններն էին: Պատգամավորները չունեին նոր խմբակցություն ստեղծելու ազատություն, որովհետև կուսակցական և խմբակցային կարգապահությունը խախտելու ամեն մի դեպք կարող էր տվյալ պատգամավորին ետ կանչելու հիմք ծառայել: Այսինքն՝ պատգամավորն իր կուսակցությունից չունեի ազատ մանդատ և անկախության երաշխիք: Այդ հանգամանքը հաստատվում է Հայաստանի խորհրդի պատգամավորական կազմի անընդհատ փոփոխության փաստով:

**4-րդ պարագրաֆում** հետազոտվել է Հայաստանի խորհրդի ներքին կառուցվածքը, մասնավորապես՝ ղեկավար մարմինը՝ նախագահությունը, Հայաստանի խորհրդի մշտական և ժամանակավոր, սովորական և արտակարգ հանձնաժողովները, հանձնաժողովների կառուցվածքը, աշխատակարգը, լիազորությունները, գործունեության ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Հայաստանի խորհրդի հատուկ մարմինները, ներառյալ հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը:

Անդրանիկ խորհրդարանը միապալատ էր: Հայաստանի խորհրդի կառուցվածքում, բացի «սովորական» հանձնաժողովներից, ստեղծվել են երկու հատուկ մարմին, որոնք իրենից ձևով նման էին հանձնաժողովներին, սակայն լիազորությունների առումով էապես տարբերվում էին դրանցից: Դրանց ստեղծումը պայմանավորված էր ռազմական և դիվանագիտական գաղտնիքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Դրանք Հայաստանի խորհրդի և կառավարության համատեղ հանձնաժողովներն էին պաշտպանության և արտաքին քաղաքականության հարցերով, որոնց քննարկած կարևորագույն հարցերը, թեկուզև օրենսդրական բնույթի, շրջանցում էին Հայաստանի խորհրդի ընդհանուր նիստերը: Հայաստանի խորհրդի կառուցվածքում որոշակի դեր է խաղացել նաև հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը: Այն խորհրդին շրջանցելու յուրահատուկ ձև էր, որը, հետագայում ձախողվեց:

**5-րդ պարագրաֆում** հետազոտվել են Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը և Հայաստանի խորհրդի կազմի ընդլայնումը: Հիմնահարցի հետազոտությունը սկսվել է Փարիզի վեհաժողովում հայ ժողովրդի ներկայացուցչական երկակիության պատմական ակունքներից: Այնուհետև ներկայացվել են հայկական պատվիրակությունների մրցակցությունը Փարիզում և դրա հաղթահարման միջոցը՝ Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակման ջանքերը: Սակայն քաղաքական գործընթացների հետևանքը եղավ այն, որ կառավարության կողմից (1919 թ. մայիսի 28) միակողմանի հռչակվեց «Միացյալ և Անկախ Հայաստան» ակտը և կառավարության կողմից ավելացվեց խորհրդարանի պատգամավորների քանակը: Այս հարցերի հետազոտման միջոցով հեղինակը ցույց է տալիս, որ «Անկախ և միացյալ Հայաստանի ակտն» ընդունելու գործընթացը կառավարող կուսակցության և կառավարության գործունեության անդրկուլիսային գործելակերպի արդյունք էր, ինչն ավելի շատ նման էր քաղաքական դավադրության: Տարիների հեռվից արդեն ակնհայտ է, որ այդ քայլերը պատահական չէին, այլ ծրագրված դաշնակցության կուսակցական կուլիսներում, որովհետև Միացյալ Հայաստանի պետական կազմակերպության ստեղծումն օրինական ընթացակարգով կրեբեր այդ կուսակցության ձախողման, պարտության, քանի որ այն Հայաստանի խորհրդում ուներ երեքուն մեծամասնություն և այն էլ կոալիցիոն հիմքերով: Ակնհայտ է նաև մեկ այլ բան, որ ծրագրված

և իրականացված այդ քաղաքականության նպատակը դաշնակցության քաղաքական և խորհրդարանական գերիշխանության հաստատումն էր, ինչն ապացուցվում է հետագա քաղաքական քայլերով, պառլամենտի ընտրական գործընթացների տրամաբանությամբ, «Անկախ և միացյալ Հայաստանի» հռչակման ձևական շղարշով, որը, բացի անօրինական լինելուց, չունեցավ որևէ իրական հետևանք հայաստանյան պետականության կազմակերպական հիմքերի վրա, չապահովեց արևմտահայ ներկայացուցչությունը և մասնակցությունը պետական ապարատին: Դրա հետևանքն արևմտահայության քաղաքական օտարացումն էր:

Հ. Քաջազունու մեկուսացումը և Ա. Խատիսյանի կողմից նրա լիազորությունների յուրացումը, կառավարության կողմից կարևորագույն նշանակության ակտի ընդունումն առանց դրա ընդունման քաղաքական անհրաժեշտության լուրջ քննարկումների հաստատում են, որ ամեն ինչ որոշվել էր քաղաքական թատերաբեմի կուլիսներում, ՀՅԴ-ի բյուրոյում, իսկ պետական մարմինները դարձել էին «բյուրոյի» մանկլավիկը: Արդյունքում կառավարությունն իրեն իրավունք վերապահեց ընդունելու սահմանադրական նշանակության ակտ՝ շրջանցելով խորհրդարանին:

**6-րդ պարագրաֆում** հետազոտվել է Հայաստանի խորհրդի լիազորությունները դադարելու և արձակելու հիմնախնդիրը: Հայաստանի խորհրդի դեպքում տարօրինակն այն էր, որ նրա կազմավորման հիմունքները որոշելիս (1918 թ. հուլիս) քաղաքական գործիչները չէին սահմանել գործունեության ժամկետը: Հայաստանի խորհուրդը հիմնադրվել էր որպես անժամկետ գործունեության խորհրդարան: Միգուցե դա էական խնդիր չէր, եթե նկատի ունենանք հանրապետության իրավիճակը 1918 թ., սակայն 1919 թ. արդեն, երբ խորհրդարանը ճգնաժամի մեջ էր, այդ հանգամանքը կամ արձակման ինստիտուտի իրավական ամրագրման բացը զգացնել էին տալիս: Խորհրդի լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր, որը բավականին բարդ գործ էր, քանի որ խմբակցություններից ոչ մեկը ձայների գերակշռություն չուներ: Խորհրդի ներկայացուցչական կազմը, որում ոչ մի կուսակցություն չուներ բացարձակ մեծամասնություն (դաշնակցականների քվեները ընդամենը 18-ն էին), լուրջ քաղաքական բարդությունների և փորձությունների առաջ էր կանգնեցնելու հանրապետությանը: Այդ իրավիճակից դուրս գալու երկու ելք կար. կա՛մ պետք է լուծարվեր Հայաստանի խորհուրդը և ընտրությունների միջոցով կազմավորվեր նոր օրենսդիր մարմին, կա՛մ անհրաժեշտ էր ստեղծել կոալիցիոն խորհրդարանական մեծամասնություն, որից և իր վստահությունը կստանար կառավարությունը: Առաջին ճանապարհը, այն է՝ նոր ընտրությունների կազմակերպումը, սկզբնական շրջանում անընդունելի էին համարում բոլոր կուսակցությունները, որոնց այդ միահամուռ դիրքորոշումը հանգում էր հետևյալին. մինչև Մահմանադիր ժողովի գումարումը, որ պիտի հրավիրվեր հանրապետության սահմանները որոշելուց, գաղթականությանը տեղավորելուց, այսինքն՝ պատերազմից հետո, ժողովրդի ինքնիշխան իրավունքների կրողը պետք է հանդիսանար Հայաստանի խորհուրդը: 1918 թ. նոյեմբերին ընտրվեց երկրորդ ուղին՝ ստեղծվեց կոալիցիոն մեծամասնություն դաշնակցական և ժողովրդական ֆրակցիաների միջև: Գաղափարածրագրային կայուն խորհրդարանական միության բացակայությունը պայմանավորում էր նաև կոալիցիայի անկայուն, անհաստատ վիճակը: Ստեղծված իրավիճակում միակ ելքը Հայաստանի խորհրդի գործունեության դադարումն էր ինքնալուծարման միջոցով: Չունենալով բացարձակ մեծամասնություն խորհրդում՝ դրան հասնելը դաշնակցականների համար շատ բարդ խնդիր էր, հանգամանք, որը նույնիսկ կատաղեցնում էր դաշնակցության առաջնորդներին: Այդ կացությունից դուրս գալու և իրավական կարգավորման բացը լրացնելու միակ ելքը դաշնակցությունը տեսավ խորհրդարանի աշխատանքների ձախողման, տապալման մեջ: Նպատակը Հայաստանի խորհուրդն անդամալույծ մի մարմին դարձնելն էր և դրանով ընդդիմությանը փաստի առաջ կանգնեցնելը:

**3-րդ գլուխը՝ «Առաջին հանրապետության երկրորդ խորհրդարանը՝ Հայաստանի**

**պառլամենտը»** կազմված է 5 պարագրաֆներից, որոնցում մանրագնին հետազոտվել են՝ ա) 1919 թ. խորհրդարանական ընտրությունները և դաշնակցական մենիշխանության հաստատումը, բ) Հայաստանի պառլամենտի գործունեության փուլերը, գ) Հայաստանի պառլամենտի պատգամավորների լիազորությունների ստուգման կարգը, սոցիալական կազմը և խմբակցությունները, դ) Հայաստանի պառլամենտի ներքին կառուցվածքը, ղեկավար մարմինը, հանձնաժողովները, ե) Հայաստանի պառլամենտի լիազորությունների դադարման հիմնախնդիրը:

Հայաստանի պառլամենտի կառավարման շրջանը ատենախոսը բնութագրվում է որպես քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով ընտրված խորհրդարանական կառավարման համակարգ, որն ընդգրկում էր 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև հանրապետության անկումը: Այս շրջանում առկա օբյեկտիվ ընտրական իրավունքը քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգ էր. ամեն մի կուսակցություն խորհրդարանական մանդատն ստացել էր իրեն տրված ձայներից համամասնորեն: Այս փուլում օրենսդիր մարմինը Հայաստանի պառլամենտն էր, որի ընտրությունները կազմակերպելու և նախընտրական քարոզչության ընթացքում շարունակվեցին կառավարության որպես օրենսդիր մարմնի և կուսակցությունների քաղաքական խարդավանքները: Ոչ կառուցողական, նեղ կուսակցական դիրքորոշումների, կուսակցական անհանդուրժողականության հետևանքը եղավ այն, որ ՀԺԿ-ն հրաժարվեց մասնակցել պառլամենտական ընտրություններին: Ընտրությունների արդյունքում ՀՅԳ-ն ստացավ 72 պատգամավորական տեղ, ՍՀԿ-ը՝ 4, թուրքերը՝ 3, Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միությունը՝ 1: 1919 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաստատվեց դաշնակցական մենիշխանություն:

Հետազոտելով Հայաստանի պառլամենտի գործունեության փաստական և իրավաբանական ժամանակաշրջանները, «բյուրո կառավարության» ձևավորումը և նրան օրենսդրական լիազորություններով օժտելը, ատենախոսը հիմնավորում է, որ պետության կառուցակարգում տեղի ունեցավ կառավարական վարչաձևի հաստատում:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խորհրդարանի գոյության ժամանակամիջոցներում խորհրդարաններն իրենց օրենսդրական լիազորությունները երբեմն փոխանցել են կառավարությանը: Հանրապետության քաղաքական ղեկավարության՝ օրենսդրական լիազորությունների փոխանցմանն ուղղված քայլերը պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Մի կողմից՝ օրենսդիր մարմնում՝ հատկապես Հայաստանի խորհրդում կառավարող կուսակցությունը մյուս կուսակցությունների ընդդիմադիր դիրքորոշման պատճառով հանդիպելով որոշակի դժվարությունների, այսինքն՝ չկարողանալով անարգել իրագործել իր քաղաքականությունը, իր պատգամավորական մեծամասնության միջոցով կարողանում էր հասնել օրենսդրական լիազորությունների այդպիսի փոխանցման և դրանով իսկ ազատվում ավելորդ գլխացավանքից: Մյուս կողմից՝ կառավարող ուժերի կամքից անկախ, ճգնաժամը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, պատերազմները, հակապետական խռովությունները և անցման շրջանը հրամայաբար պահանջում էին իշխանության կենտրոնացում, օպերատիվություն, և ակնհայտ էր դառնում, որ այդպիսի արտակարգ իրադրությունում պետական կառավարումը «պառլամենտական դանդաղաշարժ ձևով» չէր կարող ձեռնարկել կտրուկ միջոցներ, ունենալ արագ մանևրող պետական իշխանություն: Իրականության առաջադրած հրատապ խնդիրները պահանջում էին շուտափույթ և առանձնահատուկ լուծումներ, որոնք հնարավոր էին միայն արագ ու օպերատիվ կառավարական որոշումներով, կարգադրություններով ու ձեռնարկումներով: Այսպիսի իրավիճակում քաղաքական ուժերի մի մասը կարծում էր, որ խորհրդարանը որոշ ժամանակ պետք է ձեռնպահ մնար օրինաստեղծ գործունեությունից, մինչև վիճակը կայունանար, և հնարավոր կդառնար խորհրդարանական աշխատանքը, խորհրդարանական օրինաստեղծությունը: Հանրա-

պետության գոյության ողջ ժամանակահատվածում ժողովրդավարական կառավարման ձևերի, հաստատությունների ձգտման և ճգնաժամային իրավիճակից բխող արտակարգ, դիկտատորական միջոցառումների անհրաժեշտության միջև հակասությունը երբեք լուծում չգտավ, ինչի վկայությունն է նաև օրենսդիր ու գործադիր մարմինների գործառնության մրցակցությունը:

Հայաստանի պառլամենտը ևս միապալատ խորհրդարան էր, որի պատգամավորների քանակը 80-ն էր: Պատգամավորների թվում կային 14 իրավագետ (մեկը՝ անկուսակցական մահմեդականների, երեքը՝ սոցիալիստ-հեղափոխականների, տասը՝ դաշնակցական խմբակցությունից), 7 բժիշկ, 12 մանկավարժ, հասարակական քաղաքական գործիչներ, քիմիկոսներ ու ինժեներներ: Խորհրդարանի պատգամավորների կազմում կար 3 կին՝ դաշնակցական խմբակցության անդամ: Զանի որ ընտրությունների արդյունքում ձայների գերակշիռ մասը բաշխվել էր հօգուտ ՀՅԴ-ի, ապա խմբակցությունները Հայաստանի պառլամենտի կազմում էական դեր չէին խաղում:

Հայաստանի պառլամենտի ղեկավար մարմինը նախագահությունն էր: Հայաստանի պառլամենտում ևս կազմավորվել են մշտական և ժամանակավոր հանձնաժողովները, կատարվել է դրանց համակարգի վերակառուցում: Երկրորդ խորհրդարանի պրակտիկայում ձևավորված կազմակերպական ձևերից էին տարբեր բնույթի խորհրդակցությունները: Պահպանված պաշտոնական փաստաթղթերը հնարավորություն են տալիս կցկտուր տվյալներ քաղելու պառլամենտի նախագահության, հանձնաժողովների ու խմբակցությունների նախագահների խորհրդակցության մասին, որը գումարվում էր պառլամենտի նախագահի կամ նախագահության նախաձեռնությամբ՝ ինչ-որ հարցեր քննարկելու համար: Հաջորդը հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունն էր, որը երբեմն ընդունել է շատ կարևոր որոշումներ: Հանդիպում են նաև բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը, խորհրդարանական հանձնաժողովների նախագահների խորհրդակցությունը:

Հայաստանի պառլամենտի ընտրությունները կազմակերպելիս քաղաքական գործընթացները հանգեցրեցին նրան, որ չսահմանվեց նրա լիազորությունների ժամկետը: Վաղաժամկետ արձակման ինստիտուտը ևս չէր նախատեսված: Հայաստանի պառլամենտը ևս հիմնադրվեց որպես անժամկետ լիազորություններով: Դրա համար ևս լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Սա ճակատագրի հեզմանք չէր, այլ դաշնակցության կողմից հատուկ մտածված ծրագիր:

**4-րդ գլխի՝ «Առաջին հանրապետության խորհրդարանների իրավասությունը և իրավական գործունեությունն առանձին ոլորտներում» 1-ին պարագրաֆում** հետազոտվել է հանրապետության խորհրդարանների իրավասության բնույթը և դրա իրավական ամրագրման հիմնախնդիրը: Վեր հանելով խորհրդարանի իրավասության վրա ազդող գործոնները և խորհրդարանների տեսակները ըստ իրավասության, հեղինակը հանգել է եզրակացության, որ Առաջին հանրապետության խորհրդարանները «անսահմանափակ իրավասությամբ» խորհրդարաններ էին: Սակայն «անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան» հասկացությունը չի ենթադրում բացարձակություն: Եթե պետական իշխանության համակարգում գործում է իշխանությունների բաժանման սկզբունքը, ապա դրանով իսկ արդեն առկա է խորհրդարանի իրավասության սահմանափակում: Իրավաբանական տեսանկյունից «անսահմանափակ խորհրդարան» հասկացությունը, ըստ բրիտանական սահմանադրագետների, նշանակում է ընդամենը մի շարք պայմանների առկայություն, մասնավորապես՝ «ա) օրենքների գերակայություն, բ) խորհրդարանի իրավագործությունը հաստատել պետական բյուջեն և սահմանել հարկեր, գ) կառավարության կողեկտիվ պատասխանատվությունը, դ) մրցակցող իշխանության բացակայությունը և այլն»:

**4-րդ գլխի 2-րդ և 3-րդ պարագրաֆներում** հետազոտվել են խորհրդարանների օրենսդրական իրավասությունը և օրինաստեղծագործության կառուցակարգը (խորհր-

դարանների օրենսդրական իրավասության բնույթը, օրենսդրական գործընթացի փուլերը և դրանց առանձնահատկությունները, օրենքների հաստատման և հրապարակման յուրատատուկ խորհրդարանական կառուցակարգը, օրենքների ուժի մեջ մտնելու արտակարգ իրավակարգավորումները), ինչպես նաև Հայաստանի խորհրդի և Հայաստանի պառլամենտի օրենսդրական գործունեությունը, մասնավորապես՝ խորհրդարանների ընդունած «օրենքների» տեսակները և քանակական համեմատական պատկերը, օրենսդրական գործընթացի միասնական բարդ կառուցակարգի խնդիրը, ճիգերը կանոնակարգելու օրենսդրության վիճակը:

Առաջին հանրապետության խորհրդարանների օրենսդրական իրավասություններն իրենց բնույթով, իրավական կարգավորման առանձնահատկություններով իրարից չեն տարբերվում: «Հայաստանի խորհրդի նակագ»-ի 4-րդ գլխի (Խորհրդում գործերի վարույթի կարգը) առաջին բաժինը, որ նվիրված էր «օրենսդրական գործերի քննարկման կարգին», կարգավորում էր օրենսդրական գործընթացը խորհրդարանում: Այստեղ այդ կարգավորումը վերաբերում էր օրենսդրական գործընթացի միայն ներխորհրդարանական փուլին, չէր ներառում օրենսդրական նախաձեռնության և այնուհետև օրենքների հրապարակման ու ուժի մեջ մտնելու հարաբերությունների կարգավորումը: Սա, անշուշտ, «նակագի» թերություններից էր, որը, սակայն, հետագայում ընթացիկ օրենքներով մասնակիորեն ներառվեց օրենսդրական կարգավորման շրջանակ: Խորհրդարանի ընդունած օրինագիծը, որպես կանոն, անցնում է հաստատման (կամ ստորագրման) և հրապարակման (պրոմուլգացիայի) փուլերը: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետության համար առաջանում էր օրինաստեղծ գործընթացի այս երկու փուլերից հատկապես առաջինի հիմնախնդիրը, որովհետև խորհրդարանական հանրապետությունում օրենքի ստորագրությունը սովորաբար կատարում է պետության գլուխը: Առաջին հանրապետության պետական կառավարման առանձնահատկություններից ելնելով՝ երևի թե այդ գործառույթը պետք է կատարեր ՀՀ վարչապետը: Սակայն հանրապետության քաղաքական վերնախավը նախընտրեց օրենքի հաստատման և հրապարակման գործը ևս կենտրոնացնել խորհրդարանում: Ամենայն հավանականությամբ, օրենքները ստորագրելու և հրապարակելու հարցին չտրվեց իրավաչափ լուծում, որովհետև դա ձեռնառու չէր ո՛չ դաշնակցականներին, ո՛չ էլ Հայաստանի խորհրդի մյուս խմբակցություններին: 1918 թ. օգոստոսին վարչապետ ընտրված ուրույն քաղաքական գործիչ Հ. Քաջազունին դաշնակցության համար անվերապահորեն ընդունված չէր: Նրա վարչապետ ընտրվելը քաղաքական փոխզիջումների արդյունք էր: Հենց այդ հանգամանքն էր պատճառը, որ օրենքների հաստատման իրավունքը հանրապետության վարչապետին չվերապահվեց: Հետագա իրադարձությունները՝ դաշնակցության կողմից Հ. Քաջազունու մեկուսացումը և չեզոքացումը, նրա՝ արդեն հետհանրապետական շրջանում բռնած դիրքորոշումը հաստատում են այս ենթադրությունը, բացատրում օրենքների հաստատման նման ինստիտուտ հիմնադրելու քաղաքական դրդապատճառները: Հայաստանի պառլամենտում պահպանվեց Հայաստանի խորհրդի կողմից սահմանված օրենքների հաստատման և հրապարակման կարգը: Օրենսդրական գործընթացի կարևորագույն և եզրափակիչ փուլն օրենքի ուժի մեջ մտնելու կարգն է: Խորհրդարանների գործունեության ժամանակաշրջանում երկուսն էլ փորձում էին քիչ թե շատ իրավական դիրքորոշումների հիմքի վրա կարգավորել օրենքների հրապարակման և գործողության մեջ մտնելու հարաբերությունները: Հենց որ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, սա անպայման դիմում էր արտակարգ միջոցներ նախատեսող օրենսդրական կարգավորումների, սահմանելով օրենքների ընդունումից հետո ուժի մեջ մտնելու կարգ, ինչպես նաև պատասխանատվությունը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող օրենքների հետադարձ գործողություն:

**4-րդ պարագրաֆում** հետագոտվել են խորհրդարանների իրավասությունը

Ֆինանսական (բյուջետային) ոլորտում և պետական վերահսկիչի ինստիտուտը: Այստեղ հետազոտության առարկան ներառել է բյուջետային համակարգի հիմնադրումը և դրա կարգավորումը, միասնական պետական բյուջետային համակարգի ստեղծման փորձերը, պետական վերահսկողության որպես խորհրդարանի ֆինանսական վերահսկողության մարմնի հիմնադրումը և վերակառուցումները, պետական վերահսկողության և պետական վերահսկիչի կարգավիճակի հիմնահարցերը:

Նորաստեղծ պետության կառուցակարգի ստեղծման կարևորագույն հիմքը բյուջետային համակարգի կառուցումն էր. նոր ստեղծվող պետական կառույցի գոյության հիմքերից էին ֆինանսական և նյութական միջոցները, որոնք ապահովելու էին այդ ապարատի հիմնումը և կազմակերպումը, իսկ այնուհետև՝ արդյունավետ գործունեությունը: Պետական կառուցակարգի այդ բաղադրատարրի ձևավորմանը խորհրդարանը ձեռնամուխ եղավ հենց առաջին իսկ օրից: Չունենալով պատրաստի պետական ապարատ և նախորդ տարվանից եկող բյուջետային համակարգ՝ ակնհայտ է, որ սկզբնական շրջանում հնարավոր չէր միասնական պետական բյուջեի նախագծի մշակում և ընդունում: Այդ իսկ պատճառով 1918 թ. ընթացքում պետական կառուցակարգի ծախսերի ֆինանսավորումը կատարվում էր անհատական նպատակային հատկացումների միջոցով: Սակայն բյուջետային համակարգի վիճակն անորոշ էր ու անկայուն նաև 1919 թ. ընթացքում. պետական ապարատի ծախսերի ֆինանսավորումը կատարվել է նույն կերպ՝ առանձին նախարարությունների նախահաշիվների ժամկետների երկարացման կամ առանձին հաստատման ճանապարհով: Երկու խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ընդունել են օրենք կոչված 318 ակտ, որոնցից 38-ը անհատական իրավական ակտեր են, իսկ 191-ը՝ ֆինանսական-հարկային ոլորտի օրենքներ: Ֆինանսաբյուջետային բովանդակությամբ օրենքները քանակապես գերակշռել են նաև օրենսդիր լիազորություններով օժտված կառավարության օրենքների մեջ: Ամենայն հավանականությամբ, դա խորհրդարանի ուշադրությունը շեղելու ձևերից մեկն էր, որովհետև գոնե մամուլում լավում էին տրտույցներ խորհրդարանի նման գործելակերպի նկատմամբ:

Առաջին խորհրդարանի և կառավարության ձևավորմամբ, երբ կառավարությանն օրենսդրական կարգով կատարվեցին առաջին ֆինանսական հատկացումները, որոշվեց ստեղծել բյուջետային վերահսկողական առանձին մարմին: Առաջին խորհրդարանը ձախողեց գործադիր իշխանության և պատգամավորական որոշ ուժերի՝ պետական վերահսկողության համակարգը խորհրդարանից մեկուսացնելու փորձերը: Պետական վերահսկողությունը ստեղծվեց որպես խորհրդարանի մարմին, իսկ պետական վերահսկիչը պատասխանատու էր միայն խորհրդարանի առջև:

**5-րդ պրագրաֆում** հետազոտվել են խորհրդարանի վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ և դրա իրականացման ձևերն Առաջին հանրապետությունում՝ կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների քննարկումը և հաստատումը, վերահսկողությունը պատվիրակված օրենսդրության նկատմամբ, հարցեր և հարցապնդումներ, անվստահության քվե, խորհրդարանական քննարկումներ, կառավարության, նախարարների զեկուցումները և հայտարարությունները խորհրդարանում, խորհրդարանական լուսններ, մշտական և ժամանակավոր (ներառյալ քննիչ) հանձնաժողովների վերահսկողական գործունեությունը:

**6-րդ պարագրաֆում** «Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների իրավասությունը դատական իշխանության և արդարադատության ոլորտներում» նախ վեր են հանվել համաշխարհային պրակտիկայում խորհրդարանի արդարադատության ոլորտի հնարավոր լիազորությունները, իսկ այնուհետև իրականացնելով խորհրդարանների, կառավարության, արդարադատության նախարարության գործունեության վերաբերյալ արխիվային նյութերի, այդ լիազորությունները կարգավորող ընթացիկ օրենքների հետազոտությունը և համակարգումը՝ պարզվել են դրանցից յուրաքանչյուրի

հանրապետությունում առկայության հարցը և կիրառման պրակտիկան, դրանք տնօրինող սուբյեկտներին: Առանձնահատուկ էր ներման ընթացակարգի կենտրոնացումը խորհրդարանում:

**5-րդ գլխի՝ «Խորհրդարանի գործառնության կառուցակարգը և պատգամավորների իրավական կարգավիճակն Առաջին հանրապետությունում» 1-ին պարագրաֆում** հետազոտվել են խորհրդարանի գործառնության կառուցակարգը և պառլամենտական ընթացակարգերը, մասնավորապես՝ խորհրդարանի գործառնության կառուցակարգի իրավական կարգավորման աղբյուրը՝ «Հայաստանի խորհրդի նակագր» և դրա կառուցվածքը, խորհրդարանի գործունեության ձևերը, խորհրդարանական ընթացակարգերը: Առաջին հանրապետության խորհրդարանների գործառնութավորման կառուցակարգը՝ որպես խորհրդարանի գործունեության հիմնական ձևերի և խորհրդարանական ընթացակարգերի ամբողջություն, խորհրդարանի ռեգլամենտում (կանոնակարգում) ուներ մանրամասն և տարբերակված օրենսդրական կարգավորում: Խորհրդարանի գործունեության շատ հարաբերություններ կարգավորվում էին պահի տակ ընդունված լուծումների, «հանրաճանաչ» իրավական ու տրամաբանական կանոնների և սկզբունքների հիման վրա:

Խորհրդարանական ընթացակարգերը խորհրդարանի աշխատանքի տարբերակված կարգերն էին: Խորհրդարանական ընթացակարգերից էին՝ ընտրված պատգամավորների լիազորությունների ստուգումը, խորհրդարանի մարմինների (նախագահության, հանձնաժողովների) կազմավորումը և դրանց գործունեության կարգը, ընդհանուր նիստերի օրակարգերի որոշումը, տարբեր բնույթի գործերի նախապատրաստման և քննարկման կարգը, որոշումների ընդունման կարգը: «Հայաստանի խորհրդարանի հրահանգը» տարբերակում էր հարցերի նախապատրաստման և քննարկման խորհրդարանական հետևյալ ընթացակարգերը՝ ա) օրենսդրական գործեր, բ) ոչ օրենսդրական գործեր, գ) ելևմտական տախտակների (բյուջեի) գործեր:

**2-րդ պարագրաֆում «Պատգամավորի իրավական կարգավիճակը Առաջին հանրապետությունում»** ատենախոսը հետազոտել է պատգամավորի կարգավիճակի իրավական աղբյուրները, պատգամավորների կարգավիճակի այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են անկախությունը, պատգամավորական անձեռնմխելիությունը, պատգամավորների իրավահավասարությունը և պատասխանատվությունը, «ոչ պրոֆեսիոնալ» խորհրդարանից անցումը «լրիվ պրոֆեսիոնալ» խորհրդարանի: Ուսումնասիրվել են նաև պատգամավորական ինդեմնիտետը, պատգամավորների լիազորությունների դադարման հիմքերը: Պատգամավորական ինդեմնիտետն Առաջին հանրապետությունում ընդունված էր երկու իմաստով՝ առաջին՝ պատշաճ վարձատրություն, գործունեության նյութական երաշխիքներ, երկրորդ՝ պատգամավորը պատասխանատվություն չէր կրում խորհրդարանում արված հայտարարությունների, քվեարկությունների համար, ինչպես նաև պատգամավորի նախաձեռնած օրինագծերի, որոշումների բովանդակության, հարցումների և հարցապնդումների համար: Պետաիրավական տեսությունը, որ դրված էր Առաջին հանրապետության խորհրդարանների գործունեության հիմքում, չէր ընդօրինակում «հրամայական մանդատի» ինստիտուտը: «Ազատ մանդատի» սկզբունքը չէր նշանակում պատգամավորի անկախություն իր կուսակցությունից, իսկ Հայաստանի խորհրդում՝ նաև պատգամավորին առաջադրած ազգային խորհուրդներից: Դրանց կամքին և պատվիրաններին չենթարկվելը կարող էր առիթ ծառայել պատգամավորներին Հայաստանի խորհրդից հետ կանչելու, իսկ Հայաստանի խորհրդարանի անդամներին սպառնում էր կուսակցական ցուցակով չառաջադրվելու վտանգը հաջորդ ընտրություններում: Հայաստանի պառլամենտում մանդատից զրկելն ուղղակիորեն հնարավոր չէր, բայց այստեղ կարող էին օգտագործվել կուսակցական կազմակերպության զանազան լծակները՝ կա՛մ պատգամավորին «կարգի բերելու», կա՛մ էլ նրա հրաժարականն ստանալու համար: Այդպիսով, կուսակցական և խմբակցային կարգապահությունը ներազդում էր

պատգամավորների կարգավիճակի վրա, որոշակիորեն «կաշկանդում» նրանց իրենց գործողություններում: Պատվամենտի պատգամավորները, ընտրված լինելով ազգաբնակչության կողմից համամասնական ներկայացուցչության սկզբունքով, երբ ամբողջ հանրապետության տարածքը մեկ ընտրական շրջան էր, անկախության առումով ավելի երաշխավորված էին, քան Հայաստանի խորհրդի անդամները, ուր կազմավորման հիմունքները պատգամավորին դնում էին կուսակցական կազմակերպության «մանկլավիկի» դերում, որովհետև կուսակցությունը և՛ նշանակում էր նրան, և՛ կարող էր ետ կանչել:

**Երկրորդ բաժնի «Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը»** 6-րդ գլխի՝ «Առաջին հանրապետության կառավարության ձևավորման կարգի առանձնահատկությունները» առաջին պարագրաֆում քննարկվել են Առաջին հանրապետության կառավարության ձևավորման կարգի վրա ազդող գործոնները և իրավական կարգավորման հիմնախնդիրը: Առաջին հանրապետության կառավարության ձևավորման կարգի, կազմի, կառուցվածքի և իրավասության առիթով առաջացող հարաբերությունները կարգավորող ընդհանուր նորմատիվ իրավական ակտ չի ընդունվել: Այդ հարցերը չէր կարգավորում նաև խորհրդարանի կանոնակարգը: Հանրապետության պետաիրավական շինարարության փորձի ուսումնասիրության հիման վրա հեղինակը դուրս է բերել կառավարության կազմավորման կարգի ընդհանուր գծերը: Կառավարության ձևավորման կարգերը երկու խորհրդարաններում իրենց հայեցակարգային հիմքով լինելով ընդհանուր, ունեն որոշակի տարբերություններ և նրբերանգներ:

**Երկրորդ պարագրաֆում «Հայաստանի Հանրապետության հռչակումը և առաջին կառավարության ձևավորումը»** հեղինակը ցույց է տալիս, որ հանրապետության առաջին կառավարությունը ձևավորվել է Թիֆլիսում, իսկ երկրորդ կառավարությունը՝ Երևանում՝ մինչև Հայաստանի խորհրդի նիստերի բացումը: Թիֆլիսյան և առաջին երևանյան կառավարությունների կազմավորման կարգի մանրամասնությունները մեզ հայտնի չեն: Ակնհայտ է մի բան, որ Հ. Քաջազունին Հայոց ազգային կենտրոնական խորհրդում ընտրվել է վարչապետ, որից հետո նա «հրավիրել» է միակուսակցական կառավարության անդամներին: Այդ կառավարությունները տարբերվում էին իրենց կառուցվածքով: Առաջինը ներառում էր չորս նախարար, իսկ երկրորդը՝ հինգ: Ավելացել էր արդարադատության նախարարությունը:

**Երրորդ և չորրորդ պարագրաֆներում** քննարկվել են կառավարության ձևավորման առանձնահատկություններն առաջին խորհրդարանում, 1918 թ. նոյեմբերյան կոալիցիոն համաձայնագրի իրավաբանական առանձնահատկությունները, կառավարության ձևավորման կարգը երկրորդ խորհրդարանում: Ընդհանրացնելով Հայաստանի խորհրդի կողմից կառավարության ձևավորման ընթացակարգերը, հեղինակը հիմնավորում է, որ Առաջին հանրապետությունում կառավարության ձևավորման կարգը հստակ իրավական կարգավորում չուներ: Առաջին օրենսդիր մարմնի գործունեության շրջանում խորհրդարանը նախ ընտրում էր վարչապետին, որի թեկնածությունն առաջադրում էին խորհրդարանական խմբակցությունները. բնականաբար, ամենամեծ խմբակցությունն էր որոշում այդ հարցը: Ընտրելով վարչապետին՝ խորհրդարանը նրան հանձնարարում էր կազմել կառավարություն: Խորհրդարանի արձանագրությունների ուսումնասիրությունից բխում է, որ կառավարության կառուցվածքը, այսինքն՝ նախարարությունների քանակը որոշված էր կոալիցիոն համաձայնագրով: Դրան համապատասխան վարչապետը «կառավարության կազմը» որպես ի գիտություն ներկայացնում էր Հայաստանի խորհրդին: Խորհուրդը կառավարության կազմի վերաբերյալ որոշում չէր ընդունում: Սակայն կառավարության խորհրդարանական ինվեստիտուրա (հաստատում), այնուամենայնիվ, կատարվում էր: Դա կառավարության ղեկլարացիայի (հայտարարագրի)՝ իրացվելիք քաղաքականության ծրագրի քննարկումն ու հաստատումն էր Հայաստանի խորհրդում, որից հետո կառավարությունը համարվում էր լրիվ կազմավորված և իր պարտականություններն ստանձնած: Սակայն, չունենալով ընդհանուր իրավական



կարգավորում, կառավարության ձևավորման կարգը երբեմն ձեռք էր բերում անհատական, յուրահատուկ իրավակարգավորումների բնույթ:

Առաջին հանրապետության կառավարության ձևավորման կարգը, կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների իրավական կարգավորման բացը Հայաստանի խորհրդում հանգեցնում էր պատեհապաշտ, երբեմն նաև արտառոց անհատական իրավական կարգավորման: Առաջին հանրապետությունում կառավարության լիազորությունների ժամկետի հետ կապված հարաբերությունները ևս հստակ իրավական կարգավորման ենթարկված չէին: Առաջին հանրապետության անկման շրջանում լիազորությունների դադարման հատուկ հիմք դարձավ կառավարական իշխանությունից հրաժարում-փոխանցումը: Կառավարությունն իր լիազորությունները վայր էր դնում գրավոր հրաժարականի ձևով, որն ընդունվում էր խորհրդարանի կողմից: Կառավարությունը շարունակում էր իր գործունեությունը՝ մինչև խորհրդարանը կձևավորեր նոր կառավարություն:

**7-րդ գլխի «Առաջին հանրապետության կառավարության կառուցվածքի, կազմի, գործունեության կարգի առանձնահատկությունները» 1-ին և 2-րդ պարագրաֆներում** հետազոտվել են Առաջին հանրապետությունում կառավարության կառուցվածքի, կազմի և անդամների կարգավիճակը, գործունեության կարգը և սկտերը: Հանրապետության կառավարության կառուցվածքը և թվական կազմը պետականության կայացմանը զուգընթաց դրսևորում էր կոշտ օրենսդրական կարգավորման միտում: Ճիշտ է, սկզբնական շրջանում կառավարության կառուցվածքը և թվական կազմը չէր սահմանվում հատուկ օրենք ընդունելու միջոցով, բայց, այնուամենայնիվ, հարցի որոշողն, ինվեստիտուրայի միջոցով, օրենսդիր մարմինն էր:

Կառավարության անդամների անձնական-անհատական հավաքագրումը կատարում էր խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, որն իր կարգավիճակում զուգատեղում էր գործադիր իշխանության գլխի բոլոր լիազորությունները և պետության գլխի որոշ լիազորություններ: Առաջին հանրապետության գոյության ընթացքում վարչապետներ են եղել. 1) **Հ. Քաջազունին**՝ 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր, իսկ այնուհետև առաջին կռալիցիոն կառավարությունում 1918 թ. նոյեմբերի 4-ից մինչև 1919 թ. օգոստոսի 5-ը, 2) **Ա. Խատիսյանը**՝ 1919 թ. օգոստոսի 7-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը, 3) **Հ. Օհանջանյանը**՝ 1920 թ. մայիսի 5-ից մինչև նոյեմբերի 23-ը, 4) **Մ. Վրացյանը**՝ 1920 թ. նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 2-ը: Վարչապետներից «երկարակյացը» Ա. Խատիսյանն էր, ով 1919 թ. ապրիլի 16-ից մինչև օգոստոսի 5-ը վարչապետի պաշտոնակատարն էր, իսկ օգոստոսի 7-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը վարչապետը:

Նոր ձևավորվող օրենսդրության պայմաններում վարչապետի և կառավարության անդամների կարգավիճակը շատ հարցերում անորոշ էր: Օրենսդրությունը որոշակի պահանջներ չէր ներկայացնում կառավարության անդամներին, նույնիսկ քաղաքացիության պահանջը: Միակ հստակ պահանջը դա նախարարի, նրա օգնականի պաշտոնների ու պատգամավորի մանդատի զուգատեղման արգելքն էր:

Հանրապետությունում երկու անգամ ձևավորվել է կռալիցիոն կառավարություն՝ 1918 թ. նոյեմբերին, 1920 թ. նոյեմբերին: Այդ կառավարություններում նախարարական պորտֆելների բաշխումը կատարվում էր կռալիցիայի մեջ մտնող կուսակցությունների խորհրդարանական խմբակցությունների միջև կնքված համաձայնագրերով:

**8-րդ գլուխը՝ «Կառավարությանը կից գործող մարմինների, նախարարությունների, գործակալությունների համակարգն Առաջին հանրապետությունում» բաղկացած է 5 պարագրաֆներից, որոնցում հետազոտվել են նախարարների փոքր խորհրդի, իրավաբանական խորհրդակցության, ՀՀ հեռագրական գործակալության և տեղեկատվական բյուրոի ստեղծման, կազմակերպության, կառուցվածքի, գործունեության հիմնահարցերը, նախարարությունների համակարգի ձևավորման և զարգացման գործընթացը, ինչպես նաև Հայաստանի պետական բանկի ստեղծումը և պետական կառավարման հա-**

մակարգի հետագա վերակառուցման ծրագրերը: Հեղինակի կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ հանրապետության կայացմանը զուգընթաց գործադիր իշխանության մարմինների համակարգը բարդանում, ծավալվում և ճյուղավորվում էր: Դա օրինաչափ երևույթ էր, քանզի պետական կառավարման խնդիրներն օրավուր առաջ էին բերում նոր գործառույթների իրականացման անհրաժեշտությունը, իսկ սա էլ իր հերթին պահանջում էր կատարող սուբյեկտի հիմնադրում: Եթե հանրապետության գոյության սկզբնական շրջանում կառավարությունը գոյություն ուներ և գործում էր լոկ որպես Մինիստրների խորհուրդ և դրա աշխատակազմ, ապա հետագայում աստիճանաբար ստեղծվեցին կառավարությանը սպասարկող գործառույթներ իրականացնող, նրան կից գործող հատուկ մարմիններ և գործակալություններ: Որպես այդպիսիք էին իրավաբանական խորհրդակցությունը, Նախարարների փոքր խորհուրդը, Հայաստանի հեռագրական գործակալությունը և տեղեկատվական բյուրոն: Գործադիր իշխանության համակարգում առանձնահատուկ տեղ էին գրավում նախարարությունները: Ստեղծվելով գրեթե ոչնչից, առանց որևէ կազմակերպակառուցվածքային և նյութական նախադրյալների՝ 1920 թ. դրությամբ գործադիր իշխանության համակարգում գործում էին ներքին գործերի, արտաքին գործերի, զինվորական, արդարադատության, ֆինանսների, հանրային կրթության և արվեստի, հաղորդակցության, աշխատանքի, խնամատարության և վերաշինության, գյուղատնտեսական և պետական գույքերի նախարարությունները:

Գործադիր իշխանության համակարգի մեջ մտնող բոլոր մարմիններին բնորոշ կազմակերպման ու գործունեության սկզբունքն օրինականությունն էր:

**9-րդ գլխի՝ «Առաջին հանրապետության կառավարության իրավասության բնույթը և ընդհանուր ոլորտները» 1-ին պարագրաֆում** վեր են հանվել հանրապետության կառավարության իրավասության բնույթը և իրավական կարգավորման հարցերը: Առաջին հանրապետության կառավարության իրավասությունը չունեի որևէ իրավական ամրագրում, սակայն ակնհայտ է, որ դրա իշխանությունը՝ որպես գործադիր-կարգադրիչ, ուներ ենթաօրենսդրական նշանակություն: Արխիվային նյութի հետազոտությունը թույլ է տալիս կառավարությունը բնութագրել որպես երկրի ընթացիկ կառավարումն իրականացնող ընդհանուր իրավասության գործադիր-կարգադրիչ մարմին, որի իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցերը, որքանով որ դրանք չէին վերապահված մյուս պետական մարմինների իրավասությանը: Այս հիմքով հետագա պարագրաֆներում ներկայացվում են կառավարության իրավասությունը ըստ առարկայական սկզբունքի՝ վեր հանելով ամեն մի ոլորտում գործունեությունը:

**2-րդ պարագրաֆում** հետազոտվել է կառավարության իրավասությունը քաղաքական ղեկավարման և ընդհանուր կառավարման ոլորտում: Կառավարությունն առաջատար դեր էր խաղում պետության արտաքին և ներքին քաղաքականության մշակման, ձևավորման և կենսագործման գործում: Միայն «գործադիր իշխանություն» ձևակերպումը չի արտահայտում կառավարական իշխանության բնույթը, քանի որ կառավարությունն ըստ էության որոշում և ղեկավարում էր երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը, քաղաքացիական և զինվորական վարչությունը, երկրի պաշտպանությունը: Այսպիսի ենթադրության հիմքը Հայաստանի խորհրդի, իսկ այնուհետև Հայաստանի պառլամենտի ու կառավարության փոխհարաբերությունների պատմությունն է, որի ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ կառավարությանն էր վերապահված քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը և ընդհանուր ղեկավարությունը: Այդպիսով կառավարության, որպես գործադիր իշխանության մարմնավորողի, հիմնական գործառույթն ընդհանուր քաղաքականության առաջարկությունն էր, դրա ձևակերպումը, ինվեստիտուրան խորհրդարանում և, անշուշտ, կենսագործումը կյանքում: Այդ գործառույթի իրականացման իրավաբանական ձևը նոր ձևավորվող կառավարության հայտարարագիրն (ղեկլարացիան, հայտագիրը, հռչակագիրը) էր, որը, որպես կառավարության գործողությունների քաղաքական ծրագիր, հաստատվում էր խորհրդարանում:

Ծիշտ է, հայտարարագիրն անցնում էր ինվեստիտորայի գործընթաց, սակայն, այն ավելի շատ քաղաքական փաստաթուղթ էր, քան իրավական: Այդ փաստաթղթի հիմնական նշանակությունը բնակչության լայն խավերի առջև կառավարության հեղինակության ապահովումն էր, իհարկե, նաև խորհրդարանական մեծամասնության: Այն կարող էր առաջ բերել քաղաքական երկակի հետևանքներ: Նախ հայտարարագիրը պետք է անցներ հաստատման գործընթաց. նորընտիր վարչապետը կառավարությունը կազմելուց և այն խորհրդարանին ներկայացնելուց հետո՝ կառավարության անունից խորհրդարանի հավանությանն էր ներկայացնում նաև ապագա կառավարության գործունեության ծրագիրը՝ վստահության քվե ստանալու համար: Ծրագրի հաստատումը խորհրդարանի կողմից նշանակում էր կառավարության վերջնական հաստատում՝ ինվեստիտորա: Այնուհետև հայտարարագրի ծրագրերը կյանքի չկոչելու կամ անարդյունավետ կենսագործելու համար կարող էր առաջանալ կառավարության քաղաքական պատասխանատվության հարցը, եթե հանկարծ կառավարությանն այդ կապակցությամբ անվստահության քվե հայտնվեր: Առաջին հանրապետության հինգ կառավարություններից հայտարարագիր ունեցել են միայն 1-ին, 3-րդ և 5-րդ կառավարությունները: «Բյուրո կառավարությունը» խորհրդարանի վստահությունը և արտակարգ լիազորությունները ստանալուց հետո հրապարակեց միայն հանրապետության ազգաբնակչությանն ուղղված «Կոչ»: Կառավարությունների հայտարարագրերից համակարգված և հետևողականորեն ծրագրային փաստաթղթի բնույթ ուներ Հ. Քաջազունու առաջին կառավարության դասական կառուցվածքով հայտարարագիրը:

**3-րդ պարագրաֆում** հետագոտվել են կառավարության լիազորություններն օրինաստեղծագործության ոլորտում: Բացի գործադիր կանոնակարգող իշխանությունից, Առաջին հանրապետության կառավարությունն ուներ լայն լիազորություններ, որոնք թույլ էին տալիս նրան լուրջ կերպով ազդել օրենսդրական գործընթացի վրա: Այդ ազդեցության լծակները երկուսն էին՝ առաջին, կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, երկրորդ, կառավարությանն օրենսդիր մարմնի իրավագործությունների փոխանցման արդյունքում նրա կողմից իրականացվող պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը: Կառավարության կողմից օրենսդրական գործառույթի իրականացման թաքնված կառուցակարգ էր պառլամենտական հանձնաժողովների միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը, ինչպես նաև կառավարության և խորհրդարանի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովները, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը:

**10-րդ գլխի՝ «Կառավարության իրավասությունը և գործունեությունը պետական ապարատի գործադիր ենթահամակարգի կազմակերպման և կառավարման ոլորտում» 1-ին պարագրաֆում «Պետական կառավարման գործադիր համակարգի հիմնադրումը և դրա կառավարման գործառույթները»** հետագոտվել է պետական ապարատի կազմակերպումը և դրա գործունեության ղեկավարումը՝ որպես կառավարության գործունեության կարևորագույն ուղղություն: Այն հիմնական տեղ էր գրավում խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետության կառավարության իրավասության համակարգում: Եթե սովորական պայմաններում այս ոլորտում կառավարության իրավասությունը ենթադրում է պետական ապարատի վերակազմակերպում, նախարարությունների և գերատեսչությունների գործունեության համակարգում և ղեկավարում, պետական ծառայության կանոնակարգում և այլն, ապա Առաջին հանրապետության պայմաններում այս ուղղությամբ առաջ էր գալիս կառավարության գործունեության հիմնական ուղղություն, որը կարելի է անվանել հիմնադիր: Հենց այս գործառույթի իրականացման իրական արդյունքներն էին նախադրյալ ծառայում մնացած բոլոր ոլորտներում կառավարության գործունեության համար: Այդ գործառույթը ենթադրում էր պետական կառավարման գործադիր համակարգի հիմնադրում:

Այնուհետև քննարկվում են պետական գործադիր ապարատի կազմակերպումից հետո կառավարության ձառնարկած քայլերը և իրավական ձևերը՝ դրա գործունեությունն անմիջականորեն ղեկավարելու, առանձին նախարարությունների ու գերատեսչությունների, քննիչ, միջվարչական, արտակարգ հանձնաժողովների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատման, գործադիր մարմինների ու կառույցների գործունեության փոխհամաձայնեցման, համակարգման և ղեկավարման ուղղությամբ: Կառավարչական ապարատի ձևավորմանը զուգընթաց կառավարությունը սկսեց իրականացնել գործադիր մարմինների միջև իրավասությունների, գործառույթների, տնօրինման ոլորտների սահմանազատման գործունեություն:

**2-րդ պարագրաֆում** քննարկվել են պետական ծառայության համակարգի հիմնադրման, կանոնակարգման և դրա սոցիալական երաշխիքների ստեղծման հիմնահարցերը: Չունենալով պատրաստի պետական ապարատ և, իհարկե, պատշաճ խմբաքանակի պետական ծառայողներ, որոնցով կարելի կլիներ ձևավորել նորակազմ պետական ապարատը, կառավարության համար կարևորագույն խնդիր էր դառնում պետական ծառայության իրավական ինստիտուտի հիմնադրումը, պետական ծառայության հարաբերությունների կանոնակարգումը և պետական ծառայության ընթացիկ կառավարումը: Առաջին հանրապետության կառավարությունն այս ոլորտում ծավալել է գործունեություն մի քանի ուղղություններով՝ ա) օրենսդրական, նախ խորհրդարանների միջոցով, այնուհետև իր իսկ օրենսդրական գործունեության միջոցով, այն ժամանակաշրջաններում, երբ կառավարությունն օժտված էր օրենսդրական լիազորություններով, բ) ենթաօրենսդրական, այսինքն՝ պետական ծառայության հարաբերությունների կարգավորում կառավարական կանոնակարգող որոշումների ընդունման միջոցով: Սկզբնական շրջանում կառավարությունն այս ոլորտում չունեի քիչ թե շատ մշակված ծրագիր, այլ գործում էր պատեհապաշտ միջոցառումների իրականացմամբ: Դրանք հիմնականում ուղղված էին պետական ծառայողների նյութական և սոցիալական դրության բարելավմանը, քանզի արժեզրկման ահավոր տեմպերը ի չիք էին դարձնում նրանց աշխատավարձերը: 1918-1919 թթ. ընթացքում ընդունված օրենքների բովանդակությունը հաստատում է, որ կառավարությունը կարևորել էր գործունեության երկու ուղղություններ՝ պետական կառավարման համապատասխան մարմինների հիմնադրում, դրանց հաստիքների սահմանում, բյուջետային ֆինանսավորման ապահովում: Հաջորդ առաջնահերթ գործառույթը պետական ծառայողների նյութական դրության ապահովումն էր: Այն որպես առաջնահերթություն նպատակ ունեի նախ պահպանել պետական ապարատում արդեն առկա ծառայողներին և երկրորդ՝ գրավել կարող, գիտակ անձանց (և՛ հանրապետությունում, և՛ հանրապետությունից դուրս գտնվող) պետական ծառայության: Ահա թե ինչու 1918-1919 թթ. ընդունված պետական ծառայության վերաբերող օրենքները հիմնականում ուղղված էին պետական ծառայողների աշխատավարձերի կարգավորմանը: Ա. Խատիսյանի միակուսակցական կառավարությունն ավելի ծրագրային քաղաքականություն սկսեց պետական ծառայության ինստիտուտի կարգավորման հարցում:

**3-րդ պարագրաֆում** քննարկվել են գործադիր իշխանության համակարգում օրինականության հաստատման ճիգերը, ներառյալ վարչական արդարադատության ինստիտուտի հիմնադրումը: Մեծ ջանքերի և ծախսերի գնով հիմնադրված պետական կառավարման մարմինների համակարգը և դրա համալրումը քիչ թե շատ կարող ծառայողներով առաջ բերեցին նոր հիմնախնդիր, այն է՝ պետական ծառայողի և պաշտոնյայի կերպարը: Նշված հիմնախնդիրը ձեռք էր բերել քաղաքական մեծ նշանակություն, որովհետև վարկաբեկում էր իշխանությունը, սպառնում էր պետականության գոյությանը: Չնայած գործադրվող ջանքերին՝ պաշտոնեական իրավախախտումները և հանցագործությունները համաճարակի պես տարածվել էին ամբողջ երկրում, պետական կառավարման բոլոր մարմիններում անխտիր և իսկական չարիք էին դարձել: Պաշտոնեական

հանցագործությունների տարածման բարձր մակարդակի պատճառը հիմնականում ծանր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամն էր, որ անմխիթար կացության էր հասցրել պաշտոնյաներին: Բացի այդ պաշտոնեական և ընդհանուր հանցավորությանը մեծապես նպաստում էին նաև հասարակության ընդհանուր բարոյալքումը և իրավագիտակցության անկումը, ալան-թալանի հոգեբանության արմատավորումը, որոնք պայմանավորված էին հինգ տարվա պատերազմներով, հեղափոխություններով, անպատժելիությամբ: Նշված պատճառների շարքում իր ուրույն տեղն ունեն իրավական կայացած համակարգի, ինստիտուցիոնալ մանրամասն իրավական կարգավորման, պատշաճ ընթացակարգերի բացակայությունը:

Պետական կառավարման ոլորտում օրինականության հաստատման միջոցներից մեկն էլ վարչական արդարադատության համակարգի ստեղծումն էր: Օրենսդրական առումով, կարծես թե, ամեն ինչ արվել է հաշտարար դատարանների գործունեությունն արդյունավետ դարձնելու, այն պատշաճ և բնակչությանը մոտ կանգնած դատական ատյանի վերածելու համար: Սակայն իրականության մեջ այդ քայլերն անբավարար էին, որովհետև, ինչպես ցույց են տալիս արխիվային փաստաթղթերը, հաշտարար արդարադատությունը, հետևաբար նաև վարչականը, հեռու էր բավարար գնահատվելուց: Հաշտարար դատարանների անգործությունը պայմանավորված էր նաև օբյեկտիվ կարգի հանգամանքներով՝ բնակչության զինվածությամբ, բնակավայրերի առկայությամբ, որտեղ մուտք չէին գործում ուժային կառույցները, միլիցիան (էլ ուր մնաց հաշտարար դատավորը կամ դատական քննիչը): Այդ դատարանների գործունեության վրա բացասական էին ազդում նաև զանազան արտակարգ լիազորություններով օժտված պետական մարմինները, դրանց միջամտությունն արդարադատության իրականացման գործընթացին: Մինչդեռ միայն դատավորի անկախության հիմնարար սկզբունքի պահպանման և ապահովման դեպքում էր հնարավոր հաշտարար և մյուս դատարանների արդյունավետ գործունեությունը:

**10-րդ գլխի 4-րդ, 5-րդ և 6-րդ պարագրաֆներում** հերթականորեն և մանրագնին հետազոտվել են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են պետական ծառայողների իրավական պատասխանատվության կարգի և պայմանների խստացումը երկրորդ կառավարության օրոք (1919 թ.), պետական կառուցակարգի ազգայնացման (հայացման) քաղաքականությունը և դրա հետևանքները, «Հայրենիքի փրկության կառավարության» արտակարգ միջոցառումները պետական ծառայության ոլորտում (1920 թ.): Ատենախոսը ցույց է տվել, որ պետական ծառայողների և աշխատողների նյութական դրության ապահովումը որպես առաջնահերթություն նպատակ ուներ նախ պահպանել պետական ապարատում արդեն առկա ծառայողներին և երկրորդ՝ գրավել կարող, գիտակ անձանց պետական ծառայության: Ահա թե ինչու 1918-1919 թթ. ընդունված պետական ծառայությանը վերաբերող օրենքները հիմնականում ուղղված էին պետական ծառայողների աշխատավարձերի, սոցիալական ու նյութական ապահովության հարաբերությունների կարգավորմանը: Այսպիսով, սովորական պայմաններում 1918-1919 թթ. ընթացքում պետական կառավարման կառուցակարգը և նրա բաղադրատարրերից մեկը՝ պետական ծառայության ինստիտուտը կայանում էր, չնայած բարդություններին ու դժվարություններին: Այս ժամանակամիջոցում կառավարությունը փորձում էր աստիճանական, իրավական ճանապարհով կառուցել և կայացնել պետական կառուցակարգը: Սակայն, արտակարգ իրադրությունը, արտաքին և ներքին կացության բարդությունները, խռովություններն ու տնտեսական վատթար վիճակը, ֆինանսական խորը ճգնաժամը դրդում էին դիմելու արտակարգ, արտասովոր միջոցառումների, հատկապես պետական ծառայության իրավական կարգավորման, պետական ծառայողների վրա հսկողություն սահմանելու հարցում:

**11-րդ գլխի «Կառավարության իրավասությունը և գործունեությունը երկրի պաշտպանության և արտաքին քաղաքականության ոլորտներում»** 1-ին պարագրաֆում հե-

տագոտվել են երկրի պաշտպանության ոլորտում կառավարության իրավասության առանձնահատկությունները: Առաջին հանրապետության՝ որպես նորահռչակ պետության առջև կանգնած խնդիրներից առաջնայինն ազգային պետականության պաշտպանության գործառույթն էր, ինչը պայմանավորված էր պատմաքաղաքական բազում գործոններով: Ազգային պետականության ամրապնդման, նրա անվտանգության ապահովման, պատշաճ պաշտպանության պայմաններից մեկը պետական իշխանության գործունեությունն էր: Մյուսը՝ հանրապետության բնակչության անվերապահ նվիրվածությունը և անձնագոհությունն անկախության գաղափարին, երկրի պաշտպանությանը: Երկու գործոնները, որպես մեդալի տարբեր կողմեր, երկրի պաշտպանության կարևորագույն նախապայմաններն են:

Հետագոտելով նշված նախապայմանները և դրանց արդյունավետության հարաբերակցությունը Առաջին հանրապետությունում, ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ երկրի պաշտպանության հարցում ողջ պատասխանատվությունն ընկած էր գործադիր իշխանության վրա, ինչը պայմանավորված էր պետական կառուցակարգի երկու յուրահատկություններով՝ ա) կառավարությունը որոշակի շրջաններում իրականացնում էր օրենսդրական լիազորություններ, բ) այն ժամանակամիջոցներում, երբ կառավարությունը չունեւ օրենսդրման իրավունք, խորհրդարանի հայկական խմբակցությունները կառավարությանը երկրի պաշտպանության ոլորտում օժտում էին արտակարգ օրենսդրական լիազորություններով: Պետական կառուցակարգի այդ երկու առանձնահատկությունները պայմանավորել էին այն հանգամանքը, որ այստեղ գործադիր իշխանության մարմինները երկրի պաշտպանության ոլորտում օժտված էին լայն առարկայական և գործառույթային իրավասությամբ: Կառավարության իրավասությունն ինչպես այլ ոլորտներում, այնպես էլ երկրի պաշտպանության չունեւ հստակ իրավական ամրագրում: Պաշտպանության ոլորտում կառավարության իրավասությունն ընդգրկում էր բոլոր այն հարցերը, որոնք չէին վերապահված խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը:

**11-րդ գլխի 2-րդ, 3-րդ, 4-րդ պարագրաֆներում** հետագոտվել են երկրի պաշտպանության համար կառավարության քաղաքական պատասխանատվության և բանակային շինարարության հիմնահարցերը, զորահավաքի և զորացրման հայտարարման լիազորությունների հիմնախնդիրը, դասալքության դեմ տարված պայքարը, պատերազմ և ռազմական դրություն հայտարարելու և դրանց հետ կապված այլ լիազորությունների հիմնախնդիրը: Հետագոտության արդյունքում ատենախոսը եզրակացնում է, որ կառավարությունը պատասխանատու էր երկրի պաշտպանության գործի համար և դրան էին ուղղված նրա ներքին և արտաքին քաղաքականությունը: Սակայն բացի այդ, նոր ձևավորվող կառավարությունը հայտարարում էր նեղ իմաստով երկրի պաշտպանության իր քաղաքական ծրագիրը: Ծրագիրը վերաբերում էր երկրի զինված ուժերի կազմակերպմանը, վերակառուցմանը, այլ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված հայոց բանակի կայացմանը:

**11-րդ գլխի 5-րդ պարագրաֆում՝ հետագոտվել են «Զինված ուժերի քաղաքական չեզոքության և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների իրավական ամրագրման հիմնախնդիրը»:** ԶՈւ-ի նախանշանակությունն ու գործառույթները չունեին հստակ իրավական ամրագրում: Օրենսդրական նյութի և կառավարական ակտերի մանրագնին հետագոտությունը ցույց է տալիս, որ բանակի առաքելությունը երկրի անվտանգության և պաշտպանության ապահովումն էր: Հանրապետությունում որդեգրված էր ԶՈւ-ի կարգավիճակի, դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված էր իշխանությունների տարանջատման և քաղաքական համակարգի սուբյեկտների ու ԶՈւ-ի լիազորությունների սահմանազատման վրա: Այդ մոդելն ուներ միայն ընթացիկ օրենսդրական կարգավորում: ԶՈւ-ի քաղաքական չեզոքության և ԶՈւ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության

սկզբունքները բառացիորեն ամրագրված չէին օրենսդրության մեջ, սակայն կենսագործված էին իրավական կարգավորման կառուցակարգում: Ընդ որում՝ հատուկ օրենսդրական կարգավորում էր ստացել ՁՈւ-ի քաղաքական չեզոքության սկզբունքը՝ զինվորականների ընտրական իրավունքների սահմանափակմամբ, ինչը նույնիսկ մեր օրերի համար բավականին «կոշտ» մոտեցում է և երաշխիք է ՁՈւ-ի քաղաքական չեզոքության իրավական կարգավորման հարցում:

Արդի աշխարհում գործում է ՁՈւ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների և ՁՈւ-ի լիազորությունների կոշտ սահմանազատման վրա: ՀՀ բարեփոխված Սահմանադրությունը, հստակ և ուղղակի կերպով ամրագրում է ինչպես ՁՈւ-ի սահմանադրական առաքելությունը և գործառույթները, այնպես էլ դրանց կազմակերպման ու գործունեության երկու կարևորագույն՝ ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքները:

**11-րդ գլխի 6-րդ պարագրաֆում ամփոփվել են** պաշտպանական քաղաքականության արդյունքները: Առաջին հանրապետության կարևորագույն գործառույթներից էր երկրի պաշտպանությունը, որի իրականացումը ենթադրում էր երկրի պաշտպանության բնագավառի կառուցում և կառավարում, նպատակամղված էր հատուկ կառուցվածքային կազմավորման՝ հայկական բանակի կայացմանը: Պաշտպանական համակարգի գործառութավորումը կատարվում էր ռուսական և հանրապետական իրավական ակտերի հիման վրա: Պաշտպանական համակարգի կառավարման ենթադրվող լիազորությունների և պատասխանատվության մեծագույն մասը կենտրոնացված էր գործադիր իշխանության համակարգում:

Հայաստանի երրորդ հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն անտեսում էր մշակութային, հոգևոր-բարոյական, ազգային ավանդույթների և համակեցության կանոնների պաշտպանությունը՝ որպես ազգային անվտանգության նպատակ, և դրանով պայմանավորված բնակչության հոգևոր-բարոյական-իրավական դաստիարակության պետական քաղաքականության մշակումն ու կենսագործումը՝ որպես ազգային անվտանգության նպատակներով պայմանավորված խնդիր: Զննարկումների արդյունքում վերափոխված և ընդունված տարբերակում «բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը» ճանաչվում է ազգային անվտանգության ներքին սպառնալիք: Սակայն ներքին անվտանգության ռազմավարության նպատակների մեջ հստակ չի առանձնացվել այս ոլորտում գործողությունների ծրագիրը: Ինչքան էլ որ մեծ լինի նյութական-տնտեսական գործոնների դերը բարեփոխումների, անցման շրջանների, հասարակական զարգացման համար, այնուհանդերձ, անցյալ դարի և նոր հազարամյակի փորձը ցույց է տալիս մարդու բարոյահոգևոր որակների կարևորությունը: Հայրենասիրությունը բնական հատկություն չէ, այլ կոփվող և դաստիարակվող: Եթե այս տեսանկյունից ստուգող հայացքով դիտարկենք հանրային կրթության բովանդակությունը, ապա մենք կտեսնենք, որ դրանում հայրենասիրական և իրավական դաստիարակությունն անտեսված են:

**11-րդ գլխի 7-րդ պարագրաֆում՝ «Պաշտպանունակությունը որպես պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության սկզբունք»** ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր երկրի պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության հիմքում ընկած սկզբունքներն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորվածություն և հաշվի առնելով Առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության փորձը, հայկական երկու պետությունների արդի առանձնահատկությունները և աշխարհաքաղաքական կացությունը և կատարելով պատմության դասերի իմաստավորում, ատենախոսն առաջարկում է կատարել տեսական վերադասավորում և Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք ճանաչել պաշտպանունակությունը:

Պաշտպանունակությունը ճանաչելով պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք՝ չի նշանակում որ տեղի է ունեցել «պաշտպանական գործառույթ» տեսական կատեգորիայի սովորական վերանվանում: Դրանք էականորեն տարբերվում են: Պաշտպանական գործառույթ կատարում է ցանկացած պետություն, որը սակայն կարող է չլինել պաշտպանունակ, որովհետև գործառույթը ընդհամենը գործունեության ուղղություն է, որով գործողը կարող է լինել ոչ ունակ: Մինչդեռ պաշտպանունակությունը՝ որպես սկզբունք այլ սկզբունքների հետ միասին ղեկավար, ելակետային դրույթ է և պայմանավորում է պետական ապարատի կազմակերպումը և գործունեությունը, առաքելությունը:

**11-րդ գլխի 8-րդ պարագրաֆում** հետազոտվել են արտաքին քաղաքական լիազորություններն օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև բաշխման հիմնահարցերը: Պետության արտաքին քաղաքականության ոլորտում կառավարության իրավասությունը սովորաբար մեկնաբանվում է որպես ընդհանուր քաղաքական ղեկավարման գործառույթից ածանցված լիազորությունների համակցություն: Արդի շրջանում շատ հազվադեպ է այս ոլորտում կառավարության լիազորությունների սահմանադրական ամրագրումը: Ակնհայտ է, որ դարասկզբին ևս դա հազվադեպ հանդիպող երևույթ էր, իսկ նորակազմ պետության համար այդ ոլորտում իրավական կարգավորման հիմքերի բացն արտառոց չէր: Դասական պետությունագիտության դիրքերից ելնելով, գործնական կոչված արտաքին քաղաքական գործունեությունը գործադիր իշխանության գործառույթ է: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ամեն տեղ կառավարությունն այդ գործունեությունն իրականացնում է խորհրդարանի վերահսկողության ներքո, իսկ նման կառուցակարգեր առկա էին նաև հանրապետությունում:

Արտաքին քաղաքականության ոլորտում կառավարության իրավասությունն ընդհանուր քաղաքական ղեկավարման գործառույթից ածանցված լիազորությունների համակցություն էր, որը նորակազմ պետությունում չունեի իրավական հստակ ամրագրում: Հետևաբար այդ ոլորտում կառավարության լիազորությունները շատ հայեցողական էին, հատկապես, որ չկար սահմանադրական կարգավորում: Այդ ամրագրման կարևոր նշանակությունը արտաքին քաղաքականության կայունությունն է: Այս համատեքստում աչքի է ընկնում ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդ., որ սահմանում է ՀՀ արտաքին քաղաքականության նպատակը և սկզբունքները, իսկ այլ հոդվածները՝ պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում:

**12-րդ գլուխը՝ «Արտակարգ օրենսդրությունը և արտակարգ կառավարման ձևերն Առաջին հանրապետությունում»** կազմված է յոթ պարագրաֆներից, որոնցում մանրագնին հետազոտվել են՝ ա) պետական անվտանգության սպառնալիքները և արտակարգ միջոցառումների կիրառման իրավական կարգավորման հիմնահարցերը, բ) արտակարգ կամ ուժեղացված պահպանության դրությունը, տեղական կառավարման այլ արտակարգ ձևերը (գեներալ-նահանգապետությունը, զինվորական շրջանը, գլխավոր պետի ինստիտուտը), գ) գործադիր իշխանության «պարտադիր որոշումների» ինստիտուտը, դ) արտակարգ լիազորություններով կոմիսարների ինստիտուտը (1918-1919 թթ.՝ դասալքության դեմ պայքարի կոմիսարը, Երևան քաղաքի պետի պաշտոնը, «զինահավաքի հատուկ կոմիսարը», 1920 թ.՝ «սպեկուլյացիայի դեմ կռվելու» կոմիսարները, Դարալագյազի արտակարգ կոմիսարը և այլն), ե) ապրանքների և մթերքների ազատ շրջանառության սահմանափակումը, զ) մահապատժի սահմանման և կիրառման հիմնախնդիրները, է) դատական իշխանության «պատշաճ» կարգերից անցումն արտակարգ կարգավորումների կառավարության օրենքների միջոցով (դատադատախազաբննչական պաշտոնյաների աշխատավարձերի ցածրացումը, դատավորների անփոփոխելիության սկզբունքի վերացումը):

Արտակարգ իրավիճակներում, հայրենիքին սպառնացող վտանգի պայմաններում պետական իշխանությունը պետք է ունենա հնարավորություն և իրավազորություն կիրառելու



արտակարգ միջոցառումներ: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետություններում արտակարգ միջոցառումների, օրինակ՝ հատուկ դրություն մտցնելու իրավունքը սովորաբար պատկանում է կառավարությանը, որն այդ իրավունքն իրականացնում է ինքնուրույն կամ ձևականորեն՝ խորհրդարանի հետ միասին: Այս հարաբերությունների իրավական կարգավորումը, արտակարգ լիազորությունների բաշխման հիմնահարցը, կիրառման պրակտիկան բավականին խճճված էր:

Գործադիր իշխանության մոտ անընդհատ նկատվում էր անվերջ ցանկությունը՝ ամեն ինչ անել ու կառավարել արտակարգ միջոցների ձեռնարկմամբ: Դրան հակառակ խորհրդարանները ձգտում էին զսպել կառավարության այդ անհագուրդ ցանկությունը: Այդ են վկայում կառավարության ձեռնարկած մի շարք արտակարգ միջոցառումների չվավերացվելն օրենսդիր կողմից, պատգամավորների գործադիրին ներկայացված հարցումների ու հարցապնդումների բնույթը, երկու խորհրդարանների ու կառավարությունների օրենքների համեմատությունը:

Արտակարգ քայլերը, շատ դեպքերում բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ նաև անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով չմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավակարգի հաստատման, պետական կառավարման նպատակների արագ, պատշաճ և իրավական կենսագործմանը: Օրինակ՝ հանրապետությունում ստեղծված բարդ կացությունը և քրեաժին գործոնների ծավալումն ու հանցավորության մակարդակի աճը պայմանավորեցին մարդասիրական դիրքորոշման փոփոխությունը, և հանրապետությունում օրենսդրական ճանապարհով ներմուծվեց մահապատիժ: Նպատակը պատժի ընդհանուր կանխման գործառույթի ուժեղացումն էր, սակայն այն չիրականացվեց: Այսպես, չնայած մահապատժով պատժվող զինվորական հանցագործությունների լայն շրջանակին, հայկական բանակում դասալքությունը տարածված երևույթ էր, իսկ 1920 թ. աշնանը թուրքերի հետ պատերազմում գորքն իրեն դրսևորեց շատ անկարգապահ: Նույն եզրահանգումը կարող ենք անել նաև պետական և պաշտոնական հանցագործությունների վերաբերյալ:

**Երրորդ բաժինը՝ «Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը»** կազմված է 4 գլուխներից: 13-րդ գլխի՝ «Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը» 1-ին պարագրաֆում «Հանրապետության առաջին կառավարության «Հայտարարագիրը» և դատական քաղաքականության հիմնահարցերը» հետազոտվել են դատարանների կազմակերպական կառույցը Հայաստանում Ռուսական Կայսրության օրոք, իսկ այնուհետև կայսրությունից մնացած և մինչև Առաջին հանրապետության հռչակումը ստեղծված արտակարգ դատարանները: Այս համատեքստում վերլուծության են ենթարկվել առաջին կառավարության «Հայտարարագիրը» և դատական քաղաքականության հիմնահարցերը: Կառավարությունը խուսափել էր ամպագոռգոռ ծրագրերից և, չ. Քաջագունու խոսքերով ասած ելակետ էր ունեցել հետևյալ դիրքորոշումը. «Նախ խաղաղություն, նոր բարենորոգումներ, մեր կառավարությունը իրոք ձգտում է ստեղծել ժողովրդի համար տարրական իրավակարգ, որովհետև նախքան քաղաքացիական ազատություններն ապահովելը պետք է ապահովել կյանքը, նախքան սահմանադիր ժողովը հրավիրելը պետք է ապահովել ազատ խոսքը և այլն»:

Արդարադատության ոլորտում կառավարության «հայտարարագրի» ձևակերպումները վերացական էին: Դրանում չէր նշում, թե ինչ միջոցներով պետք է օրինականություն հաստատվեր, ինչպես պետք է արդարադատությունը հաստատուն հիմքերի վրա դրվեր, ինչպիսի դատական համակարգ, իրավապահպան մարմիններ պետք է կյանքի կոչվեին: «Հայտարարագրում» նույնիսկ նշված չէր, թե որ օրենքներով պետք է ղեկավարվեր սեփական օրենսդրություն և իրավական համակարգ չունեցող նորանկախ հանրապետությունը:

**2-րդ պարագրաֆում «Դատական համակարգի կառուցման հայեցակարգի մշակումը»** վեր են հանվել դատական շինարարության հնարավոր ուղիները, վերլուծության են ենթարկվել արդարադատության առաջին նախարարի մշակած դատական համակարգի կառուցման հայեցակարգը, դատական համակարգի կառուցման հայեցակարգային հիմնախնդիրների քննարկումները և արդյունքում կազմված «ՀՀ-ում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի օգոստոսյան փաթեթը:

Դատական շինարարության ոլորտում հնարավոր էր երկու ճանապարհ: **Առաջին՝** կառուցել լրիվ նոր դատական համակարգ՝ հասարակական կյանքի փոփոխված պայմաններից ելնելով, **երկրորդ՝** հարմարեցնել ռուսական դատական համակարգը հանրապետության իրական պայմաններին, վերացնել արտակարգ դատարանները, դարձնել համակարգը ամբողջական ու ներդաշնակ: Պետության կայացման գործընթացում դատարանը և արդարադատությունը խաղալու էին կարևոր դեր՝ որպես իշխանությունների հեղինակության փորձաքար: Չգալով հարցի կարևորությունը՝ նախարարը միանգամից չանցավ այդ խնդրի լուծմանը, և կառավարության «հայտարարագրի» վերացական բնույթը պայմանավորված էր երևի հենց այդ հանգամանքով: Առաջին ճանապարհով՝ մշակել նոր դատական համակարգի հիմունքներ և ստեղծել նոր դատարաններ՝ ելնելով իրական կեցությունից (պատերազմ, անարխիա, բնակչության անընդհատ տեղաշարժեր, ահռելի հանցավորություն և այլն), շարժվելու մասին հիմնականում չի խոսվել: Եվ Հայաստանի խորհրդի իրավաբան-պատգամավորները, և՛ արդարադատության նախարարությունը, և՛ դատադատախազական, և՛ փաստաբան գործիչների մեծագույն մասը կողմնակից էին ռուսական դատական համակարգը հանրապետության իրական պայմաններին հարմարեցնելուն:

Արդեն 1918 թ. օգոս. 13-ին արդարադատության նախարարն ուներ պատրաստի զեկուցագիր-բացատրագիր նվիրված այդ խնդիրներին: Չեկուցագիրը մշակելիս արդարադատության նախարարը հաշվի էր նստել երեք հիմնական հանգամանքների հետ՝ ֆինանսական խնայողություն, դատական համակարգի ներքին կառուցվածքի գործառույթային ամբողջականություն, դատարանի մոտիկությունը բնակչությանը:

«ՀՀ-ում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի փաթեթը մշակելիս նախարարությունը փոխել էր իր սկզբնական դիրքորոշումը՝ հերթական խնդիր համարելով «ոչ թե գոյություն ունեցող դատարանների տիպերի բարելավումը կամ վերափոխումը, այլ պայմանների ստեղծումը, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացման»: Այս օրինագծերը վերջնական օրենսդրական հաստատում Հայաստանի խորհրդում չստացան:

Դատարանակազմության վերաբերյալ օրինագծերը հաստատվեցին ղեկտեմբերի սկզբին: Այդ ընթացքում տեղի էր ունեցել արդարադատության նախարարի փոփոխություն: Նոր նախարարը լինելով ազատական քաղաքական հայացքների տեր, ռուսական դատական կանոնադրությունների ոգով կրթված իրավաբան, դրսից հրավիրված անձ, ամենայն հավանականությամբ ենթարկվեց տեղական դատադատախազական պատնյանների պահպանողական մեծամասնության դիրքորոշմանը: Մյուս կողմից անվավեր էր հայտարարվել Բաթումիի պայմանագիրը, իսկ դա հանգեցրել էր տարածքների ընդլայնմանը: Տարածքի ընդարձակումը և դրա հետագա աճի ակնկալումը բնականաբար պետք է հանգեցնեին սկզբնական դիրքորոշման փոփոխության:

**3-րդ պարագրաֆում՝ «1918 թ. ղեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքները»** վեր են հանվել հանրապետության դատական համակարգի կառույցը, արդարադատության սկզբունքները, դատավարության ընդհանուր բնութագիրը: Առաջին հանրապետության դատական համակարգը Ռուսական կայսրության 1864 թ. դատական բարենորոգման փոխառումն էր, իսկ վերջինս իր արմատներով ելնում էր ֆրանսիական դատական համակարգի տեսությունից: Հետևաբար, հանրապետության դատական համակարգը պատկանում էր իրավունքի մայրցամաքային (ռոմանագերմա-

նական) համակարգին: Դատական համակարգն ուներ նորմատիվ իրավական հիմք, որ կարգավորում էր նրա կառուցվածքը, գործունեությունը, առանձին օղակների իրավասությունը, սահմանում նաև նյութական իրավունքի նորմերը:

Հանրապետությունում հաստատվեց դատական համակարգ, որը և՛ իր կառուցվածքի, և՛ իր գործունեության սկզբունքների առումով առաջադիմական, ժողովրդավարական հաստատություն էր: Չնայած հանրապետության առաջին արդարադատության նախարարի ջանքերին՝ չհաջողվեց էական վերափոխումներ մտցնել ընկալված դատական համակարգի մեջ, և արդարադատության նախարարության հերթական խնդիր համարվեցին ոչ թե վերափոխումները, «այլ պայմանների ստեղծումը, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացմանը»: Սակայն վերակառուցման, դատարանը կյանքի նոր պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտությունը բխում էր հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական իրական վիճակից: Անկախ ռիսկի հետ կապված գործոնից՝ ժամանակը, իրադրությունը արտակարգ էին, հանցավորությունը՝ ահռելի, հետևաբար, անհրաժեշտ էին նաև իրավիճակին համապատասխանող նոր մոտեցումներ, այդ թվում նաև՝ մտածված և հիմնավորված արտակարգ միջոցառումներ: Միայն դրա միջոցով կարելի կլիներ ճնշել հանցավորությունը, օրինականություն և իրավակարգ, իրական ժողովրդավարություն հաստատել երկրում: Այդպիսի պայմաններում ժողովրդավարության և իրավականության լույսի տակ պահպանողական հովերով տարվելը չէր օգնի գործին: Անհրաժեշտ էր դրսևորել էլ ավելի արմատական, սկզբունքորեն նոր մոտեցումներ, որովհետև փոխվել էին իրադրությունը, պայմանները, կյանքը: Պետական կառուցակարգը, այդ թվում դատական համակարգը, որ սովորական պայմաններում գործում էր արդյունավետ, հեղափոխական, պատերազմական, արտակարգ իրադրություններում ի վիճակի չէր լինելու ապահովել կարգ ու կանոնի, օրինականության տարրական պայմանները, արդարադատության իրականացումը, երաշխավորել ժողովրդին սոցիալական կոնֆլիկտների արագ և արդար դատավարական լուծում: Կյանքի իրական պահանջներից ու հասարակական հարաբերությունների իրական վիճակից պիտի ելնեին բարեփոխումների հեղինակները, այլ ոչ թե պահպանողական դատողություններից. դիրքորոշում, որն հետագայում փաստի առաջ էր կանգնեցնելու հանրապետությանը հասարակական հարաբերությունների կառավարման այս ոլորտում՝ անդամալուծության և անգործության դատապարտելով դատարանները: Դատական համակարգի կազմակերպական առանձնահատկությունների վրա իրենց էական ազդեցությունը թողեցին նաև տնտեսական իրավիճակն ու պայմանները: Հանրապետության տնտեսական դրությունը ողբալի էր, իսկ հնարավորությունները՝ սահմանափակ, որովհետև երկիրը չունեւր զարգացած տնտեսություն, ամայացել էր ութ տարիների անընդհատ պատերազմների, հեղափոխությունների, խռովությունների և ավերումների հետևանքով, տառապում էր սովի ճիրաններում և իսկապես վերածվել էր «անձև քառսի», որին «ձև» տալու համար անհրաժեշտ էր անցնել անցման երկար, դժվարին ժամանակահատված: Նյութական, տնտեսական հիմքը նպաստում էր քրեաժին գործոնների ակտիվացմանը, իսկ մյուս կողմից հնարավորություն չէր տալիս պետական մարմիններին հաջողությամբ կազմակերպել իրավակարգի պահպանության և արդարադատության իրավակազմակերպական երաշխիքները:

**14-րդ գլուխը «Հաշտարար դատարանները Առաջին հանրապետությունում»** բաղկացած է 2 պարագրաֆից, որոնցում հետազոտվել են՝ հաշտարար դատարանների ենթահամակարգի կազմակերպական կառույցը, հաշտարար դատարանների ընդդատությունը, հաշտարար դատարանների գործունեության հիմնախնդիրները, ինչպես նաև հաշտարար դատական ենթահամակարգի բարեփոխման նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին» օրենքը հաշտարար բաժանմունքների տեղաբաշխումը կատարում էր՝ հաշվի առնելով Հայաստանի վարչատարածքային

բաժանումը (ներառյալ Չանգեգուրը, Նախիջևանի նահանգը՝ բացառությամբ Կարսի նահանգի), ընդ որում էապես ավելացնելով դրանց քանակը: Հայաստանում չկիրառվեցին հաշտարար դատավորի օգնականի և հաշտարար-քննչական տեղամասի վարիչի ինստիտուտները, որպեսզի և՛ հաշտարար դատավորին, և՛ դատական քննիչին դարձնի ավելի ազատ, չծանրաբեռնված այլ բնույթի գործերով: Չկիրառվեց պատվավոր հաշտարար դատավորի ինստիտուտը:

Սկզբնաաղբյուրների ուսումնասիրության հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ ռուսական դատական բարեփոխման դրույթները ընկալվեցին ոչ հաջողակ կազմակերպական ձևերով, ինչն էլ հանդիսացավ արդարադատության մարմինների անարդյունավետ գործունեության պատճառներից մեկը: Ե՛վ հաշտարար բաժինների, և՛ քննչական տեղամասերի տեղաբաշխումը կատարվեց՝ նախապատերազմական խաղաղ պայմանների չափանիշներից ելնելով: Սակայն կյանքի նոր պայմանները և հանգամանքները սնանկ էին դարձնելու այդ հաշիվները: Պատերազմի, հեղափոխության, ազգամիջյան բախումների, գաղթականների կուտակման, տնտեսական ճգնաժամի և զանազան այլ պատճառներով բավականին աճել և աճելու էր հանցավորությունը և սոցիալ-իրավական վեճերի ու «բախումների» քանակը: Սովորական չափանիշներն այստեղ արդեն անպետք էին: Նման հաշվարկները հետագայում դժվարությունների առաջ կանգնեցրին հաշտարար արդարադատությանը հիմնականում ծանրաբեռնվածության և չքննված մեծ թվով գործերի կուտակման պատճառով:

Հաշտարար դատարանները քննում և լուծում էին միայն հաշտարար իրավասության քրեական, քաղաքացիական, նաև վարչական գործերը, կատարում էին նոտարական գործառույթներ: Այս հանգամանքների ուժով աճում էր հաշտարար դատավորների ծանրաբեռնվածությունը, որի բնական հետևանքը չքննված գործերի կուտակումն էր: Հաշտարար դատարանների համակարգի կառուցման թերություններից մեկն էլ հաշտարար և վարչական իրավասության վերաքննիչ ատյանի բավական մեծ հեռավորությունն էր առաջին ատյանից, բնականաբար նաև բնակչությունից:

Այս պայմաններում և՛ արդարադատության նախարարությունը, և՛ կառավարությունը, և՛ խորհրդարանը փոխանակ միջոցառումներ մշակելու և իրականացնելու, որոնք պատշաճ բարձրության վրա կդնեին հաշտարար արդարադատությունը, կապահովեին դատարանի անկախության սկզբունքը, պայմաններ կստեղծեին դատարանի համար՝ դեմ դուրս գալու վարչության և միլիցիայի ապօրինի քայլերի, փոխանակ ապահովելու դատական քննության արագության սկզբունքը, վերացնելու գործերի կուտակումը, նախատեսում էին ներմուծել ընտրովի հաշտարար դատարան, ընդ որում, այնպիսի ձևով, որը համարյա ոնչնով չէր տարբերվում եղածից: Անհասկանալի է թվում Հայաստանում պատվավոր հաշտարար դատավորների ինստիտուտի չկիրառման պատճառները: Հաշտարար դատավորների գործունեության վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ինստիտուտի կիրառումը, հնարավորություն կտար հաշտարար դատարանը էլ ավելի մոտեցնելու ազգաբնակչությանը, որոշ չափով բեռնաթափել հաշտարար դատավորների ծանրաբեռնվածությունը:

**15-րդ գլխի «Ընդհանուր իրավասության դատարանների համակարգն Առաջին հանրապետությունում»** 1-ին, 2-րդ և 3-րդ պարագրաֆներում հետազոտվել են շրջանային դատարանների որպես ընդհանուր իրավասության առաջին ատյանի կազմակերպական կառույցը և գործունեությունը, ընդհանուր իրավասության վերաքննիչ ատյանի՝ Գատական պալատի, միասնական վճռաբեկ դատարանի՝ Հայաստանի Սենատի կազմակերպական և գործառույթային կողմերը, երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրման կողմ և դեմ տեսակետները, երդվյալ ատենակալների դատարանի օրենսդրական հիմնադրումը, այդ դատարանի հիմնախնդիրները, որոնք ի վերջո հանգեցրեցին դրա գործունեության կասեցման առաջարկությանը:

Այս ուղղությամբ հետազոտության իրականացումը հիմք է տվել ատենախոսին եզարակացնելու, որ դատական համակարգի ամենաթույլ և անարդյունավետ գործող օղակներից մեկն էլ Երևանի շրջանային դատարանն էր: Դրա հիմնական պատճառը այդ դատարանի՝ ծայրամասային գավառներից հեռու գտնվելն էր: Գործին չէր օգնում նաև արտագնա նիստերի կազմակերպումը, քանի որ այդ դեպքում ևս գործերի մի ստվար մաս տեղամասային դատական քննիչների և միլիցիայի վատ աշխատանքի շնորհիվ մնում էր չլուծված: Դեռևս կայսրության օրոք դատական մարմինների բնակչությունից հեռու գտնվելը առաջ էր բերում արդարացի քննադատություն հասարակայնության և մամուլի կողմից: Հայաստանի իրավիճակում այդ փաստը անվիճելի էր: Ստեղծելով ընդհանուր ընդդատության գործերով առաջին աստիճանի մեկ շրջանային դատարան և նրա դատական շրջան համարելով հանրապետության ամբողջ տարածքը՝ արդարադատության նախարարությունը և օրենսդիրը թույլ տվեցին ճակատագրական սխալ: Հանրապետության սոցիալական-քաղաքական կացությունը, բարոյահոգեբանական մթնոլորտը, հանցավորության մեծ ալիքն այնպիսին էին, որ շարունակել արդարադատության իրականացումը մինչև հեղափոխական ժամանակաշրջանի չափանիշներով անհնարին էր, որովհետև ոչ մի վկա, ինչ էլ որ լիներ, այդպիսի պայմաններում չէր կտրի հարյուրավոր կիլոմետրեր՝ ներկայանալու Երևան և նպաստելու «արդարադատության հաղթանակին»՝ իմանալով, որ չեն հատուցվի իր ծախսերը:

Իրավիճակը այդպիսին էր հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում: Այս պայմաններում, իհարկե, ոչ թե «ազգաբնակչությանը պետք է մոտեցնեին դատարանին», այլ ընդհակառակը: Ելքը մի քանի չորրորդ կարգի շրջանային դատարանների կազմակերպումն էր և հանրապետության տարածքի բաժանումը մի քանի ընդհանուր ընդդատության դատական շրջանների: Միայն Երևանի շրջանային դատարանի անձնական կազմի հիման վրա կարելի էր հանրապետության տարբեր գավառներում հիմնել չորսից-հինգ չորրորդ կարգի շրջանային դատարաններ: Այդ քայլով ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը և հաշտարար ու վարչական իրավասության երկրորդ աստիճանը ի դեմս այս դատարանների կմերձենային ազգաբնակչությանը և վերը նկարագրված պատկերը այդքան էլ տխուր չէր լինի: Այդպիսի կազմակերպական-օրենսդրական քայլը կտար իր դրական արդյունքները բոլոր առումներով, նախ և առաջ վերացնել չքննված գործերի ահռելի կուտակումը: Այն նաև հնարավորություն կտար արդյունավետ կերպով կազմակերպելու դատախազական հսկողությունը, նպաստելու նաև նախաքննության արագացմանը, դատական քննիչների գործունեության վրա արդյունավետ հսկողության իրականացմանը:

Որակյալ դատավորների խիստ պահանջարկը կարելի կլիներ լուծել նախ շրջանային դատարանների քրեական և քաղաքացիական բաժանմունքների միացման միջոցով, իսկ այնուհետև երդվյալ ատենակալների դատարանի փոխարեն շոֆենների դատարանի ներմուծմամբ: Ոչ իրավաբան ատենակալների ընդգրկումը դատական կազմի մեջ հնարավորություն կտար նաև բավականին կադրեր ազատել և դրանց հաշվին կազմակերպել մի քանի շրջանային դատարաններ, մոտեցնել դատարանը ժողովրդին: Իհարկե, երդվյալ ատենակալների դատարանում ժողովրդավարությունը ավելի լրիվ է արտահայտված, քան շոֆենների դատարանում: Երդվյալների դատարանը ուժեղացնում է դատավարության մրցակցությունը, բարձրացնում փաստաբանության դերը: Սակայն այդ դատարանն իր բարդությամբ, դանդաղաշարժությամբ, թանկությամբ չէր համապատասխանում հանրապետության կյանքի իրական պայմաններին և կարիքներին: Այս իմաստով շոֆենների դատարանն ավելի արագաշարժ էր և ավելի գործուն: Երդվյալների ինստիտուտը, որ սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր արդյունավետ գործելու:

**4-րդ պարագրաֆում** հետազոտվել են նախնական քննության (հետաքննության և նախաքննության), դատախազական հսկողության մարմինների գործունեությունը: Վերլուծելով «ՀՀ միլիցիայի մասին ժամանակավոր օրենքը» և «Քրեական դատավարության կանոնադրության» 377-386-րդ հոդվածներն ատենախոսը եզրակացնում է, որ դատական մարմինների արդյունավետ գործունեության, արդարադատության արագ և հաջող իրականացման հիմնական պայմաններից մեկն էլ միլիցիայի կողմից օրենքով սահմանված պարտականությունների ժամանակին, ճիշտ և բարեխիղճ կատարումն էր: Օրենսդրական կարգավորման ուժով միլիցիան վերածվել էր «դատական իշխանության գործադիր մարմնի», առանց որի դատարանները, քննիչները, դատախազությունը անդամալուծվում, չեզոքացվում, անգործության էին մատնվում:

Հասարակական ծանր պայմանները, անընդհատ պատերազմական գործողությունները և դրա հետևանք հանդիսացող բնակչության անընդհատ տեղաշարժերը, փոխադրամիջոցների բացակայությունը կամ դրանց թանկությունը բացասաբար էին ազդում արդարադատության մարմինների գործունեության վրա: Դրա հետևանքը գործերի նախաքննության և դատական քննության ժամկետների ձգձգումն էր, դրանց կուտակումը քննիչների մոտ, դատարաններում: Անշուշտ, այս բնույթի օբյեկտիվ պայմանները, որոնք խանգարում էին արդարադատության գործընթացին և ընդհանրապես պետական բոլոր մարմինների գործունեության արդյունավետությանը, առկա էին և դրանց դեմ հարկավոր էր երկարատև, համառ պայքար: Սակայն կային նաև սուբյեկտիվ պատճառներ, խոչընդոտներ, որոնք ունեին զուտ կազմակերպչական բնույթ, և որոնց վերացումը հնարավոր էր պետական բարձրագույն մարմինների, իշխող քաղաքական ուժերի ցանկության և ձեռնհաս մոտեցման դեպքում: Այդպիսի պատճառներից մեկն էլ ՆԳՆ կառուցվածքային օղակների և հատկապես վարչության ու միլիցիայի անպատրաստվածությունն ու անբարեխիղճ վերաբերմունքն էր իր պարտականություններին արդարադատության ոլորտում: Միլիցիան՝ որպես իրավապահայան համակարգի կարևոր օղակներից մեկը, այն գործադիր հենարանն էր, որի վրա իրենց առօրյա գործունեության մեջ հենվում էին ոչ միայն արդարադատության մարմինները, այլև պետական կառուցակարգի մյուս օղակները: Այդ մարմինների դերը ընդհանուր համակարգում այնքան էական էր, որ դրանց, նույնիսկ, չնչին անգործության դեպքում պետական կառույցը զրկվում էր արդյունավետ գործելու հնարավորությունից:

Պետական կառուցակարգում դատական մարմինները վերածվել էին գործադիր մարմինների քմահաճույքներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշեկող կառուցակարգի:

**16-րդ գլխի «Դատական համակարգի կառուցվածքային և ընթացակարգային պատշաճության սկզբունքի խախտումները» 1-ին պարագրաֆում** բացահատվել է պատշաճ դատարան և պատշաճ դատական ընթացակարգ սկզբունքի իրավական բովանդակությունը: Դատական կանոնադրությունները սահմանում էին, որ «ոչ ոք չի կարող պատժվել դատական գերատեսչությանը ենթակա հանցագործության կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռով և դատական կանոնադրություններով սահմանված պատշաճ ընթացակարգով»: Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտ. 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքների ուժով արդարադատությունը՝ որպես պետական գործունեության հատուկ տեսակ, առանձնանում էր գործադիր և օրենսդիր մարմիններից: «Դատական հաստատությունների կանոնադրության» 1-ին հոդվածի՝ «Դատական իշխանությունը պատկանում է հաշտարար դատավորներին, շրջանային դատարաններին, դատական պալատին և սենատին», դատավարական կանոնադրությունների «պատշաճ դատարաններ», «պատշաճ ընթացակարգ» իրավական ձևակերպումներն ու հասկացությունները վկայում էին նաև, որ արտակարգ դատարանների ստեղծումը օրենքով արգելված էր, որ դատավարության իրականացման կարգը չէր կարող կամայակա-

նորեն փոփոխվել, որ արդարադատությունը պետք է իրականացնեին միայն օրենքում նշված պատշաճ դատարանները, որոնք հռչակված էին անկախ, իսկ դատավորներն ունեին անփոփոխելիության իրավունք:

Առաջին հանրապետությունում արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից սկզբունքը էլ ավելի խեղաթյուրվեց այն բանի հետևանքով, որ արտակարգ լիազորություններով օժտված գործադիր զանազան մարմիններ դատ ու դատաստան էին իրականացնում հանրապետության ամբողջ տարածքում: Հաճախ այդ մարմինները գործում էին՝ իրավական հիմք ունենալով ոչ թե օրենքները, այլ «իշխանությունների պարտադիր որոշումները»: Իրավական տեսակետից այդ որոշումները «չպետք է հակասեին գործող օրենքներին», բայց այդ կանոնը չէր պահպանվում: Օրենսդիր և գործադիր մարմինները ներխուժում էին արդարադատության իրականացման ոլորտ նաև արտակարգ դատարանների հիմնադրմամբ, որոնք աչքի էին ընկնում ոչ միայն դրանցում դատավարական երաշխիքների բացակայությամբ, այլև նրանով, որ անմիջապես և ուղղակիորեն ղեկավարվում էին կառավարության կողմից: Դրանցում չէր գործում դատավորի անփոփոխելիության սկզբունքը:

**2-րդ պարագրաֆում** հետազոտվել են մայիսյան ապստամբության կապակցությամբ ստեղծված արտակարգ դատարանները, դրանց հիմնադրման պատճառները և առիթները, օրենսդրական գործընթացները, որի արդյունքում 1920 թ. մայիսի 8-ին ՆԽ-ն ընդունեց «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքը և հիմնադրվեցին 4 արտակարգ դատարաններ: Այնուհետև վերլուծության են ենթարկվել արտակարգ դատարանների կազմակերպական, դատավարական-գործառնության համաձայնակցությունները, դրանց ընդդատությունը և փոփոխությունները, արտակարգ դատարանների գործունեությունը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ արտակարգ դատարանները վերածվեցին ընդհանուր դատական մարմիններին զուգահեռ գործող «մշտական դատարանների»: Ակնհայտ էր, որ իրավապահպան համակարգը ի սկզբանե լավ չէր գործում, որ այն ընդհանուր վերակառուցման կարիք էր զգում, և փոխանակ այս ուղղությամբ մտածելու ու գործելու քաղաքական ղեկավարությունն անընդհատ դիմում էր արտակարգ դատադատավարական միջոցառումների՝ հաճախ անհաջող ու անարդյունավետ:

Հայաստանում մեծամասնականների նկատմամբ զանգվածային բռնություններ չեն եղել: Ծիշտ չէ «հրեշտակի կերպարանքով» ներկայացնել «բյուրո կառավարությանը», քանի որ նա՝ որպես օրենսդիր, արել է նաև ոչ իրավական քայլեր, որոնք հետևանք էին «հեղափոխական վճռականության», առավել ևս, որ եղած օրենսդրական դաշտը, հնարավորություն էր տալիս խուսափել այդպիսի քայլերից: Կառավարության սխալներից էր նաև այն, որ մայիսի 8-ի ժամանակավոր օրենքին տրվեց հետադարձ ուժ:

**3-րդ պարագրաֆում «Արդարադատության իրականացման պատշաճ սկզբունքների օրենսդրական վերանայումները»** վեր են հանվել դատական համակարգի միասնականության, արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից, դատական մարմինների անկախության սկզբունքների խախտումները, ներկայացվել է դատավորների անփոփոխելիության, մասնակիորեն նաև դատական քննության անմիջականության սկզբունքների վերացման պատմությունը:

Առաջին հանրապետության դատական համակարգի պատմաիրավական ուսումնասիրությունը հեղինակին հիմք է տալիս պնդելու, որ արդարադատության՝ որպես պետական գործունեության հատուկ տեսակի, և օրենսդիր ու գործադիր մարմինների առանձնացվածությունը կատարված էր ոչ լիարժեք կերպով, այն հանրապետության գոյությանը զուգընթաց անընդհատ խախտվում էր օրենսդիր, գործադիր և կուսակցական մարմինների կողմից: Չնայած այն բանին, որ օրենսդիրը օգտագործում էր «դատական իշխանություն» հասկացությունը, այնուամենայնիվ իշխանությունների տարանջատման դասական սկզբունքը, որի մեխը ոչ միայն ամբողջական պետական իշխանության, սո-

վորական գործառութային, մեքենայական բաժանումն է, այլ այնպիսի կազմակերպական-իրավական կառուցակարգերը, որոնք ապահովում են ինչպես իշխանությունների համագործակցությունը, հավասարակշռումը, այնպես էլ հակակշռումը, Հայաստանի պետաիրավական համակարգում չէր կենսագործված:

Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի, դրա կազմակերպագործառութային առանձնահատկությունների, այդ համակարգի իրավական գործունեության ամբողջական, համակարգված պատմաիրավական հետազոտության հիման վրա կառուցվել են հետևյալ **հիմնական եզրակացությունները**.

1.1. Պետական իշխանության օրենսդիր համակարգի կայացման տեսանկյունից հանրապետության պետական կառավարման պատմությունը բաժանվում է կազմակերպական երեք փուլի՝ ա) հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, բ) հանրապետության բնակչության և քաղաքական հիմնական կուսակցությունների նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, գ) քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով ձևավորված խորհրդարանական կառավարում: Երկրորդ և երրորդ փուլերի որոշակի ժամանակամիջոցներում խորհրդարաններն իրենց լիազորությունները հանձնել են կառավարությանը:

1.2. Հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարումը ընդգրկում է 1918 թ. մայիսի 28-ից մինչև օգոս. 1-ն ընկած ժամանակաշրջանը, որում պետական բարձրագույն մարմին էր ԹԻՖլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը՝ որպես հայերի ազգային ներկայացուցչական լեգիտիմ մարմին:

1.3. Հանրապետության ազգաբնակչության և քաղաքական հիմնական ուժերի նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարման շրջանում օրենսդիր մարմինը նշանակովի Հայաստանի խորհուրդն էր, որը որպես առաջին «բացարձակ ինքնիշխան» խորհրդարան, գործել է 1918 թ. օգոս. 1-ից մինչև 1919 թ. ապ. 27-ը, իսկ իրավաբանորեն՝ մինչև հունիսի 5-ը: Խորհրդի ձևավորման կարգը թելադրված էր քաղաքական ծանր պայմաններով և օրենսդիր մարմնի լեգալությունն ու լեգիտիմությունն ապահովելու արդյունավետ, օպերատիվ լուծում էր:

1.4. Հայաստանի խորհրդում կային ութ խմբակցություն, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ 1) կուսակցական խմբակցություններ, 2) ազգային խմբակցություններ՝ մահմեդական, ռուսական, եզդիական, 3) անկուսակցականների խմբակցություն: Խորհրդարանի կազմում 1919 թ. մայիսի 27-ին ավելացավ արևմտահայերի խմբակցությունը՝ 12 անդամով: Հայաստանի խորհրդի հիմքում ի սկզբանե դրվել էր խմբակցային սկզբունքը, պատգամավորները չունեին նոր խմբակցություն ստեղծելու ազատություն. կուսակցական կարգապահությունը խախտելու ամեն մի դեպք կարող էր պատգամավորին ետ կանչելու հիմք ծառայել: Այս հանգամանքի ուժով խմբակցությունները կարևոր տեղ էին գրավում խորհրդարանի կառուցակարգում:

1.5. Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակման գործընթացում իրավական, ընթացակարգային ձևի պահպանման հիմնահարցերի հետազոտությունը հիմք է տալիս հաստատելու, որ ՀՅԴ-ի և կառավարության անդրկուլիսային գործելակերպը ծրագրված քաղաքական դավադրություն էր՝ ընդդեմ հանրապետության, հանուն դաշնակցական կուսակցության մենատիրության հաստատման: Եթե այդ գործընթացները տեղի ունենային իրավական օրինականության հունով, ապա դրանք չէին հանգեցնի դաշնակցական մենիշխանությանը, խորհրդարանում քաղաքական բազմազանության վերացմանը, ազգային համերաշխության խարխլմանը և, հետևաբար, մնացած ծանրակշիռ քաղաքական ուժերի օտարմանը: Հետևանքներ, որոնք թուրքական հարձակման և մեծամասնական շարժման մշտական սպառնալիքի պայմաններում՝ որպես ներքին գործոններ նպաստեցին հանրապետության անկմանը: Պատմական փորձից քաղված դասն արդիականության համար կարելի է ձևակերպել հետևյալ օրինաչափությամբ. քաղաքակա-



նության սահմանադրականությունը, իրավաօրինականությունը և խորհրդարանական իրական բազմակարծիքությունն ազգային պետականության կայացման և հարատևության կարևորագույն հիմքերից են:

1.6. Հայաստանի խորհրդի կազմավորման հիմունքները որոշելիս չէր սահմանվել դրա գործունեության ժամկետը: Խորհրդի լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Չունենալով բացարձակ մեծամասնություն խորհրդում՝ ինքնալուծարման հասնելը դաշնակցականների համար շատ բարդ խնդիր էր: Այդ կացությունից դուրս գալու և իրավական կարգավորման բացը հաղթահարելու միակ ելքը դաշնակցությունը տեսավ խորհրդարանի աշխատանքների ձախողման մեջ: Նպատակը Հայաստանի խորհուրդն անդամալույծ մարմին դարձնելն էր և դրանով ընդդիմությանը փաստի առաջ կանգնեցնելը: Սա կստիպեր համաձայնվելու ինքնարձակմանը: Քաղաքական իրավիճակն իսկապես պատմական էր ու պատասխանատու: Անհրաժեշտ էր, որ դա ընթռնեին բոլոր քաղաքական ուժերը, հոսանքները և գործիչները, կարողանային թոթափել խմբակային, անհատական շահերն ու հակամարտությունները: Այդ էր պահանջում ազգային հավաքական ընդհանուր շահը: Եվ միայն այդպես հնարավոր կլիներ չեզոքացնել պետությանն սպառնացող բոլոր վտանգները, համախմբել ողջ ժողովուրդը և հասարակությունը, կայացնել նորաստեղծ պետությունը: Սակայն քաղաքական ուժերը չկարողացան գնալ այդ ուղով, վեր կանգնել նեղ անձնական ու կուսակցական շահերից, գտնել այն ոսկե միջինը, որը կդառնար հայոց պետության հաղթական կայացման անկյունաքարը:

1.7. Օրենսդիր իշխանության կազմակերպման երրորդ փուլը քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով ընտրված խորհրդարանական կառավարման համակարգ էր: Օրենսդիր իշխանությունը մարմնավորում էր Հայաստանի պառլամենտը, որի ընտրությունները կազմակերպելու ընթացքում շարունակվեցին օրենսդիր կառավարության և կուսակցությունների քաղաքական խարդավանքները: Ոչ կառուցողական, նեղ կուսակցական դիրքորոշումների, կուսակցական անհանդուրժողականության հետևանքը եղավ այն, որ ՀԺԿ-ն հրաժարվեց մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Կոալիցիայի խզումից հետո՝ միայն դաշնակցականներից կազմված կառավարությունը, օգտվելով ՀԺԿ-ի հայաստանյան կոմիտեի պահի տակ ընդունած որոշումից, առանց բավարար իրավական հիմքերի հանեց ՀԺԿ-ի ընտրական ցուցակը, հաշվի չառնելով ԿԸՀ-ի կարծիքը: Ընտրությունների արդյունքում ՀՅԴ-ն խորհրդարանում ստացավ բացարձակ մեծամասնությունը: Հետևաբար, խմբակցությունները Հայաստանի պառլամենտում էական դեր չէին խաղում:

1.8. Հայաստանի պառլամենտը ևս հիմնադրվեց որպես անժամկետ լիազորություններով խորհրդարան. լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Ընտրությունների պարտադիրության և պարբերականության խախտմամբ խեղաթյուրվում էր ներկայացուցչական կառավարման կարևորագույն գիծը՝ ժամկետայնությունը: Սա ճակատագրի հեզմանք չէր, այլ ՀՅԴ-ն հատուկ մտածված ծրագիրը: Հիմա արդեն ինքը խորհրդարանում ուներ բացարձակ մեծամասնություն, չկար լուրջ ընդդիմություն՝ որպես հակակշիռ, և այդպիսի «հաճելի» իրավիճակը որքան երկար տևեր, այնքան ՀՅԴ-ը կուժեղացներ իր մենիշխանությունը:

Հանրապետության խորհրդարանականության ողջ պատմությունը վկայում է, որ ինքը՝ դաշնակցությունն ամեն անգամ պայքարի մեջ էր մտնում հենց խորհրդարանի հետ: Եթե դա հասկանալի էր Հայաստանի խորհրդի պարագայում, ապա անհասկանալի է Հայաստանի պառլամենտի դեպքում: Անշուշտ, իրավիճակն արտակարգ էր, ճգնաժամային, լարված, օպերատիվ ու արագ լուծումներ պահանջող: Բայց դա չի նշանակում, որ ասպարեզից պետք էր դուրս թողնել խորհրդարանը: Կարելի էր կատարել իրականության պահանջներին համապատասխանող իրավազորությունների բաժանում՝ կառավարությանը վերապահելով որոշակի ոլորտներում պատվիրակված օրենսդրման ի-

րավունք: Այս դեպքում պետական նավը կլիներ հավասարակշռված, իսկ ինքը՝ կառավարությունը՝ հակակշռված: Սակայն մենատիրական ձգտումները հասան մոլազարության աստիճանի. ամեն ինչ միայն իրենք և իրենց միջոցով, մնացած բոլորը ոչինչ են ու թշնամի: Պետական շինարարության օբյեկտիվ, իրավական օրինաչափությունների պահպանումը և գործադիրին հակակշռող խորհրդարանի առկայությունը միգուցե հանրապետությունը չհասցնեին նման տապալման:

1.9. Հանրապետության առաջին խորհրդարանը հիմնադրվեց որպես անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան, որի նման կարգավիճակի «ավանդույթները» շարունակեց Հայաստանի պառլամենտը: Օրենսդրական ոլորտում ևս երկու խորհրդարաններն էլ ունեին բացարձակ անսահմանափակ իրավասություն, քանզի դրանք իրավաբանորեն օժտված էին իրավագործությամբ՝ ընդունելու օրենքներ ցանկացած հարցով: Խորհրդարանի օրենսդրական իրավասության բացարձակ անսահմանափակ բնույթը, որ հաստատվեց սկզբնական շրջանում, մշտական չէր: Երկու և կես տարվա գործունեության ընթացքում նկատվում էր օրենսդրական իրավունքների սահմանափակման միտում. նախ՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքը մեծապես կենտրոնանում էր կառավարության ձեռքին, և երկրորդ՝ պետական կառուցակարգում առաջ եկավ պատվիրակված օրենսդրման յուրահատուկ ինստիտուտը:

1.10. Խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ընդունել են օրենք կոչված 318 ակտ, որից 38-ն անհատական իրավական ակտեր են: Մնացած 280 օրենքից 191-ը ֆինանսական ոլորտի օրենքներ էին: Մնում է 89-ը օրենք, որոնցից հիմնարար և ծավալուն օրենքներ էին «Հայաստանի խորհրդի նակազը» և «Պառլամենտի ընտրությունների օրենքը»: Մնացածը կարևոր, սակայն համառոտ օրենքներ էին: Ամսական ընդունվում էր 5 օրենք, ինչը շատ քիչ էր նորակազմ և բավականին վատթար կացության մեջ գտնվող պետության համար: Ֆինանսաբյուջետային օրենքների գերակշռությունը խորհրդարանների օրակարգում նրանց ուշադրությունը շեղելու միջոցներից էր: Օրենսդրման նման պատկերի պատճառներից էր խորհրդարանի կանոնակարգը, որում չկար տարբերակված կարգավորմամբ մոտեցում՝ քննարկման և հաստատման պարզ և բարդ ընթացակարգեր՝ կախված «օրենսդրական գործեր» կոչված հարցերի բնույթից և բարդությունից: Բուն խորհրդարանում իշխող ուժերն այդ փաստի վրա որևէ ուշադրություն չէին դարձնում, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ իշխող կուսակցությանը նման իրավիճակը՝ որպես խորհրդարանի ուշադրությունը շեղելու միջոց, ձեռնառու էր: Ակնհայտ էր, որ նորահռչակ պետության խորհրդարանի առջև կանգնած էր ահռելի օրենսդրական աշխատանք՝ իրավական համակարգը հեղեղուկ վիճակից դուրս բերելու համար: Հանրապետությունն ուներ օրինաստեղծ աշխատանքի ռազմավարական ծրագրի և արդյունավետ կառուցակարգի անհրաժեշտություն, սակայն խորհրդարանները չէին շտապում այն մշակելու: Եթե դա բացատրենք միայն խմբակցությունների հակամարտությամբ, ապա ճիշտ չի լինի, որովհետև նույն ուղով գնաց երկրորդ խորհրդարանը, որում նման հակամարտություն չկար: Թերություններն իրավաստեղծ գործունեության մեջ հետևանք էին ոչ միայն օբյեկտիվ պատճառների, այլ նաև սուբյեկտիվ, այսինքն՝ օրենսդիր մարմինների անձեռնհասության: Կարևորվում էր արհեստավարժ-իրավաբանների մասնակցությունն իրավաստեղծ աշխատանքին: Բայց Հայաստանը զրկված էր նման հնարավորությունից:

1.11. Հանրապետությունում սահմանվել և գործել են համաշխարհային խորհրդարանական պրակտիկային հայտնի խորհրդարանական վերահսկողության համարյա բոլոր ձևերը, բացառությամբ ուղղակիորեն կառավարությանն անվստահություն հայտնելու ընթացակարգի: Խորհրդարանական վերահսկողության ձևերի իրավական արդյունավետությունը կախված էր խորհրդարանական ուժերի հարաբերակցությունից: Նույնիսկ գոյության պատմական կարճատև շրջանում նկատվում է խորհրդարանի իրավունքների սահմանափակման և գոյություն ունեցող վերահսկողության ձևերի օգտագործման

կրճատման միտում:

1.12. Խորհրդարանագիտության մեջ հայտնի դատական իշխանության և արդարադատության ոլորտին առնչվող բոլոր հնարավոր լիազորություններից Առաջին հանրապետության խորհրդարանները համանմանության կարգով իրենց միանշանակորեն վերապահել էին համաներում հայտարարելու իրավունքը, ինչպես նաև դատական մարմինների ու արդարադատության ոլորտին առնչվող մարմինների պաշտոնյաների նշանակման իրավազորությունը: Երկու խորհրդարանների պրակտիկայում չի կիրառվել իմպիչմենտի ինստիտուտը: Խորհրդարանների գործունեության ընթացքում ստեղծվել են քննիչ (վերստուգող) հանձնաժողովներ: Իրավական համակարգի անցումային բնույթը և իրավական կարգավորման բացերի առկայությունը հանգեցրեցին այն բանին, որ խորհրդարանն իրեն վերապահեց նաև ներման իրավունքը: Ներման ընթացակարգի կենտրոնացումը խորհրդարանում, պայմանավորված դրա զանգվածային բնույթով, օրենսդիր մարմնին վերածեց յուրահատուկ քվազի դատարանի, ինչը հաստատվում է ոչ միայն ներման անհատական օրենքների ընդունմամբ, այլ նաև որոշ գործերով վճռաբեկության որոշումներ կայացնելու փաստերով:

1.13. Պատգամավորների կարգավիճակը կառուցված էր պատգամավորների իրավահավասարության սկզբունքի վրա: Երկու խորհրդարանների պատգամավորներն ունեին նաև հավասար պարտականություններ, մասնավորապես՝ մասնակցել խորհրդարանի ընդհանուր ժողովներին (նիստերին), հանձնաժողովների աշխատանքներին: Առանց հարգելի պատճառների բացակայող պատգամավորների աշխատավարձը կրճատվում էր: Պատգամավորներն օժտված էին անձեռնմխելիությամբ:

Հայաստանի խորհուրդը ստեղծելիս հիմնադիրներն անտեսեցին պաշտոնների համատեղման անբույլատրելիությունը որպես խորհրդարանականության հիմնաքար: Այդ սխալը շտկվեց, սակայն կարգավորման մի անհեթեթ տարբերակից ընկնելով մյուս ծայրահեղության մեջ. ընդունվեց օրենք, որով սահմանվեց, որ խորհրդի անդամը չի կարող վարել որևէ այլ պետական և կամ վճարովի հասարակական պաշտոն: Հետագայում շրջանում նկատում ենք մասնակի շեղումներ այդ սկզբունքից, երբ քայլ առ քայլ ընդլայնվեց այլ գործունեությամբ զբաղվելու պատգամավորի իրավունքը:

1.14. Առաջին հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման հիման վրա: Բաժանումը դրսևորվում էր գործառության, ինստիտուցիոնալ, անձնական առումներով: Սակայն իշխանությունների բաժանման կիրառված համակարգը չէր ապահովում իշխանության ճյուղերի հավասարակշռումը: Հանրապետության օրենսդիր մարմինների բացարձակ օրենսդրական իրավասությունը խախտում էր այս պահանջը: Մյուս կողմից «հակակշիռների և զսպիչների» թույլ համակարգը ի չիք էր դարձնում իշխանությունների բաժանման իրական գործողությունը:

2.1. Կառավարության ձևավորման գործընթացում վճռական դեր էր խաղում խորհրդարանը: Խորհրդարանը խմբակցությունների առաջարկած թեկնածուին ընտրում էր վարչապետ, նրան հանձնարարում կազմել կառավարություն: Վարչապետը կազմում էր կառավարության անվանական կազմը և ներկայացնում էր խորհրդարանին՝ ի գիտություն: Դրանից հետո վարչապետն իր կառավարության անունից խորհրդարանի հավանությանն էր ներկայացնում կառավարության գործունեության ծրագիրը՝ վստահության քվե ստանալու համար: Հայտարարագրի՝ իրացվելիք քաղաքականության ծրագրի քննարկումն ու հաստատումը խորհրդարանում նշանակում էր, որ այն համարվում էր լրիվ կազմավորված և իր պարտականություններն ստանձնած: Վարչապետն օրենսդրի գծած կառուցվածքի շրջանակներում ինքն էր որոշում կառավարության անհատական կազմը, հանում և նշանակում նախարարներին, այդ մասին տեղյակ պահելով խորհրդարանին: Արդեն 1920 թ. կառավարության կազմավորման այդ կարգը հստակ դրվածք էր: Այսպիսով, կառավարությունն իր ձևով բացարձակ խորհրդարանական էր: Կառավա-

րությունն իր լիազորությունները վայր էր դնում գրավոր հրաժարականի ձևով, որն ընդունվում էր խորհրդարանի կողմից:

2.2. Կառավարության ձևավորման կարգի, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների իրավական կարգավորման բացը Հայաստանի խորհրդում հանգեցնում էր պատեհապաշտ, երբեմն արտառոց անհատական կարգավորման: Այսպես, Հայաստանի խորհրդում 1918 թ. օգոս. չընտրվեց վարչապետ՝ նախորդ գերագույն մարմնի՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ընտրած վարչապետը համարվեց լեգիտիմ իրավահաջորդ, իսկ կոալիցիոն կառավարության ինվեստիտուրան կատարվեց միայն վարչապետ ընտրելով, առանց կառավարության հայտարարագրի հավանության: Կոալիցիոն կառավարության կառուցվածքը որոշված էր համաձայնագրով:

2.3. Հանրապետության կայացմանը զուգընթաց գործադիր իշխանության մարմինների համակարգը ծավալվում և ճյուղավորվում էր: Դա օրինաչափ երևույթ էր, քանզի պետական կառավարման խնդիրներն օրավուր առաջ էին բերում նոր գործառույթների իրականացման անհրաժեշտությունը, իսկ սա էլ իր հերթին պահանջում էր կատարող սուբյեկտի հիմնադրում: Գործադիր իշխանության համակարգում առանձնահատուկ տեղ էին գրավում նախարարությունները: Ստեղծվելով գրեթե ոչնչից, առանց որևէ կազմակերպակառուցվածքային և նյութական նախադրյալների՝ 1920 թ. դրությամբ գործադիր իշխանության համակարգում գործում էին տաս նախարարություն: Հանրապետության գոյության վերջին շրջանում ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկը: Փորձեր են արվել հիմնադրելու նաև ժողովրդական տնտեսության նախարարություն, տնտեսական կառավարման մասնագիտացված մարմին:

2.4. Պետական կառուցակարգի գործադիր համակարգի էքստենսիվ զարգացումը օբյեկտիվ օրինաչափություն էր, սակայն հանգեցրեց ապարատի և ծախսերի ուռճեցման: Պետության խնդիրները և գործառույթներն ունեն բազմագործոն պայմանավորվածություն: Դրանցից են տվյալ պահին ունեցած հնարավորությունները, ինչպես նաև գերակայությունները: Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, չունենալով ներքին լուրջ հնարավորություններ պետական կառուցակարգին «լծեցին» պետության բոլոր հնարավոր գործառույթների իրականացմանը, ինչը չկայացած համակարգի համար վտանգավոր փորձություն էր: Պահի հրամայականը թելադրում էր ներքին և արտաքին միայն որոշ գործառույթների անպայման և արդյունավետ իրականացումը: Այդպիսիք էին՝ երկրի պաշտպանության, ինչպես նաև իրավական կարգավորման (ներառյալ օրինականության ու իրավակարգի հաստատման), սովի և համաճարակների դեմ պայքարի գործառույթները: Մինչդեռ պետությունը տուրք տվեց քաղաքական պոպուլիզմին և ինքն իրեն ծանրաբեռնեց գրեթե բոլոր գործառույթներով:

2.5. 1919 թ. ՆԽ-ի օրենքով հիմնադրվեց համալսարանը, որն ուներ պետական բուջետային ֆինանսավորում ունեցող ոչ առևտրային անձի կարգավիճակ: Համալսարանի կազմակերպական իրավական ձևի հիմունքները խորհրդային իշխանության օրոք արմատական փոփոխություններ չկրեցին. համալսարանը, որպես պետական սեփականություն հանդիսացող գույքը օպերատիվ կառավարման իրավունքով օգտագործող ու բյուջետային ֆինանսավորում ունեցող իրավաբանական անձ, գործեց մինչև անցյալ դարի վերջերը: Անտրամաբանական գործընթացների արդյունքում ներկայումս կրթության համակարգի բաղադրատարր համարվող կրթական կազմակերպությունները՝ որպես իրավունքի սուբյեկտ հանդես են գալիս կազմակերպական իրավական երկու ձևով՝ պետական բուհեր՝ ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակով և մասնավոր բուհեր՝ առևտրային իրավաբանական անձանց ինչ որ ձևի կարգավիճակով: Հայաստանյան ներկայիս փորձը բուհերի կազմակերպական իրավական ձևի հարցում հակասում է համաշխարհային կորպորատիվ շինարարության փորձին:

2.6. Առաջին հանրապետության կառավարության իրավասությունը չունեց որևէ իրավական ամրագրում: Կառավարության իրավասության հարցերը կարգավորում էին «կա-

ռավարությունը և նրա ղեկավարն իրականացնում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսագործումը» դասական բանաձևով: Բացի գործադիր իշխանությունից, կառավարությունն ունի լծակներ օրենսդրական գործընթացի ոլորտում: Այդ լծակներն էին՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, կառավարության կողմից իրականացվող պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը: Կառավարության կողմից օրենսդրման թաքնված կառուցակարգ էր պառլամենտական հանձնաժողովների միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը, ինչպես նաև կառավարության և խորհրդարանի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովները, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը:

2.7. Նորաստեղծ պետականության ամրապնդումն ու զարգացումը մեծապես պայմանավորված էր պետական կառուցակարգի բոլոր օղակներում ձեռնահաս, գիտակ, պետականորեն մտածող ու գործող, ազնիվ ու փորձառու պաշտոնյաների առկայությունից: Սակայն Հայաստանը զուրկ էր ամուր և ուժեղ պետականության այդ անհրաժեշտ նախապայմանից: Չունենալով պատրաստի պետական ապարատ և, իհարկե, պաշտած խմբաքանակի պետական ծառայողներ, կառավարության համար կարևորագույն խնդիր էր դառնում պետական ծառայության ինստիտուտի հիմնադրումը, պետական ծառայության հարաբերությունների կանոնակարգումը և պետական ծառայության ընթացիկ կառավարումը: Առաջին հանրապետության կառավարությունն այս ոլորտում ծավալել է գործունեություն մի քանի ուղղություններով՝ ա) օրենսդրական, նախ խորհրդարանների, այնուհետև իր իսկ օրենսդրական գործունեության միջոցով, բ) ենթաօրենսդրական, այսինքն՝ պետական ծառայության հարաբերությունների կարգավորում կառավարական կանոնակարգող որոշումների ընդունման միջոցով:

2.8. Սկզբնական շրջանում կառավարությունը պետական ծառայության ոլորտում չունի մշակված ծրագիր, այլ գործում էր պատեհապաշտ միջոցառումների իրականացմամբ, որոնք ուղղված էին պետական ծառայողների նյութական և սոցիալական դրության բարելավմանը: Հետագայում ընդունված օրենքների բովանդակությունը հաստատում է, որ կառավարությունը կարևորել էր գործունեության երկու ուղղություն. պետական կառավարման համապատասխան մարմինների հիմնադրում, դրանց հաստիքների սահմանում, բյուջետային ֆինանսավորման ապահովում, պետական ծառայողների և աշխատողների նյութական դրության ապահովում: Վերջինը նպատակ ուներ նախ պահպանել պետական ապարատում արդեն առկա ծառայողներին և երկրորդ՝ գրավել կարող, գիտակ անձանց պետական ծառայության:

Մեծ ջանքերի գնով հիմնադրված պետական կառավարման մարմինների համալրումը քիչ թե շատ կարող ծառայողներով առաջ բերեց նոր հիմնախնդիր, այն է՝ պետական ծառայողի կերպարի, նրա ազնվության և օրինական գործունեության: Այդ հարցերը Հայաստանում ձեռք էին բերել քաղաքական մեծ նշանակություն, որովհետև վարկաբեկում էին պետական իշխանությունը, սպառնում էին անկախ ազգային պետականության գոյությանը: Սովորական պայմաններում՝ 1918-1919 թթ. ընթացքում կառավարությունը փորձում էր աստիճանական, իրավական ճանապարհով կառուցել և կայացնել պետական կառուցակարգը: Սակայն, արտասովոր իրադրությունը, արտաքին և ներքին կացության բարդությունները, խռովություններն ու տնտեսական վատթար կացությունը, ֆինանսական խորը ճգնաժամը երբեմն դրդում էին կառավարությանը դիմելու արտակարգ միջոցառումների, հատկապես պետական ծառայության իրավական կարգավորման, պետական ծառայողների վրա հսկողություն և վերահսկողություն սահմանելու հարցում: Այդպիսի բնույթ կրող արտակարգ միջոցառումները ձեռնարկվել մի քանի ուղղությամբ: Սակայն կառավարող ընտրանու ձեռնարկած արտակարգ միջոցառումներից շատերն անարդյունավետ էին:

2.9. Ազգային պետականության ամրապնդման, նրա անվտանգության ապահովման,

պատշաճ պաշտպանության պայմաններից մեկը պետական իշխանության գործունեությունն էր: Մյուսը՝ ազգաբնակչության անվերապահ նվիրվածությունը և անձնագոհությունն անկախության գաղափարին, երկրի պաշտպանությանը: Այս երկու գործոնները երկրի պաշտպանության համակարգի կարևորագույն նախապայմաններն էին և՛ այն ժամանակ, և՛ այսօր:

**2.10.** Երկրի պաշտպանության համակարգի կառավարման լիազորությունների մեծագույն մասը կենտրոնացված էր գործադիր իշխանության ձեռքին: Կառավարությունն իրականացնում էր երկրի պաշտպանության իրավական և կազմակերպական միջոցառումները և պատասխանատու էր զինված ուժերի վիճակի, ամեն տեսակի ապահովման համար: Այս ոլորտում գործադիրի պատասխանատվությունն ավելի էր բարձրանում պետական կառուցակարգի երկու յուրահատկությունների պատճառով: Առաջին՝ կառավարությունը որոշակի ժամանակներում ուներ օրենսդրական լիազորություններ: Երկրորդ՝ նույնիսկ այն պահերին, երբ կառավարությունն օժտված չէր օրենսդրական լիազորություններով, խորհրդարանի հայկական խմբակցությունները կառավարությանը երկրի պաշտպանության ոլորտում օժտում էին արտակարգ լիազորություններով, ինչը նրան հնարավորություն էր տալիս շրջանցելով խորհրդարանին՝ ձեռնարկել երկրի պաշտպանության իրավակազմակերպական միջոցառումներ:

**2.11.** Կառավարությունն կենտրոնանալով բանակի կազմակերպակառուցվածքային շինարարության վրա՝ անտեսել էր բարոյահոգեբանական աշխատանքը: Կազմակերպությունը, թեկուզև կուռ, առանց ոգու և անձնագոհության դատապարտված է պարտության: Ոգին գումարած կազմակերպական կառուցվածքին կտա այն արդյունքը, որը մենք ակնկալում ենք պատմությունից: Արդի շրջանի բոլոր տեսակի բարեփոխումները, այդ թվում՝ պաշտպանական ոլորտի, և, իհարկե, հասարակական դաստիարակության ու կրթության համակարգն ուղղակիորեն պետք է խարսխվեն այս աքսիոմայի վրա և ազգային հիմքով բարոյահոգեբանական, իրավական, հայրենասիրական դաստիարակությունն ու կրթությունը դարձնեն իրենց նպատակներից մեկը:

**2.12.** Առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության փորձը, արդի հայկական երկու պետությունների աշխարհաքաղաքական կացությունը հիմք են տալիս պատմության դասերի տեսական իմաստավորման միջոցով առաջ քաշել պետական ապարատի կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ պաշտպանունակությունը: Պաշտպանունակության սկզբունքի դիրքերից անհրաժեշտ է անցկացնել ողջ արդի օրենսդրության մոնիտորինգ, որի համար առաջարկվում են նաև իրականացման չափորոշիչներ:

**2.13.** Հանրապետությունում արտակարգ միջոցառումների կիրառումը հաճախ ուներ ուներ ոչ միայն անհրաժեշտ օբյեկտիվ, այլ նաև քաղաքական դրդապատճառներ, պայմանավորված էր կառավարող կուսակցության մենատիրական ձգտումներով, հետևանք էր իրավական մշակույթի ցածր մակարդակի: Արտակարգ միջոցառումների կիրառման նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակաընթացքում, սակայն խորհրդարանների ողջամիտ դիրքորոշման հետևանքով ընթացք չէին ստանում: Այլ էր վիճակը այն պահերին, երբ օրենսդրական լիազորությունները պատկանում էին կառավարությանը, հատկապես «բյուրո»: Իրավական հիմնարար սկզբունքների բոլոր վերանայումները, արտակարգ գործադիր կառավարման և դատարանների հիմնադրումն արվել են հիմնականում այս ժամանակահատվածներում: Արտակարգ միջոցառումները, բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ նաև անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով չմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավակարգի հաստատման, պետական կառավարման նպատակների արագ, պատշաճ և իրավական կենսագործմանը:

**3.1.** Ոչ դրական միտում ունեցող հասարակական պայմաններն իրենց ավերիչ ազդե-

ցությունն էին թողնում ամբողջ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի, իրավագիտակցության վրա: Անցման շրջանի գործոնները, պատերազմները և հեղափոխությունները, սովը պայմանավորել էին իրավագիտակցության մակարդակի անկում - հասարակության լայն զանգվածների մեջ: Շրջակա միջավայրը կարևոր նշանակություն ունի գրեթե «իդեալական» պետաիրավական նորմատիվային համակարգի համար: Ռեցեսիայի ենթարկված ցանկացած իրավական մոդել կարող է լինել բավականին ժողովրդավարական, սակայն լիովին չկատարել իր առջև դրված խնդիրները: Պատճառը կոլիզիան է սովորական, կայուն հասարակական պայմանների համար մոդելավորված համակարգի և օբյեկտիվորեն առկա հասարակական արտակարգ, բացասական պայմանների միջև, որոնք ի վերջո չեզոքացնում են ներդրված իրավական մոդելի գործառու-թավորումը, եթե այն ադեկվատ կերպով չի տեղայնացվում ու հարմարեցվում շրջակա հասարակական միջավայրի պայմաններին:

3.2. Նման պայմաններում կարևորվում էր պետական մտածողության, իմաստուն քաղաքականության և կառավարման դերը՝ ուղղված օրինականության և իրավակարգի ապահովմանը, դրանց հաստատման համար անհրաժեշտ նախադրյալների երաշխավորմանը: Հետևաբար պատասխանատվության մեծ մասը ընկնում էր քաղաքական դեկլարության և օրենսդիր մարմինների վրա, որովհետև նրանք ավելի լայն սոցիալական, պետական մտահորիզոն պետք է ունենային, օրենսդրման գործընթացում հաշվի առնեին խնդիրների բազմատարբերակ լուծումները, այդ ընթացքում ապահովելով նաև օրինաստեղծ աշխատանքի որակական կողմը: Սակայն նրանց գործելակերպն ավելի շատ նման էր «հին շավարը կարկատելուն», որովհետև չէին որոշված պահի առաջնությունները, չկար համակարգված մոտեցում, որոնք էլ պիտի պայմանավորեին իրավաստեղծ աշխատանքի ռազմավարությունը և մարտավարությունը:

3.3. Օրինականության և իրավակարգի ապահովումը պահանջում է համակարգված, նպատակաուղղված, իրավիճակին համապատասխանող ներգործություն հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի և գործունեության վրա: Ցանկացած պետություն պետք է ունենա և ստեղծի անհրաժեշտ նյութական, քաղաքական, սոցիալական, իրավաբանական նախադրյալներ և երաշխիքներ ամբողջ պետական կառուցակարգի, այդ թվում նաև դատական համակարգի արդյունավետ գործունեության համար: Միայն դրանց համալիր առկայության, միմյանց միջև փոխգործակցության ու փոխլրացման պայմաններում է հնարավոր օրինականության ապահովում, հաջող պայքար հանցավորության դեմ, արդարադատության խնդիրների կենսագործում, դատական համակարգի արդյունավետ գործունեություն:

3.4. Ոչ բավարար տնտեսական, անկայուն քաղաքական նախադրյալները, բացասական միտում ունեցող բարոյահոգեբանական գործոնները պայմանավորում էին պետական կառուցակարգի անարդյունավետ գործունեությունը: Այդ երաշխիքների բացասական ազդեցության պայմաններում կարևորվում էր հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվային երաշխիքը, որ երկրորդական տեղ չէր զբաղեցնում մնացած երաշխիքների շարքում, այլ ակտիվ գործոն էր: Հատուկ իրավական միջոցառումներն ընդունակ էին ազդելու մյուս երաշխիքների փոփոխման վրա դրական միտումով և շատ կարևոր էին օրինականության ապահովման, արդարադատության ճիշտ, արագ, արդյունավետ իրականացման համար:

3.5. Առաջին հանրապետության դատական քաղաքականության սկիզբը դրվեց 1918 թ.՝ որպես հիմք վերցնելով 19-րդ դ. երկրորդ կեսի ռուսական դատական բարեփոխումների հիմնադրույթները և օրենսդրական աղբյուրները: Ժողովրդավարական դիրքորոշումները պայմանավորեցին հանրապետությունում գործող արտակարգ ռազմահեղափոխական տրիբունալների վերացումը: Արդարադատության նախարարության կազմակերպչական և Հայաստանի խորհրդի օրինաստեղծ ջանքերի շնորհիվ հանրապետու-

յունում հաստատվեց դատական համակարգ, որը և՛ իր կառուցվածքի, և՛ իր գործունեության սկզբունքների առումով ժողովրդավարական ինստիտուտ էր:

**3.6.** Դատական համակարգը, ինչպես և ամբողջ պետական կառուցակարգը սոցիալապես պայմանավորված է, այսինքն՝ այն պետության կամայական հայեցողության արդյունքը չէ, այլ հասարակական հարաբերությունների, իրավիճակին համապատասխան ստեղծվող ու գործող համակարգ: Դատական համակարգը, որը սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր ապահովելու իր առջև դրված խնդիրների նվաճումը: Անիշխանությունը և քառույթը, գորշ իրականությունը ռուսական դատական կանոնադրությունների շատ դրույթներ վերածեցին «հղեալիզմի»: Եթե հնարավոր չէր ապահովել եղած համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ապա համակարգը պետք է վերափոխվեր, հարմարեցվեր իրականության պայմաններին: Գերխնդիրն արդյունքն է, այսինքն՝ իրավակարգի հաստատումը, արդարադատության խնդիրների լիովին կենսագործումը, այլ ոչ թե դատական մարմինների համակարգը, որը միայն միջոց է հասնելու իրավական հիմքերի վրա դրված արդարադատության կենսագործմանը:

**3.7.** Հանրապետության իշխանությունները չկարողացան «ստեղծել պայմաններ, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացմանը»: Անհաջողության գլխավոր պատճառը ռազմավարական խնդրի սխալ ընտրությունն էր, այսինքն՝ ոչ թե իրականությունը պետք է հարմարեցվեր դատական համակարգին, այլ դատական համակարգը պետք է կառուցվեր իրականությանը, հասարակական հարաբերություններին համապատասխան: Իր բացասական ազդեցությունը թողեց նաև նախարարական խառնաշփոթը. արդարադատության նախարարությունը գլխավորել են տաս նախարարներ կամ պաշտոնակատարներ:

**3.8.** Իշխանությունները հասարակական ճնշման տակ փոխանակ միջոցներ ձեռնարկելու արդեն կառուցված համակարգը արդյունավետ դարձնելու, դիմում էին արտակարգ դատարանների և դատավարական ձևերի օգնությանը: Սակայն նույնիսկ արտակարգ միջոցառումներն իրենց օրենսդրական, կազմակերպական-կառուցակարգային առանձնահատկություններով այնքան վատն էին, որ սրանք ևս չէին կարողանում կենսագործել իրենց առջև դրված խնդիրները: Այդպիսի քաղաքանության հետևանքով պետական կառուցակարգում դատական մարմինները վերածվել էին պետական կառավարման սովորական և արտակարգ մարմինների քմահաճույքներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշ եկող կառուցակարգի: Այդ գործընթացների տեսական իմաստավորումը հիմք է տալիս առաջ քաշելու դատական իշխանության կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ գործառույթային ինքնաբավությունը:

**Դոկտորական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

**ա) մենագրություններ.**

1. Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, 18 տպ. մամուլ, 288 էջ,

2. Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., 2012, 20.5 տպ. մամուլ, 328 էջ,

3. Երդվյալ ատենակալների դատարանը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.): ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Եր., 1996, 32 էջ:

4. Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.): Երևան, Եր. համ. հրատ., 2006, 13 տ. մամուլ, 208 էջ:

**բ) գիտական հոդվածներ.**



1. Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենսդրական կենսագործումը, Իրավունք և օրինականություն, թիվ 2(10), Եր., 1996, 26-31 էջերը,
2. «Դատական իշխանությունը» Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.): Հանդես Երևանի Համալսարանի, թիվ 1(84), Եր., 1996, 17-20 էջերը:
3. Չկայացած Սահմանադրություն, Գիտ. Հոդվ. ժողով., Գեղարքունիքի մարզի Գավառի պետական համալսարան, 1996 թ., 75-79 էջերը,
4. Հայաստանի առաջին հանրապետության պետական կառավարման ձևը և օրինաստեղծ գործառնություն ունեցող մարմինները, Գիտ. Հոդվ. ժողով., Գեղարքունիքի մարզի Գավառի պետական համալսարան, 1996 թ., 79-84 էջերը,
5. Օրենսդիր մարմինները Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.): Իրավագիտության հարցեր, թիվ 1, Երևան, 1997, 51-54 էջերը,
6. Մահապատիժը որպես քրեական պատժատեսակ Հայաստանի առաջին հանրապետությունում, Իրավագիտության հարցեր, թիվ 1, Երևան, 1998, 13-19 էջերը,
7. Խորհրդարանական ընտրությունները Հայաստանի առաջին հանրապետությունում, Իրավագիտության հարցեր, թիվ 4, Երևան, 2002, 23-27 էջերը,
8. Ընտրական իրավունքի հիմունքների պատմական զարգացումը Հայաստանում: «Վասն արդարութեան» իրավական գիտամեթոդական հանդես, ապրիլ 4(40), 2003, 10-15 էջերը,
9. Դատական համակարգը Հայաստանի առաջին հանրապետությունում: Օրենք և իրականություն, թիվ 7, Երևան, 2003, էջ 5-9,
10. Սահմանադրական-իրավական կարգավորումը Հայաստանի առաջին հանրապետությունում: Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևանի համալս. հրատարակչություն, Եր., 2003, էջ 18-32,
11. Օբյեկտիվ ընտրական իրավունքը Հայաստանի առաջին հանրապետությունում: Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևանի համալս. հրատարակչություն, Եր., 2003, էջ 94-104,
12. Դատական համակարգը Հայաստանի առաջին հանրապետությունում, Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևանի համալս. հրատարակչություն, Եր., 2003, 120-133,
13. Դատավորների անկախության սկզբունքի երաշխիքների վերացումը Առաջին հանրապետությունում: Իրավագիտության հարցեր, թիվ 3, Երևան, 2005, էջ 6-9,
14. Դատարանների ու դատավարության «ազգայնացումը» և դրա հետևանքները Հայաստանի առաջին հանրապետությունում, Իրավագիտության հարցեր, թիվ 1-2, Եր., 2006, էջ 91-96,
15. Օրենսդիր իշխանության զարգացման փուլերը Առաջին հանրապետությունում և Հայաստանի խորհուրդը, Իրավագիտության հարցեր, թիվ 4, Երևան, 2006, էջ 6-16,
16. Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացի իրավական հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտաժողովի նյութերի ժողովածու: ԵՊՀ հրատ., Երևան, 2007, էջ 25-31,
17. Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում, Հայկական բանակ, Երևան, թիվ 2-3 (56-57), 2008, էջ 118-139,
18. Դատական շինարարությունը Հայաստանի երեք հանրապետություններում և դատական համակարգի վերակառուցման արդի հայեցակարգի մեթոդաբանությունը: Իրավագիտության հարցեր, թիվ 3-4, Եր., 2008, էջ 8-23, համահեղ.՝ Գ. Գևորգյանի,

19. Բուհերի իրավական կարգավիճակի պատմական զարգացումը և արդի հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտաժողովի զեկուցումների ժողովածու: ԵՊՀ հրատ., Եր., 2008, էջ 36-46,

20. Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը ձևավորելու կարգը և պետական կառավարման ձևը, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., թիվ 132.3, 2010, էջ 5-18,

21. Բուհերի իրավական կարգավիճակի զարգացումը Հայաստանի երեք հանրապետություններում, Օրենք և իրականություն, Եր., թիվ 11 (181), 2010, էջ 1-4,

22. Հայաստանի երեք հանապետություններում սահմանադրական կարգավորման տիպերը և զինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների սահմանադրական իրավական ամրագրումը, Հայկական բանակ, Երևան, թիվ 2(64), 2010, էջ 17-28,

23. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների իրավասությունը արդարադատության ոլորտում, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., թիվ 133.3, 2011, էջ 3-15,

24. Խորհրդարանական վերահսկողության ձևերը Հայաստանի առաջին հանրապետությունում, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., թիվ 134.3, 2011, էջ 3-20,

25. Հայաստանի առաջին հանարապետության կառավարության իրավասությունը և գործունեությունը պետական ապարատի գործադիր ենթահամակարգի կազմակերպման և կառավարման ոլորտում: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու /ԵՊՀ հրատ., Եր., 2012, էջ 245-266,

26. Արտակարգ օրենսդրությունը և արտակարգ կառավարման ձևերն Առաջին հանրապետությունում, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., թիվ 137.3, 2012, էջ 3-23,

27. Քաղաքականության իրավաօրինականությունը որպես ազգային պետականության կայացման պայման: Հանրապետական գիտաժողով նվիրված 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի 90 ամյակներին: Հրատարակիչ՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր, 2012, 4-19 էջեր:

28. Рецепция судебных уставов Александра Второго в первой Республике Армения и отмена гарантий принципа независимости судей (1918-1920 гг.)// "Законность и правопорядок в современном обществе", сборник материалов XI Международной научно-практической конференции / Под общ. ред. С.С. Чернова. – Новосибирск: Издательство НГТУ, 2012. – 215 с., ISBN 978-5-7782-2126-0 ст. 142-149.

29. Компетенция парламентов первой Республике Армения в области правосудия (1918-1920 гг.)// Право и экономика, Журнал международного союза юристов, ном. 1(299), М., 2013, ст. 75-80.

30. Обороноспособность как принцип организации и деятельности государственного аппарата// Евразийский юридический журнал, № 12 (55), М., 2012 ст. 147-149.

31. Установление и применение смертной казни в Первой Республике Армения (1918-1920 гг.) //“Новое слово в науке и практике: гипотезы и апробация результатов исследований”: сборник материалов II Международной научно-практической конференции / Под общ. ред. С.С. Чернова. – Новосибирск: Издательство НГТУ, 2012. – 160 с., ISBN 978-5-7782-2134-5 ст. 148-154.

**РЕЗЮМЕ**  
**ВАГАРՇԻԱՆ ԱՐՏՄՐ**  
**СИСТЕМА ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ ПЕРВОЙ**  
**РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1918-1920 гг.)**

В докторской диссертации на основе изучения архивных первоисточников впервые целостному, систематизированному историко-правовому исследованию подверглась законодательная, исполнительная и судебная система государственной власти Первой Республики Армения, проанализирована их организационно-структурные и функциональные особенности, правовая деятельность.

В результате исследования диссертантом разработаны и представлены на защиту положения в двух основных направлениях.

**Первое направление** – это разработка и выдвижение на основе исторического опыта имеющих практическое значение концептуальных и теоретических положений, которые могут быть использованы для совершенствования и реформирования современной государственно-правовой системы:

1. Теоретическое осмысление опыта оборонительной политики Первой Республики Армения, геополитическое положение современных двух армянских государств дают основание выдвигать новый принцип организации и деятельности государственного аппарата – принцип обороноспособности. Обороноспособность должна стать свойством самосохранения, самовоспроизведения и самосовершенствования публичной государственной системы. С применением этого принципа способность действовать в чрезвычайных, кризисных, военных условиях должна внедряться в сущность государственных органов и правовых институтов, созданных для обычных ситуаций.

2. С позиции принципа обороноспособности необходимо проводить мониторинг действующего законодательства, для чего автором предлагаются следующие критерии: а) система государственного и местного управления эффективно и слаженно настолько, что в любых условиях, в том числе и в военных, не порождает организационно-структурный вакуум; б) все структуры публичной власти четко овладевают своей компетенцией и способны реализовать ее в любых чрезвычайных ситуациях, исходя из своего публично-властного назначения; г) система публичной власти вместе со своим служебным персоналом наполнена и воспитана духом патриотизма, в чрезвычайных ситуациях способна к дисциплине и самоорганизации, готова к самопожертвованию.

3. На основе осмысления судебного строительства и деятельности судебной системы Первой Республики Армения разработан новый принцип организации и деятельности судебной власти – функциональная самодостаточность: судебная власть в осуществлении своих внутрисистемных задач, функций и полномочий должна быть самодостаточной, независимой от внесистемных государственных структур. Все внутрисистемные функции и полномочия, включая необходимые для осуществления правосудия организационно-обеспечительные, должны осуществляться через внутрисистемные обеспечивающие и способствующие управленческие структуры судебной власти.

4. Все реформы современности, система общественного воспитания и образования должна иметь целью патриотическое, а также правовое воспитание и обучение. Современная образовательная система с этой точки зрения нуждается в мониторинге, а в дальнейшем подлежит реформированию. В результате в системе образования нравственно-правовое обучение должно стать отдельной сферой обучения, содержательным компонентом образования, внедряться во все государственные образовательные стандарты, базовые учебные планы, предметные программы.

5. Уроки истории позволяют вывести следующую закономерность: конституционность политики, правовая законность и реальное парламентское многообразие и многоголосие являются важной гарантией для правильного стратегического выбора, становления и существования национальной государственности.

6. При негативной тенденции и воздействии общественных условий становится решающим и важным юридико-организационная, нормативно-регулирующая гарантия правозаконности. Последняя среди других факторов и гарантий является не второстепенным, а активным, творчески перестраивающим фактором. Она способна преодолеть негативные тенденции, положительно воздействовать, изменять внеправовые общественные условия. Как в прошлом, так и в настоящее время значительную долю исторической ответственности перед народом несут политические руководители и законодательные органы. Политический заказ должен обусловить стратегию и тактику правотворческой работы, в соответствии с чем должны быть разработаны исходящие из потребностей и нужд общественной жизни законодательные программы. Вследствие этого закономерно в процессе государственного строительства решающим становится реальное участие во всех стадиях правотворческой работы «элегантной юриспруденции», искусства «добра и справедливости».

7. Общественная среда имеет важное значение для «идеальной» государственно-правовой нормативной системы. Рецептированная правовая модель может быть демократической, но не выполнять поставленные перед ней задачи. Причина кроится в коллизии между системой смоделированной для нормальных, устойчивых общественных отношений, и объективно наличных чрезвычайных, негативных общественных условий, которые в конечном счете нейтрализуют функционирование внедренной правовой модели, если она не адаптирована к условиям общественной среды.

**Второе направление** научной новизны докторской диссертации заключается в положениях, которые выявляют и высвечивают исторический процесс и закономерности возникновения и становления государственной и правовой системы Первой Республики Армения. Систематизированная характеристика правовой истории созидания и деятельности государственно-правовой системы Первой Республики Армения является основой для переосмысления многих вопросов общей истории республики, уточнения имеющих место неправильных подходов в историографии и истории государства и права Армении, для преодоления в отношении дискуссионных проблем моральных оценок и отношений и их рассмотрения с государственно-правовой (правовой-законной и неправовой-незаконной) точки зрения.

## RESUME

ARTUR VAGHARSHYAN

### THE SYSTEM OF STATE AUTHORITY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

For the first time in the doctoral dissertation a full, systemized legal-historical research has been made on the legislative, executive and judicial systems of the First Republic, their organizational and functional features, further changes, legal activities in these systems. The research has been made from non-systemized, scattered sources in various archive funds.

As a result of the research, there have been developed and presented provisions with two dimensions that have scientific innovation within them.

**The First:** *theoretical postulates having conceptual and practical significance derived from the history, which can be used for the development and improvement of the contemporary state-legal system:*

1. The defense policy of the First Republic, the geopolitical situation of the two Armenian states give a basis to bring to the light a new principle for the organization and function of the state mechanism through the theoretical reasoning of the lessons from the history – **defensibility**. The defensibility is an attribute to the self-defense, self-producing, self-improvement of the state system. By the realization of that principle the ability for acting in emergency, war situations will be installed in the essence of the state bodies and legal institutes established for the common situations.
2. There must be done a legal monitoring of the whole current legislation from the point of the principle of defensibility, and for the realization of which the following criteria are suggested: **a)** the system of state authority and local governance is so efficient and precise that any organizational-structural vacuum does not emerge in any situation, including war; **b)** all bodies of public authority possess their capacity precisely and are able to realize them in any emergency situation having in mind their public-authority mission; **c)** the system of public authority with its all staff is fraught by the spirit of the fatherland's protection, is capable for order and self-organization in emergency situations, is ready to self-sacrifice.
3. A new principle for the organization and functioning of the judicial power has been developed on the basis of the judicial development and the theoretical reasoning of the judicial system's activity – self-sufficiency: the judicial power must be self-sufficient, independent from the external state bodies in the realization of its all internal problems, functions, capacities. All the internal functions and authorization, as well as the ones ensuring the organization of the realization of the justice, must be

executed through the internal conducive administrative bodies and resources.

4. All kinds of current developments, the system of social education and education must make national based patriotic, moral, legal education and education as one of their objectives. From this point of view the current educational system needs a monitoring, and then – improvement. As a result, the patriotic, legal and moral education must be made as a separate field of studying, a contextual component of the education, a separate common requirement for the readiness of students, taking it within all kind of educational state criteria, in basic educational plans, in subject-programs.
5. The lesson derived from the history gives an opportunity to bring to the light and formalize the following pattern – the constitutionality of politics, jus legality and parliamentary-legal pluralism are the most important warranties for making strategically correct choices, making national statehood.
6. One of the patterns of the statehood is that the special legal-organizational, normative warranty is emphasized in the negative influence of the social factors, which is not a secondary, but an active, creatively changing factor in the range of the other factors. It is able to make an influence upon positive changes of the external-legal social conditions. As it was previously, today also the big part of the historical responsibility is on the political leadership, legislative bodies. The political request must suppose the strategy and tactics of the legislative work, in accordance of which the legislative plans must be developed and implemented, deriving from the requirements and needs of social life. Thus, according to the pattern, during the state-legal development the real participation of the art of «elegant law science», «kind and justice» is emphasized in the legislative work in its all stages.
7. The social environment has an important significance for the «ideal» state-legal normative system. A taken legal model may be democratic, but does not fulfill the tasks before him. The cause is the collision between the modeled system for common, stable social conditions and objectively existing emergent, negative social conditions, which are neutralizing the functions of the installed legal model in the end, if it is not localized and adjusted with the conditions of the social environment.

**The Second:** *issues bringing to the light and revealing the patterns and historical processes of the creation and formation of the state and legal system of the First Republic of Armenia.* The systemized description of the legal history of the creation and activity of the state system of the First Republic is a basis for re-reasoning of many issues of the general history of that Republic, for making precise the approaches in the historical science, for breaking away from moral appraisals and attitudes to the disputed issues and for observing them from the state-legal paradigm (legal and not legal).